ԱՌԱՋՆՈՐԴ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԷՆ

ԴԷՊ ԵՒՐՈՊԱ

ԴԱՆՈՒԲԻ ՎՐԱՅԷՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱԽՏԱԿՈՎ ՈՒ ՉՈՐՍԼԵԶՈՒԵԱՆ
ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԳՐԵՑ

· ՓԻԼԻՊՊՈՍ Վ· ՎԱՄԱԼԵԱՆ

Ի ՄԽԻԹ· ՈՒԽՏԷՆ

Ի ՎԻԷՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԸ
1869

890

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՆԱՒԵՐՆ ու կառքերը շարժելու համար՝ հովի ու ձիու տեղ շոգւոյ զօրութիւնն անցնելէն ետքը՝ աշխարհքիս վրայ ճամբորդութիւնը դիւրինցաւ ու մարդիկ նոր տեղ տեսնելու եւ մէկը մէկալին այցելութիւն ընելու բաղձանքով ծովու եւ ցամաքի վրայ ցրուեցան։ Այս տեսակ ճամբորդութիւնը՝ գործքերը շուտով լմնցընելէն զատ, գէթ Եւրոպայի համար զբօսանք մ'եղած է, եւ ամէն հասակ ու սեռ ճամբորդութենէ վախնալ ինչ է, ալ չիգիտեր։ Մինչեւ հիմայ ուրիշ մտքով փնտռուած ու չգտնուած հաւասարութիւնը՝ միայն շոգենաւուց ու շոգեկառաց մէջ կը գտնուի. ալ աղքատը չիկրնար տրտնջել որ հարուստն իր կառքը դժուարին լեռներէն կ'անցընէ, ու ինք հարթ դաշտին մէջ մոլորեալ կը շրջի. գէթ ասոնց մէջ հարուստ ու աղքատ մէկտեղ կը քալեն ու մէկտեղ կը կենան, թէպէտեւ մէկտեղ չնստին։

Մեր ազգն ալ աս գիւտերուն միջոցաւ Եւրոպայի մօտիկցաւ, եւ տարիէ տարի իր այցելուներուն թիւը կը շատցընէ, ու համեմատաբար աս մասին մէջն ալ ուրիշ ազգերէն վար չիմնար։ Այս տեսնելով, ուզեցինք իրեն՝ Ճամբորդութեան առաջնորդ մը տալ, որն որ մինչեւ հիմայ կը պակսէր, որպէս զի դեռ տեղէն ու տնէն չելած, երթալու տեղերուն ու ճամբանե-

րուն վրայ ճիշդ տեղեկութիւն ունենայ, հաշիւն ընէ ու ճամբան ընտրէ:

Կարելի է որ ոմանց աւելի օգտակար ու հաճոյական երեւայ բոլոր Եւրոպայի ճամբորդութեան վրայ խօսող գիրքը. բայց մենք տեսնելով որ հիմակու հիմայ մեր ազգային ճամբորդներուն մեծ մասին յօժարութիւնն ու միտումը Գաղղիա ու առանձինն Փարիզ երթալն է, ուզեցինք նոյն յօժարութեան հետեւիլ ու միայն անոր ու հոն տանող ճամբաներուն ու քաղաքներուն վրայ խօսիլ: Ասիկայ փորձ մըն է. եթէ կը տեսնենք որ աշխատութիւննիս ազգերնուս հաճոյ կ՚ըլլայ, կրնանք ետքը նորէն ընդարձակին վրայ աշխատիլ՝ զինքը գոհ ընելու համար, որն որ մեր մէկիկ ու մեծ վարձքն է:

Գրքուկիս մէջ բռնած կարգերնուս վրայ հոս ալ խօսիլ աւելորդ է. արդէն ըստ բաւականին գրքիս սկիզբը [illegible] մէջ խօսած ենք, զորն որ կը յանձնենք ամէն ճամբորդներուն մէկիկ մէկիկ աչքէ անցընելու:

Ի վախճանի, բարեբախտ ճամբորդ, թէ որ կարճ ճամբուդ մէջ համառօտ գրուածքէս օգուտ մը կը գտնես, յիշէ որ անիկայ գրողը՝ կարճին պէս երկայն ճամբուդ համար ալ Աստուծմէ առատ օրհնութիւն ու մշտատեւ առաջնորդութիւն կը խնդրէ:

ՏԱԽՏԱԿ

ՇՈԳԵՆԱՒԵՐՈՒ ՈՒ ՇՈԳԵԿԱՌՔԵՐՈՒ

ԸՆԹԱՑՔԻՆ

ԵՒ

ԳԻՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

ՊԱՏԿԵՐ

Երես	ՊՈԼՍԷՆ	Կ'ելլէ		Տեւէ		ՊՈԼԻՍ	Կ'ելլէ	
		օր.	ժամ	ժ.	վ.		օր.	ժամ.
4	Աղեքսանդրիա Զմիւռնիայի վրայէն Լոյտի շոգեն.	Դշ.	4 իր	240	—	Աղեքսանդրիայէն Զմիւռն. վրայէն	Եշ.	առտ.
5	Զմիւռնիա Լոյտի շոգեն.	Դշ.	4 »	32	–	Զմիւռնիայէն . .	Շբ.	4 իրիկ.
3	» Մեսաժ. »	Ուր.	4 »	36	—	» . .	Գշ.	8 »
4	Թրիեստ Լոյտ . . .	Շբ.	10 առ.	123	—	Թրիեստէն . . .	Շբ.	2 »
4	Կալաց Լոյտ Քիւսթենճէի վրայէն	Եշ.	3 իր.	54	30	Կալացէն Քիւ. վրայէն	Կիր.	5 առտ.
4	» » Վառնայի »	Շբ.	1 »	57	—	» Վառն. »	Դշ.	5 »
3	» Մեսաժ. . . .	Բշ.	կէսօր.	73	—	»	Կիր.	կէսօր.
2	Մարսիլիա »	Եշ.	4 իր.	157	—	Մարսիլիայէն . .	Շբ.	5 իրիկ.
3	Սէլանիկ »	Ուր.	4 »	43	—	Սէլանիկէն . . .	Գշ.	4 »
5	» Լոյտ	Շբ.	4 »	—	—	»	Եշ.	իրիկ.
9	Վիէննա Վառն. վրայէն	գշ-ուր	4 »	93	50	Վիեննայէն 69.30 ժ.	Բշ.Ուր.	2.30 իր.
8	» Կալացի »	Եշ.	3 »	263	–	» Կլ վր. 172 ժ.	Գշ.	6.30 առ.
4	Տրապիզոն	Եշ.	2 »	62	30	Տրապիզոնէն . .	Գշ.	8 առտ.
3	» Մեսաժ. . . .	Բշ.	2 »	72	—	» . .	Կիր.	8 »
10	Վիեննայէն շոգեկառքով հաղորդակցութիւնն Եւրոպայի ուրիշ կողմերուն հետ							
18	Պոլսոյ Ամերիկայի հետ հաղորդակցութիւնը եւայլն							



ՊՈԼԻՍ ՈՒ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ուրիշ նաւահանգիստները քալող Գաղղիական Մէսաժըրի (Messageries)
ընկերութեան շոգենաւներուն երթևեկութիւնը :

Ա. ՄԱՐՍԻԼԻԱՅԷՆ ՊՈԼԻՍ — ամէն շաբաթ:

	Կը հասնի		Կ'ելլէ		Աստիճան					
	օր.	ժ.	օր.	ժ.	Ա.		Բ.		Գ.	
Մարսիլիա . . .	—	—	Շբ.	5 իրիկ.	Ֆ.*	ս.	Ֆ.	ս.	Ֆ.	ս.
Մէսսինա . . .	Գշ.	2 առտ.	Գշ.	9 առտ.	220	—	154	—	101	—
Բիրէոյ . . .	Եշ.	կէսօր.	Եշ.	5 իրիկ.	308	—	218	—	142	—
Չանաք գալէսի .	Ուր.	2 իրիկ.	Ուր.	3 „	384	—	271	—	177	—
Պոլիս	Շբ.	6 առտ.	—	—	393	—	283	—	184	—

* Կերակրոյ ու անկողնոյ սակն ալ ճամբու գնոյն մէջն է:

ՊՈԼԻՍԷՆ ՄԱՐՍԻԼԻԱ

	Կը հասնի		Կ'ելլէ	
	օր.	ժ.	օր.	ժ.
Պոլիս *	—	—	Եշ.	4 իր.
Չանաք գալէսի .	Ուր.	7 առտ.	Ուր.	8 առ.
Բիրէոյ	Շբ.	5 „	Շբ.	10 „
Մէսսինա . . .	Բշ.	1 իրիկ.	Բշ.	8 իր.
Մարսիլիա . . .	Եշ.	5 առտ.	—	—

* Պոլսէն Մարսիլիա երթալու վճարմունքը նոյն է:

Բ. ՄԱՐՍԻԼԻԱՅԷՆ ՄԱԼԹԱ — ամէն շաբաթ:

	Կը հասնի		Կ'ելլէ		Ա.		Բ.		Գ.	
Մարսիլիա . . .	—	—	Եշ.	2 իրիկ.	...	..	...	..	...	..
Ճէնովա . . .	Ուր.	11 առ.	Ուր.	8 „	76	—	58	—	37	—
Լիվոռնոյ . . .	Շբ.	5 „	Շբ.	5 „	98	—	71	—	41	—
Չիվիթա վէքքիա	Կիր.	5 „	Կիր.	4 „	133	—	95	—	57	—
Նապոլի . . .	Բշ.	6 „	Բշ.	կէսօր.	181	—	128	—	77	—
Մէսսինա . . .	Գշ.	7 „	Գշ.	6 իրիկ.	220	—	154	—	101	—
Մալթա	Դշ.	10 „	—	—	253	—	183	—	110	—

ՄԱԼԹԱՅԷՆ ՄԱՐՍԻԼԻԱ

	Կը հասնի		Կ'ելլէ	
Մալթա	—	—	Կիր.	3 իրիկ.
Մէսսինա . . .	Բշ.	7 առտ.	Բշ.	5 „
Նապոլի	Գշ.	կէսօր.	Գշ.	7 „
Չիվիթա վէքքիա	Դշ.	9 առտ.	Դշ.	6 „
Լիվոռնոյ . . .	Եշ.	6 „	Եշ.	6 „
Ճէնովա . . .	Ուր.	3 „	Ուր.	3 „
Մարսիլիա . . .	Շբ.	կէսօր.	—	—

Գ. ՄԱՐՍԻԼԻԱՅԷՆ ՆԷԱՊՈԼԻՍ — շաբաթը մէյ:

	Կը հասնի		Կ'ելլէ		Ա.		Բ.		Գ.	
Մարսիլիա . . .	—	—	Բշ.	8 իրիկ.	...	..	...	..	...	..
Չիվիթա վէքքիա	Դշ.	5 առտ.	Դշ.	3 „	133	—	95	—	57	—
Նապոլի	Եշ.	6 „	—	—	181	—	128	—	77	—

ՆԷԱՊՈԼԻՍԷՆ ՄԱՐՍԻԼԻԱ

	Կը հասնի		Կ'ելլէ	
Նապոլի	—	—	Շբ.	4 իրիկ.
Չիվիթա վէքքիա	Կիր.	7 առտ.	Կիր.	1 „
Մարսիլիա . . .	Բշ.	8 իրիկ.	—	—

Դ.

Նիցցայէն Ճէնովա	ամէն օր. 10 իրիկ.	9 ժամու մէջ	...	...	...
Ճէնովայէն Նիցցա	ամէն օր. 10 իրիկ.	9 ժամու մէջ			

Ե· ՊՈԼԻՍԷՆ ԲԻՐԷՈՍ՝ Երկու շաբաթը մէյ մը, Հոկտ· 12 սկսեալ: ԲԻՐԷՈՍԷՆ ՊՈԼԻՍ

	Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·		Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·
Պոլիս	—	—	Ուր·	4 եր·	Բիրէյ	—	—	Ուր·	6 եր·
Կէլիպոլու	Շբ·	5 առ·	Շբ·	6 առ·	Սիրա	Շբ·	2 առ·	Շբ·	կ· օր·
Ջանագ գալէսի	,,	9 ,,	,,	10 ,,	Զմիւռնիա	Կիր·	4 ,,	Գշ·	8 եր·
Միտիլլի	,,	8 եր·	,,	9 եր·	Միտիլլի	Գշ·	3 ,,	Գշ·	4 առ·
Զմիւռնիա	Կիր·	4 առ·	Գշ·	4 ,,	Ջանագ գալէսի	,,	2 եր·	,,	3 եր·
Սիրա	Գշ·	8 ,,	Գշ·	6 ,,	Կէլիպոլու	,,	6 ,,	,,	7 ,,
Բիրէյ	Եշ·	2 ,,	—	—	Պոլիս	Եշ·	8 առ·	—	—

Զ· ՊՈԼԻՍԷՆ ՍԷԼԱՆԻԿ Երկու շաբաթը մէյ մը, Հոկտ· 17էն: ՍԷԼԱՆԻԿԷՆ ՊՈԼԻՍ

	Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·		Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·
Պոլիս	—	—	Ուր·	4 եր·	Սէլանիք	—	—	Գշ·	4 եր·
Կէլիպոլու	Շբ·	5 առ·	Շբ·	7 առ·	Ջանագ գալէսի	Գշ·	3 եր·	Գշ·	5 ,,
Ջանագ գալէսի	,,	10 ,,	,,	կ· օր·	Կէլիպոլու	,,	8 ,,	,,	10 ,,
Սէլանիք	Կիր·	11 ,,	,,	—	Պոլիս	Եշ·	11 առ·	—	—

Է· ՊՈԼԻՍԷՆ ՏՐԱՊԻԶՈՆ շաբաթը մէյ մը: ՏՐԱՊԻԶՈՆԷՆ ՊՈԼԻՍ

	Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·		Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·
Պոլիս	—	—	Բշ·	2 եր·	Տրապիզոն	—	—	Կիր·	8 առ·
Ինէպոլու	Գշ·	5 եր·	Գշ·	6 ,,	Քէրասունտ	Կիր·	4 եր·	,,	7 եր·
Սինոպ	Գշ·	2 առ·	Գշ·	3 առ·	Սամսոն	Բշ·	5 առ·	Բշ·	9 առ·
Սամսոն	,,	11 ,,	,,	6 եր·	Սինոպ	,,	5 եր·	,,	6 եր·
Քէրասունտ	Եշ·	4 ,,	Եշ·	6 առ·	Ինէպոլու	Գշ·	2 առ·	Գշ·	6 առ·
Տրապիզոն	,,	2 եր·	—	—	Պոլիս	Գշ·	9 ,,	—	—

Ը· ՊՈԼԻՍԷՆ ԻՊՐԱՅԻԼ շաբաթը մէյ անգամ: ԻՊՐԱՅԻԼԷՆ ՊՈԼԻՍ

	Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·		Կը հասնի օր·	Կը հասնի ժ·	Կ'ելլէ օր·	Կ'ելլէ ժ·
Պոլիս	—	—	Բշ·	կ· օր·	Իպրայիլ	—	—	Շբ·	10 առ·
Վառնա	Գշ·	6 առ·	Գշ·	,,	Կալաց	Շբ·	կ· օր·	Կիր·	կ· օր·
Սուլինա	Գշ·	7 ,,	Գշ·	8 առ·	Թուլչա	Կիր·	5 եր·	Բշ·	5 առ·
Թուլչա	,,	5 եր·	Եշ·	5 ,,	Սուլինա	Բշ·	10 առ·	,,	11 ,,
Կալաց	Եշ·	1 ,,	Ուր·	10 ,,	Վառնա	Գշ·	6 ,,	Գշ·	2 եր·
Իպրայիլ	Ուր·	կ· օր·	—	—	Պոլիս	Գշ·	8 ,,		—

ԳԻՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

Կերակրով մէկտեղ:

Մարսիլիայէն Արեւելք·	Աստիճան Ա·	Բ·	Գ·	Դ·
	Ֆր	Ֆր	Ֆր	Ֆր
Սիրա	308	218	142	87
,, Փիրէյի վրայէն	320	226	148	91
Փիրէյ	308	218	142	87
Զմիւռնիա	348	246	159	97
,, Իտալիայի վրայէն	378	266	169	103
Միտիլլի	375	265	152	93
Ջանագ գալ·	384	271	177	108
Կէլիպոլու	389	275	181	111
Պոլիս	393	283	184	112
,, Իտալիայի վրայէն	423	303	194	118
Սէլանիք	403	301	191	117
Վառնա	446	325	...	123
Սուլինա	481	347	...	130
Թուլչա	500	365	...	138
Կալաց	510	372	...	139
Իպրայիլ	520	380	...	139
Ինէպոլու	469	335	...	127
Սինոպ	474	338	...	127
Սամսոն	487	351	...	131
Քէրասունտ	512	365	...	136
Տրապիզոն	522	375	...	139

ԼՈՅՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Ա. Թրիեստ — Վենետիկ:

Թրիեստէն գշ. եշ. շբ. 12 գիշ.	Վենետիկէն գշ. եշ. շբ. 12 գշ. } 7 Ժւ
Վենետիկ, գշ. ուր. կիր. 6 առ.	Թրիեստ, գշ. ուր. կիր. 6 առ. } 5 „

Բ. Ճեպընթաց դէպ ի Պոլիս:

Թրիեստէն ամէն շբ. օրը 2 կ. ե.	Պոլիսէն շբ. 10 առտ.
Գորֆուի ու Սիրայի վրայէն.	(Զմիւռնիայէն շբ. 4 կ. ե.)
(Զմիւռնիա եշ. առտ.)	Սիրայէն կիր. կ. ե.
Պոլիս կը հասնի եշ. 5 կ. ե.	Թրիեստ կը հասնի եշ. առտ.

Կապակցութեան գիծերը:

Ա. ԴԱՆՈՒԲԻ նաւահանգիստներու հետ:

Պոլիսէն բշ. 3 կ. ե.	Քիւսթենճէէն եշ. 10 առտ.
Քիւսթենճէ գշ. 2 կ. ե.	Պոլիս ուր. 9 առտ.

Պոլիսէն բշ. 3 կ. ե.	Կալացէն կիր. 5 առտ.
Քիւսթենճէ ուր. 8 կ. ե.	Սուլինա կիր. 5½ կ. ե.
Սուլինա շբ. 7 առտ.	Քիւսթենճէ բշ. 10 առտ.
Կալաց շբ. 9½ կ. ե.	Պոլիս գշ. 9 առտ.

Պոլիսէն շբ. 1 կ. ե.	Կալացէն գշ. 5 առտ.
Վառնա կիր. 2 կ. ե.	Սուլինա գշ. 2½ կ. ե.
Սուլինա բշ. 7½ առտ.	Վառնա եշ. 10½ առտ.
Կալաց բշ. 10 իրիկ.	Պոլիս ուր. 8½ առտ.

Կալացէն բշ. գշ. 6 առտ.	Իպրայիլէն գշ. ուր. 6 առտ.
Իպրայիլ բշ. գշ. 8 առտ.	Կալաց գշ. ուր. 7½ առտ.

Բ. Պոլիսէն ՏՐԱՊԻԶՈՆ երկու շաբաթը մէյմը Ինէպոլու, Սինոպ, Սամսոն ու Օրտու հանդիպելով: Պոլիսէն երկու եշ մէյմը 2 կ. ե. Տրապիզոն կիր. 4½ առտ: Տրապիզոնէն երկու գշ. մէյմը 8 առ. Պոլիս ուր. 8 առտ:

Գ. ԱՍՈՐԻՔ ու ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ երկու շաբաթը մէյմը (Թրիեստէն ուղղակի Զմիւռնիայի վրայէն), Պոլիսէն Զմիւռնիայի վրայէն Գ. Բ.ին մէջ եղած նաւահանգիստները հանդիպելով: Պոլիսէն երկու գշ. մէյմը 4 կ. ե. Զմիւռնիայէն շբ. առտ. Պէյրութ կը հասնի գշ. առտ. Եաֆֆա ուրբ. առտ. Աղեքսանդրիա շբ. իր. Աղեքսանդրիայէն կ'ելլէ երկու եշ. մէյմը առտ. Եաֆֆայէն ուր. իրիկ. Պոլիս կը հասնի բշ. առտ. 12 օր ետքը:

Դ. Երկու շաբաթը մէյմը ԵԳԻՊՏՈՍ (Թրիեստէն ուղղակի Զմիւռնիայի վրայէն), Պոլիսէն ուղղակի Աղեքսանդրիա՝ Զմիւռնիայի վրայէն երկու գշ. մէյմը կ. ե. Աղեքսանդրիա կը հասնի գշ. 2 առտ: Աղեքսանդրիայէն կ'ելլէ երկու գշ. մէյմը 4 կ. ե. Պոլիս կը հասնի բշ. 5 առտ:

Ե. ՅՈՒՆԱՍՏԱՆ շաբաթական, Սիրայէն Բիրէյ: Սիրայէն գշ. առտ. կիր. իրիկ: Բիրէյ կը հասնի գշ. իրիկ. բշ. առտ: Բիրէյէն՝ գշ. շբ. 8 կ. ե. Սիրա կը հասնի գշ. կիր. 6 առտ:

Զ. Գորֆուէն ՅՈՆԻԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ շաբաթը մէյմը։ Գ. դ. նաւահանգիստները հանդիպելով։

Է. ՍԵԼԱՆԻՔ ու ՎՈԼՈՅ երկու շաբաթը մէյմը. (Թրիեստէն շբ. 2 կ. ե.) Պոլիսէն Կելիպոլուի, Չանագ գալէսիի, Լակոսի եւ Գավալլայի վրայէն շբ. 4 կ. ե. Սելանիք դշ. առտ։ Սելանիքէն կ'ելլէ եշ. իրիկ. Պոլիս բշ. առտու։

Ը. ԳԱՆՏԻԱ (Կիրիտ) ԿՂԶԻՆ շաբաթը մէյմը։ Սիրայէն երկու կիր. մէյմը 8 կ. ե. Գանտիա կը հասնի դշ. 12½. Գանէայի եւ Ռէթիմոյի վրայէն երկու կիր. մէյմը 8 կ. ե. Գանտիա կը հասնի բշ. 11½ առտ. Գանտիայէն կ'ելլէ երկու բշ. մէյմը 2 կ. ե. Սիրա կը հասնի դշ. 8½ առտ. Ռէթիմոյի եւ Գանէայի վրայէն երկու դշ. մէյմը 5 կ. ե. Սիրա կը հասնի դշ. առ. 8½։

Գ. Յունական-Արեւելեան գիծ մինչեւ Զմիւռնիա։

Թրիեստէն ամէն շաբաթ՝ դշ. 4 կ. ե. Անքոնա, Գորֆու, Արկոսթոլի, Զանթա, Չէրիկօ, Սիրա ու Շիօ հանդիպելով. Զմիւռնիա կը հասնի եշ. 9 առտ։ Զմիւռնիայէն կ'ելլէ շբ. 4 կ. ե. Թրիէստ կը հասնի շբ. 6½ առտ։

Կապակցութեան գիծ։

Ա. ՊՈԼԻՍ շաբաթական։ Զմիւռնիայէն ամէն շբ. օրը կ. ե. Միտիլլի, Թենէտոս, Չանագ գալէսի ու Կելիպոլու հանդիպելով, Պոլիս կը հասնի բշ. առտ։ Պոլիսէն ամէն դշ. 4 կ. ե. Զմիւռնիա կը հասնի ուր. առտ։

Բ. ԱՍՈՐԻՔ ու ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ երկու շաբաթը մէյմը. Թրիեստէն դշ. շբ. Պոլիսէն դշ. 4 իր. Զմիւռնիայէն շբ. առ. Ռոտոս, Կիպրոս, Պէյրութ ու Եաֆֆա հանդիպելով. Եաֆֆա կը հասնի ուր. առտ. Աղեքսանդրիա կը հասնի Շբ. կ. ե։ Աղեքսանդրիայէն կ'ելլէ երկու եշ. մէյմը առտ. Եաֆֆայէն ուր. կ. ե. Զմիւռնիա կը հասնի ուր. կ. ե։

Գ. ԵԳԻՊՏՈՍ երկու շաբաթը մէյմը։ Թրիեստէն դշ. շբ. մինչեւ Սիրա. Զմիւռնիայէն կ'ելլէ երկու շբ. օրը մէյմը կ. ե. Աղեքսանդրիա կը հասնի դշ. առտ։ Աղեքսանդրիայէն կ'ելլէ երկու դշ. մէյմը կ. ե. Զմիւռնիա կը հասնի ուր. առտ։

Դ. ՅՈՆԻԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ ամէն շաբաթ. Գորֆուէն բշ. 10 իրիկ. Բաքսոյ, Ս. Մավրա եւ Բրեվիզա դշ. 4 առտ։ Բրեվիզայէն եշ. 8 առտ. Գորֆու կը հասնի եշ. 6½ իրիկ։

Դ. Ուղղակի Աղեքսանդրիա։

Թրիեստէն ամէն ամսոյն 5, 12, 20, 28, ժամը 10 առտ. Գորֆուի վրայէն 5 օրուան մէջ։ Աղեքսանդրիայէն կ'ելլէ ամէն ամսոյն 5, 12, 19, 28 կէսօր։

Ե. Ադրիական ծովուն մէջ։

Դալմատիա, Թրիեստէն կ'ելլէ ամէն դշ. դշ. Լուսինփիքքօլօ, Զարա, Սեպենիքօ, Սբալաթօ եշ. առտ. Ռակուզա ուր. առտ. Գաթթարօ կը հասնի ուր. կ. ե. Գաթթարօյէն կ'ելլէ կիր. առ. Ռակուզայէն կիր. իրիկ. Թրիեստ կը հասնի եշ. առտ։

ՊՈԼԻՍԷՆ	գիներու ցուցակ					
	Ա.		Բ.		Գ.	
	փ.	գ.	փ.	գ.	փ.	գ.
Աղեքսանդրիա	105	50	67	75	23	—
Անգոնա	130	—	96	75	45	—
Ատալիա	83	75	57	50	16	—
Բէրէյթ	48	25	33	50	10	—
Գաիֆա	126	50	84	25	21	50
Գանէա	49	50	35	25	11	—
Գանտիա	49	50	35	25	11	—
Գավալլա	34	50	24	25	7	50
Գորֆու	85	50	59	—	26	—
Եաֆա Պէյրութի վրայէն	132	50	89	—	23	—
„ Աղեքս. „	129	50	87	—	23	—
Զանթա	77	50	53	75	21	50
Զմիւռնիա	34	25	23	50	8	—
Թէնէտոս	21	—	15	—	5	—
Թուլչա	48	50	36	25	13	50
Թրիեստ	134	75	98	25	48	—
Թրիփոլի	117	50	79	25	21	—
Ինէպօլու	32	—	21	—	8	50
Իպրայիլ	54	25	40	50	15	50
Լաթաքիա	113	—	76	—	20	—
Լակոս	30	25	21	50	6	75
Կալաց	53	25	39	50	15	—

ՊՈԼԻՍԷՆ	գիներու ցուցակ					
	Ա.		Բ.		Գ.	
	փ.	գ.	փ.	գ.	փ.	գ.
Կէլիպօլու	15	25	10	50	3	50
Կիպրոս	104	—	69	—	20	—
Միտիլլի	28	25	19	50	7	—
Չանագ գալէսի	17	25	12	50	4	—
Պէյրութ	115	—	77	—	21	—
Պուրկաս	23	25	17	50	6	—
Ռոտոս	65	75	45	75	14	—
Սագըզ (Շիօ)	45	50	32	75	8	—
Սամսոն	42	25	29	50	10	—
Սէլանիք	44	50	30	25	8	50
Սինոպ	36	25	23	50	8	50
Սիրա (ճէպընթաց)	44	—	30	—	10	—
„ Զմիւռնիայի վրայ	53	75	36	50	10	—
Սուլինա	40	25	28	50	12	50
Վառնա	25	—	19	—	7	—
Վօլօ	50	50	36	25	12	—
Տուբաջըգ	95	50	71	—	31	—
Տրապիզոն	60	50	41	25	12	50
Քերասոնտա	55	25	36	50	12	50
Քիւսթէնճէ	..	..	..	..	..	..
Օրտու	55	25	35	50	12	—

* Ա. Բ. աստիճանի գիներուն մէջն է նաեւ կերակուրի առակը: Երթալու գալու համար մէկտեղ տոմսակ առնողը՝ ամբողջ գինէն °/o 20 նուազ կը վճարէ: Նոյնպէս մէկ ընտանեաց վերաբերող երեք հոգի °/o 20 նուազ կը վճարէ: — Տասը տարուընէ վար ըլլող տղաք՝ թէ որ զատ անկողին չեն ուզեր, ճամբու եւ կերակրոյ գնոյն կէսը կը վճարեն. երկու տարուընէ վար ըլլողները ճամբու համար բան մը չեն վճարեր: — Ա. աստիճանի մէջ ամէն ճամբորդ հետը 150 փունտ ծանրութիւն կրնայ առնուլ. Բ.ին մէջ 80, ու Գ.ին մէջ 30 փունտ միայն. աւելին վաճառքի գնով կը վճարուի: Գրեթէ մի եւ նոյն կարգերը կը պահուին նաեւ ուրիշ ընկերութեանց շոգենաւներուն մէջ:

Դանուբի ընկերութեան շոգենաւներուն Պոլսոյ հետ կապակցութիւնը։

		ֆ. կ.	ֆ. կ.
Փասավէն Լինց	ամ. օր. 2 կէս. ետքը . . .	3 20	2 15
Լինցէն Վիէննա	„ 8 առաւօտ	6 —	4 —
Վիէննայէն Փրէսպուրկ	„ 3½ կ. ե.	2 50	1 65
„ Փեշթ	„ 6½ առա.	8 —	5 55
Փեշթէն Պայա, Մոհաչ ամ. օր. 6 առ.	մինչեւ Մոհաչ	5 80	3 83
„ Էսեկ, Զեմլին բշ. դշ. շբ. 6 առ.	„ Էսեկ .	9 30	6 20
	„ Զեմլին	15 —	10 —
„ Օրշով, Եէրկէօյ, Կալաց, Պոլիս դշ. 6 առ.			
Կը հա. Օրշ. եշ. իր. Եէրկ. շբ. կ. ե. Կալ. կր. կ. ե. Պոլ. դշ. կ. յ.	մինչեւ Օրշովա .	26 10	17 45
	„ Կալաց .	52 40	35 85
	„ Պոլիս .	103 90	74 10

		ֆ. կ.	ֆ. կ.
Վիէննայէն Լինց	ամ. օր. 6 առա. . . .	4 50	3 —
Լինցէն Փասավ	„ 7 „	2 80	1 90
Փրէսպուրկէն Վիէննա	„ 6 „	1 95	1 35
Փեշթէն „	„ 6 իրիկուն . . .	5 80	4 20
Մոհաչէն Փեշթ	„ 5 „ . . .	5 10	3 50
Զեմլինէն Էսեկ, Փեշթ կիր. դշ. 4 կ. ե. ուր. 10 կ. ե. մինչեւ Փեշթ		12 80	8 50
Օրշովէն Զեմլին, Փեշթ ուր. առ. մինչեւ Փեշթ .		21 90	14 40
Կալացէն Օրշովա, Զեմլին եւ Փեշթ բշ. կէս օր. .		.. ..	.. ..
Պոլիսէն Կալաց, Օրշովա, Զեմլին, Փեշթ եշ. 3 կ. ե.		.. ..	.. ..
Կը հասնի Կալաց շբ. իր. Օրշ. դշ. կ. օր. Զեմլ. դշ. իր. Փեշթ կիր. 7 առ. Վիէնն. բշ. 4 իր.			

Տրաւա գետին վրայ։	Լէկրատէն Էսեկ շբ. կ. ե. (դարձք դշ. 6 առաւօտ) . . .	.. ..	.. ..
Թայս գետին վրայ։	Սէկէտինէն Զեմլին շբ. առաւօտ (դարձք եշ. կէսօր.)	.. ..	.. ..
Սավա գետին վրայ։	Սիսաքէն Զեմլին բշ. առա. (դարձք եշ. կէսօր.)	.. ..	.. ..
Սերպի գետեզերքը։	Պըրչգայէն Պելկրատ բշ. առ. (դարձք շբ. կէսօր.)	.. ..	.. ..
	Շապացէն Պելկրատ դշ. առ. բշ. կ. օր. (դարձք շբ. կէսօր. դշ. առ.) .	.. ..	.. ..
	Պելկրատէն Օրշովա եշ. առ. (դարձք ուր. առա.)	.. ..	.. ..
	Պելկրատէն Կրաուիշթէ եշ. կիր. առ. (դարձք բշ. առ. ուր. կ. ե.) .	.. ..	.. ..

Ճեպընթաց Վիէննայի ու Պոլսոյ մէջ:

		Շոգենաւով		Շոգեկառքով	
ՎԻԷՆՆԱՅԷՆ .	կ'ել.	կիր. 6.30 առ.	բշ.	ուր.	2.30 կ. ե.
Փեշթ . . .	կը հա.	" 6.30 իր.	"	"	9.10 իրիկ.
Փեշթէն . . .	կ'ել.	բշ. 7.— առ.	"	"	9.45 "
Պազիաշ . . .	կը հա.	գշ. 8.— "	գշ.	շբ.	8.38 առտ.
Պազիաշէն . . .	կ'ել.	շոգենաւով	գշ.	շբ.	կ. յա.
Ռուսճուգ . . .	կը հա.	"	գշ.	կիր.	10 կ. յա.
Ռուսճուգէն . .	կ'ել.	շոգեկառքով	"	"	" կէսօր
Վառնա . . .	կը հա.	"	"	"	7 իրիկ.
Վառնայէն . .	կ'ել.	շոգենաւով	"	"	9 ,
Պոլիս	կը հա.	"	եշ.	բշ.	" կէսօր

ՊՈԼԻՍԷՆ . .	կ'ել.	շոգենաւով	գշ.	ուր.	4 կ. ե.
Վառնա . . .	կը հա.	"	գշ.	շբ.	7 առտ.
Վառնայէն . .	կ'ել.	շոգեկառքով	"	"	11 կ. յ.
Ռուսճուգ . .	կը հա.	"	"	"	6 իրիկ.
Ռուսճուգէն . .	կ'ել.	շոգենաւով	եշ.	կիր.	4 առտ.
Պազիաշ . . .	կը հա.	"	ուր.	բշ.	4 կ. ե.
		Շոգենաւով		Շոգեկառքով	
Պազիաշէն . .	կ'ել.	բշ. " . .	"	"	5.55 "
Փեշթէն . . .	կ'ել.	գշ. 6 իրիկ.	շբ.	գշ.	7.34 առտ.
Վիէննա . . .	կը հա.	եշ. — կ. ետքը	"	"	1.50 կ. ե.

Գին աստիճանաց ֆլ. ու ֆր. վրայ:

Վառնայի վրայէն		Տոմս. Ա.	Տոմս. Բ.	Խ. տոմս. դ. ե. 11.
Պոլսոյ եւ Վիէննայի մէջ . . .	ֆլ.	121.80	85.50	113.50
	ֆր.	304.50	213.75	283.75
" " Փեշթի " . . .	ֆլ.	108.50	75.50	103.50
	ֆր.	271.25	188.75	258.75
" " Պազիաշի " . . .	ֆլ.	88.50	60.50	— —
	ֆր.	221.25	151.25	— —

Ճեպընթաց Վիէննայի եւ Փարիզի մէջ:

Վիէննայէն կ՚ելլէ	4.30 կ. ե.	Փարիզէն կ՚ելլէ	8.35 իր.
Սալցպուրկէն "	1.— գիշ.	Շալոնէն "	12.12 գիշ.
Ռոզէնհայմէն "	3.20 առ.	Ֆրուարէն "	3.51 առ.
Միւնիխէն "	5.45 "	Նանսիէն "	4.09 "
Աւկսպուրկէն "	7.10 "	Շթրասպուրկէն "	7.57 "
Ուլմէն "	9.05 կ. յ.	Քէհլէն "	8.30 կ. յ.
Շթութկարդէն "	11.45 "	Աբբէնվայրէն "	9.10 "
Միւլաքէրէն "	12.55 կ. ե.	Քարլսրուհէէն "	10.40 "
Քարլսրուհէէն "	2.25 "	Միւլաքէրէն "	12.— կէս.
Աբբէնվայրէն "	4.— "	Շթութկարդէն "	1.35 կ. ե.
Քէհլէն "	4.30 "	Ուլմէն "	4.30 "
Շթրասպուրկէն "	5.25 "	Աւկսպուրկէն "	6.45 իր.
Նանսիէն "	8.49 իր.	Միւնիխէն "	8.30 "
Ֆրուարէն "	9.02 "	Ռոզէնհայմէն "	10.25 գիշ.
Շալոնէն "	1.— գիշ.	Սալցպուրկէն "	1.30 "
Փարիզ կը հասնի	5.— առ.	Վիէննա կը հասնի	9.30 կ. յ.
Ա. Աստ. { Ֆլ. 68·36 " " { Ֆր. 170·90	ժամ տեւող. 36.30	Բ. Աստ. { Ֆլ. 50·70 " " { Ֆր. 126·75	ժամ տեւող. 37.35

ԾԱՆՕԹ. Շոգենաւու ու շոգեկառքի մէջ ճամբու գինը նոյն կը մնայ: Շիտակ տոմսակը ՝ամիս մը կ՚արժէ: Դան. շոգենաւու մէջ կերակրոյ ստակն ալ մէկտեղ է: 50 ֆունտ (Քիլօկրամ 28 կամ օխա շուրջ 22) բեռ ազատ է:

Վիէննայէն Պոլիս կը տեւէ ժամ 69.30
Պոլիսէն Վիէննա " " " 93.50

Պոլիսէն ուղղակի Փարիզ Վիէննայի վրայէն շուրջ 6 օր. գին առ. ստոմ. ֆրանք 434.65
գին երկ. ստոմ. ֆրանք 298.20

Դան. ճամբան Մարտի վերջէն մինչեւ Նոյ. վերջը կը բանի: Անկէ ետքը Թրիէստի վրայէն կ՚երթան կու գան ճամբորդները Լոյտի շոգենաւերով: Պոլիսէն դէպ ի Թր. ամէն շբ. առտ. 10ին. Թրիէստէն Պոլիս ամէն շբ. ժ. 2. կէսօրէն ետքը: Ժամանակ տեւողութեան շուրջ 123 ժամ: Թրիէստէն Վիէննա ճեպընթաց շոգեկառքով ժամ 14.25:

Ա.



Աւստրիայի մէջ եղած երկաթուղիներուն Վիեննայի ու դրսի տէրութեանց հետ հաղորդակցութիւնը:

[1]) Աւստրիայի երկաթուղիներուն մղոնի վրայ բաժնուած ընդհանուր գինը՝ որն որ հնչող արծ. ֆ. է, աս է. Ա. աստ. 36 գար. Բ. աստ. 27 գար. Գ. աստ. 18 գար. Մեր հոս դրած գինը աս հիման վրայ հաշուած է. Թղթեայ ֆ.ին ժամանակաւոր տարբերութիւնը % 10—15—20 վրան կը զարնուի: Տես եր. 6. 7:
[2]) Երկու տարուընէ վար բլլող տղաք վճարմունքէն ազատ են:
[3]) Տասը տարին չանցնողները կէս գինը կը վճարեն:
[4]) 50 ֆունտ ազատ է: Անկէ աւելի 20 ֆունտին համար մղոնի վրայ 1½ գարանթան կը վճարուի:

ՎԻԷՆՆԱՅԻ ու ՊԱԶԻԱՇԻ մէջ Նորտպանով, տես Թիւ 20:

Մղոնի հեռաւորութիւն	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ. վ.	Հասարակ Զու ժ. վ.	Ճեպընթաց ժ. վ.	Ատիճան Ա. ֆ. գ.	Ատիճան Բ. ֆ. գ.	Ատիճան Գ. ֆ. գ.	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ. վ.	Հասարակ Զու ժ. վ.	Ճեպընթաց ժ. վ.	
		Առա.	Իրիկ.	Կ. ե.					Կ. ե.	Առա.	Առա.	
	Վիեննայէն . . .	7 45	8 —	2 30	. . . .	. . . .	. . . .	Պազիաշէն . . .	5 45	. . . .	. . . .	
9	Փրէսպուրկէն . .	10 24	10 49	4 33	3 24	2 43	1 62	Թըմըշվարէն . .	10 32	5 10	. . . .	
37	Փէշթ կը հաս.	4 37	5 27	9 10	13 32	9 99	6 66	Սէկէտինէն . .	2 25	12 15	2 12	Ճեպընթացը Վիեննայէն Փէշթ ու Թըմըշվար բշ. ուրբ. Սէկէտինէն ու Փէշթէն Վիեննա դշ. շբ:
	կ'ելլէ	5 35	6 25	9 40	. . . .	. . . .	. . . .	Փէշթ կը հաս.	8 45	8 37	6 56	
62	Սէկէտինէն . .	12 17	3 50	2 25	22 32	16 74	11 16	կ'ելլէ	9 55	9 30	7 40	
77	Թըմըշվարէն . .	5 30	10 18	5 20	27 72	20 80	13 86	Փրէսպուրկէն . .	4 45	4 8	12 29	
92½	Պազիաշ կը հաս.	11 51	. . . .	8 31	33 30	24 98	16 65	Վիեննա կը հաս.	6 33	6 —	1 50	
		Կ. յու.		Առա.					Իրիկ.	Առա.	Կ. ե.	

ՎԻԷՆՆԱՅԻ ու ՊՈՏԷՆՊԱԽԻ մէջ Նորտպանով:

Մղոնի հեռաւորութիւն	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ. վ.	Հասարակ Զու ժ. վ.	Ճեպընթաց ժ. վ.	Ատիճան Ա. ֆ. գ.	Ատիճան Բ. ֆ. գ.	Ատիճան Գ. ֆ. գ.	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ. վ.	Հասարակ Զու ժ. վ.	Ճեպընթաց ժ. վ.	
		Առա.	Իրիկ.	Կ. ե.					Առա.	Կ. ե.	Առա.	
	Վիեննայէն . . .	6 30	7 —	1 30	. . . .	. . . .	. . . .	Պոտէնպախէն . .	4 30	3 10	3 10	
20	Պրիւնէն . . .	10 48	11 45	4 48	7 20	5 40	3 60	Փրակ կը հաս.	8 15	6 45	5 55	Ճեպընթացը Վիեննայէն դշ. շբ. ու. եւ բ. ատիճան: Պոտէնպախէն Վիեննա բշ. ուրբ:
54	Փրակ կը հաս.	7 16	7 53	10 13	19 44	14 58	9 72		Առա.	Իրիկ.	Առա.	
		Իրիկ.	Առա.	Իրիկ.				կ'ելլէ	8 40	7 12	6 19	
	կ'ելլէ	7 50	8 17	10 34	. . . .	. . . .	. . . .	Պրիւնէն. . . .	4 33	3 38	12 3	
71	Պոտէնպախ կը հաս.	11 40	11 48	1 18	25 56	19 17	12 78	Վիեննա կը հաս.	8 33	7 56	3 12	

ՎԻԷՆՆԱՅԻ ու ԼԷՄՊԷՐԿԻ մէջ Նորտպանով :

		Առտ.	Իրիկ.						Իրիկ.	Առտ.		
	Վիէննայէն . . .	7 15	8 30	.. ..	.. ..	.. ..	.. ..	Լէմպէրկէն . . .	5 20	5 10	.. ..	
25	Փրերավէն . . .	12 56	2 24	.. ..	9 —	6 75	4 50	Թառնովէն . . .	3 16	12 48	.. ..	
37½	Օտէրպէրկէն . .	3 36	5 39	11 30	13 50	10 13	6 75	Պոխնիայէն . .	4 50	1 52	.. ..	
55½	Քրաքավ կը հաս.	7 45	9 45	5 22	19 98	14 99	9 99	Քրաքավ կը հաս.	6 15	2 54	.. .	
		Իրիկ.	Կ. Յ.	Կ. Ե.					Առտ.	Կ. Ե.	Կ. Յ.	
	Կ'ելլէ	8 30	10 30	.. ..	.. ..	.. ..	.. ..	Կ'ելլէ	7 —	3 50	8 —	
60½	Պոխնիայէն . . .	9 45	11 35	.. .	21 78	16 34	10 89	Օտէրպէրկէն . .	11 44	8 10	2 28	
66	Թառնովէն . . .	11 8	12 44	.. ..	23 76	17 82	11 88	Փրէրավէն . . .	2 35	11 20	.. ..	
101	Լէմպէրկ կը հաս.	8 32	8 40	.. ..	36 36	27 27	18 18	Վիէննա կը հաս.	7 37	5 18	.. ..	
		Կ. Յ.	Իրիկ.						Իրիկ.	Առտ.		
			Կ. Ե.	Գիշ.					Առտ.	Իրիկ.		
	Փրերավէն . . .	.. ..	2 37	11 18	.. ..	.. ..	.. ..	Օլմիցէն . . . „	12 13	10 —	.. ..	
3	Օլմից կը հաս.	.. ..	3 18	12 5	1 8	— 81	— 54	Փրէրավ կը հաս.	12 43	10 57	.. ..	

ՎԻԷՆՆԱՅԻ ու ՍԱԼՑՊՈՒՐԿԻ մէջ Վէսթպանով, տես Թիւ 20:

		Առտ.	Իրիկ.	Կ. Ե.					Կ. Ե.	Կ. Ե.	Առտ.	Ունէ զատ ամառը 8.45 առտ. ուրիշ ճեպընթաց, որուն գիները %20 հաւասարակէն աւելի է: Վիէննայէն Իննսպրուք Սալցպուրկի վրայէն 20 ժամ ու 20 բոպ. կը տեւէ:
	Վիէննայէն . . .	7 —	9 30	4 30	.. ..	.. ..	.. ..	Սալցպուրկէն . .	5 45	12 15	1 45	
8	Ս. Փէօլթէն . .	9 17	11 48	6 —	2 88	2 16	1 44	Լամպախէն . . .	9 —	2 43	4 5	
23	Էննսէն	12 47	3 30	8 37	8 28	6 21	4 14	Վէլսէն	9 30	3 3	4 28	
25	Լինցէն	2 —	4 25	9 20	9 —	6 75	4 50	Լինցէն	10 40	4 —	5 15	
28½	Վէլսէն	3 50	5 15	9 56	10 26	7 70	5 13	Էննսէն	11 22	4 24	5 39	
30	Լամպախէն . . .	3 40	5 45	10 17	10 80	8 10	5 40	Ս. Փէօլթէն . .	3 32	7 8	8 20	
41½	Սալցպուրկ կը հաս.	7 15	8 45	12 45	14 94	11 21	7 47	Վիէննա կը հաս.	5 35	8 35	9 45	
		Իրիկ.	Գիշեր	Կ. Ե.					Առտ.	Առտ.	Կ. Յ.	

Մղոնի հեռաւորութիւն	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ.	վ.	ժ.	վ.	Ճեպընթաց ժ.	վ.	Ատիճան Ա. ֆ.	կ.	Բ. ֆ.	կ.	Գ. ֆ.	կ.	Անուանք շոգեկայարանաց	Հասարակ Զու ժ.	վ.	ժ.	վ.	Ճեպընթաց ժ.	վ.	
	ՎԻԵՆՆԱՅԻ ու ԹՐԻԵՍՏԻ մէջ Սիւտպանով, տես թիւ 20:																				
		Առա.		Իրիկ.		Առա.									Առա.		Իրիկ.		Առա.		
	Վիեննայէն . . .	9	30	9	30	6	50	..	..	..	..	..	..	Թրիէստէն . . .	6	45	6	45	6	30	
3½	Պատէնէն . .	10	40	10	40	7	23	1	26	—	95	—	63	Նապրեզինայէն .	7	48	7	46	7	9	
6½	Նայշթատէն .	11	27	11	28	7	52	2	34	1	76	1	17	Ատէլսպէրկէն .	10	26	10	23	9	—	Ճեպընթացը ամառը Վիեննայէն ու Թրիեստէն ամէն գշ. եշ. շբ. օրերը կ'ելլէ ու ա. ատրեճան միայն ունի, իսկ ձմեռը Վիեննայէն դշ. շբ. Թրիեստէն բշ. եշ:
17½	Միւրցուշլակէն .	3	4	2	52	10	2	6	30	4	73	3	15	Լայպախէն . .	1	6	12	5	10	49	
23	Գրուքէն . . .	4	32	4	25	11	5	8	28	6	21	4	14	Շթայնպրիւքէն .	3	27	3	11	12	16	
30	Կրացէն . . .	6	32	6	18	12	31	10	80	8	10	5	40	Չիլլիէն . . .	4	16	4	—	1	6	
38½	Մարպուրկէն .	8	46	8	32	2	2	13	86	10	40	6	93	Մարպուրկէն .	6	31	6	15	2	43	
47½	Չիլլիէն . . .	11	1	10	46	3	39	17	10	12	83	8	55	Կրացէն . . „	8	54	8	34	4	14	
51	Շթայնպրիւքէն .	11	53	11	38	4	15	18	36	13	77	9	18	Գրուքէն . . .	10	41	10	23	5	26	
59	Լայպախէն . . .	2	13	2	11	5	45	21	24	15	93	10	62	Միւրցուշլակէն .	12	13	12	11	6	28	
67½	Ատէլսպէրկէն .	4	43	4	38	7	32	24	30	18	23	12	15	Նայշթատէն .	3	34	3	35	8	35	
76	Նապրեզինայէն .	7	37	7	32	9	25	27	36	20	52	13	86	Պատէնէն . . .	4	21	4	22	9	3	
78½	Թրիէստ կը հաս.	8	20	8	15	9	59	28	26	21	20	14	13	Վիեննա կը հաս.	5	17	5	25	9	36	
		Առա.		Իրիկ.		Իրիկ.									Առա.		Իրիկ.		Իրիկ.		
	Իտալիայի հետ ՎԻԵՆՆԱՅԻ ու ԹՐԻԵՍՏԻ հաղորդակցութիւնը Սիւտպանով առ. իր. ՎԻԵՆՆԱՅԷՆ ու ԹՐԻԵՍՏԷՆ ՆԱՊՐԵԶԻՆԱ եկած շոգեկառքով:																				
		Առա.		կ. յ.		Իրիկ.									Առա.		Իրիկ.		Իրիկ.		
	Վէնէտիկէն . .	7	35	11	—	10	26	..	..	..	..	..	..	Նապրեզինայէն .	8	8	—	—	9	50	
4	Թրէվիզոյէն . .	8	41	12	6	11	37	1	44	1	8	—	72	Կորիցիայէն . .	9	22	8	43	11	9	Քորմանէն սկսեալ Իտալիայի մէջ վճարմունքը թէպէտ և արծաթի վրայ է, բայց հարկի անունով վճարուած աւելին՝ վրան կը զարնուի:
18	Ուտինէ կը հաս.	12	7	3	30	2	53	6	48	4	86	3	24	Քորմանէն . .	9	44	9	5	11	35	
		կ. օր		կ. ե.										Ուտինէ կը հաս.	10	27	9	54	12	20	
	կ'ելլ.	6	50	3	50	3	3	..	..	..	..	..	..				կ. ե.				
20½	Քորմանէն . . .	7	35	4	34	3	43	7	38	6	86	3	69	կ'ելլ.	10	47	4	18	12	30	
22	Կորիցիայէն . .	8	28	5	18	4	29	7	92	5	94	3	96	Թրէվիզոյէն . .	2	7	7	39	4	44	
27	Նապրեզինա հաս.	—	—	6	56	6	5	9	72	7	29	4	86	Վէնէտիկ կը հաս.	2	51	8	35	6	—	

ՎԵՆԵՏԻԿԻ ու ՄԻԼԱՆԻ մէջ Սիւտպանով:

		Առտ.	Կ.Ե.	Առտ.					Առտ.	Առտ.	Կ.Ե.
	Վենետիկէն . .	9 25	4 5	5 45	.. ..	.. ..	.. ..	Միլանէն . . .	.. ..	6 35	11 30
3	Տոլյէն . . .	10 13	4 52	6 34	1 8	— 81	— 54	Փեսքիերայէն . .	.. ..	12 45	5 22
5	Փատուայէն . .	10 48	5 28	7 9	1 80	1 35	— 90	Վերոնա կը հաս.	.. ..	1 42	6 19
9	Վիչենցայէն . .	11 39	6 19	8 —	3 24	2 43	1 62	կ'ել.	7 24	2 2	6 39
15	Վերոնա կը հաս.	1 13	7 56	9 34	5 40	4 5	2 70	Վիչենցայէն . .	9 3	3 39	8 16
	կ'ել.	1 33	.. ..	9 54	.. ..	.. ..	.. ..	Փատուայէն . .	9 55	4 31	9 8
19	Փեսքիերա կը հաս.	2 28	.. ..	10 49	6 84	5 13	3 42	Տոլյէն „ . .	10 25	5 1	9 38
	կ'ել.	3 28	.. ..	11 30	.. ..	.. ..	.. ..	Վենետիկ կը հաս.	11 13	5 49	10 28
37½	Միլան կը հաս.	8 30	.. ..	4 30	13 50	10 13	6 75		Կ.Յ.	Կ.Ե.	Գիշ.
		Իրիկ.		Կ.Ե.							

ՎԵՐՈՆԱՅԻ ու ՄԱՆԹՈՒԱՅԻ մէջ:

		Առտ.	Կ.Յ.	Կ.Ե.					Առտ.	Կ.Յ.	Կ.Ե.
	Վերոնայէն . .	6 50	10 10	2 50	..	.. ..	.. ..	Մանթուայէն . .	8 30	12 —	4 30
5	Մանթուա կը հաս.	8 5	11 35	4 5	1 80	1 35	— 90	Վերոնա կը հաս.	9 41	1 16	5 41

ՎԵՐՈՆԱՅԻ ու ՊՈՑԸՆԻ մէջ:

		Առտ.	Կ.Ե.						Առտ.	Կ.Ե.	
	Վերոնայէն. . .	6 35	3 —	.. ..	.. ..	.. ..	.. ..	Պոցընէն . . .	6 35	3 —	.. ..
9½	Ռովերէտոյ . . .	9 30	5 55	.. ..	3 42	2 57	1 71	Թրենթոյէն. . .	8 41	5 6	.. ..
12½	Թրենթոյ . . .	10 25	6 52	.. ..	4 50	3 38	2 25	Ռովերէտոյ . . .	9 37	6 2	.. ..
20	Պոցըն կը հաս.	12 2	8 29	.. ..	7 20	5 40	3 60	Վերոնա կը հաս.	12 9	8 34	.. ..
									Կ.Ե.	Իրիկ.	

Բ.

ՎԻԷՆՆԱՅԻ, ՓԱՐԻԶԻ ու ԼՈՆՏՈՆԻ մէջ ՄԻԻՆԻՔԻ վրայէն վէսթպանով:

Անուանք շոգեկայարանաց	Ճեպընթաց (Ամէն օր.) ժ.	վ.	Ճեպընթաց (Ամառը միայն) ժ.	վ.	Անուանք շոգեկայարանաց	Ճեպընթաց ժ.	վ.
Վիէննայէն . . .	կ. ե. 4	30	առ. 8	45	Լոնտոնէն	առ. 7	30
Լինցէն	եր. 9	20	կ. ե. 1	45	Փարիզ կը հաս.	եր. 6	—
Վելսէն . . .	9	56	..	..	կ'ելլէ	8	10
Սալցպուրկէն . . .	առ. 1	5	5	30	Ստրասպուրկէն . .	կ. յ. 9	12
Միւնիքէն . . .	6	—	10	30	Քէլէն	8	17
Աւկսպուրկէն . .	7	25	11	50	Պատէնէն	10	20
Ուլմէն	9	30	առ. 2	—	Քարլզրուհէէն . .	10	49
Շդուդկարթէն . .	12	—	5	—	Միւլաքերէն . .	11	40
Միւլաքերէն . . .	կ. ե. 1	15	6	15	Շդուդկարդէն . .	կ. ե. 1	45
Քարլզրուհէէն . .	2	25	7	45	Ուլմէն	4	50
Պատէնէն	3	—	8	20	Աւկսպուրկէն . .	7	—
Քէլէն	4	36	9	40	Միւնիքէն . . .	8	50
Ստրասպուրկէն . .	5	25	10	15	Սալցպուրկէն . .	գիշ. 1	45
Փարիզ կը հաս.	առ. 5	—	եր. 8	50	Վելսէն	առ. 4	28
կ'ելլէ	7	20	..	..	Լինցէն	5	15
Լոնտոն կը հաս.	եր. 5	45	..	..	Վիէննա կը հաս.	կ. յ. 9	45

ՃԵՊԸՆԹԱՑԻՆ ԳԻՆԵՐԸ

ՎԻԷՆՆԱՅԷՆ	Ա. ֆ.	գ.	Բ. ֆ.	գ.
Քուֆշթայն . . .	20	53	15	13
Միւնիք	22	37	16	38
Աւկսպուրկ	25	2	18	22
Լինտաւ	33	90	24	35
Ուլմ	28	97	20	96
Նիւրնպերկ . . .	33	33	23	43
Ֆիւրթ	33	45	23	52
Պամպերկ	35	57	25	55
Վիւրցպուրկ . . .	40	7	28	68

ՎԻԷՆՆԱՅԻ ու ՀԱՄՊՈՒՐԿԻ մէջ նորտպանով, տես թիւ 20:

	Ճեպընթաց դշ.	շբ.	Իրիկ.				
Վիէննայէն . . .	կ. ե. 1	30	իր. 7	—	Համպուրկէն . .	առ. 7	30
Փրակայէն . . .	իր. 10	34	առ. 8	17	Պերլին կը հաս.	կ. ե. 4	—
Տրեզտէն	առ. 6	15	կ. ե. 2	45	Սթեթինէն . . .	1	15
Պերլին կը հաս.	11	20	իր. 8	30	Պերլին կը հաս.	4	30
կ'ելլէ	կ. ե. 1	—	..	..	կ'ելլէ	6	30
Սթեթին կը հաս.	4	20	..	..	Տրեզտէն	առ. 11	35
Պերլինէն կ'ելլէ	..	..	իր. 11	—	Փրակէն	6	19
Համպուրկ կը հաս.	..	..	կ. յ. 5	10	Վիէննա կը հաս.	կ. ե. 3	12

ՎԻԷՆՆԱՅԻ ու ՓԱՐԻԶԻ մէջ նորտպանով:

	Ճեպընթաց դշ.	շբ.					
Վիէննայէն . . .	կ. ե. 1	30	իր. 7	—	Փարիզէն	կ. ե. 5	10
Պատէնպախէն . .	առ. 1	58	կ. ե. 12	10	Գոլոնիայէն . . .	առ. 7	—
Տրեզտէն	4	15	2	45	Հաննովէրէն . . .	կ. ե. 2	45
Լայփցիկէն . . .	7	—	իր. 6	—	Պրաունշվայկէն . .	4	20
Մակտէպուրկէն . .	10	28	10	40	Մակտէպուրկէն . .	իր. 6	50
Պրաունշվայկէն . .	կ. ե. 12	52	առ. 12	45	Լայփցիկէն . . .	10	—
Հաննովէրէն . . .	2	21	2	4	Տրեզտէն . . .	առ. 12	50
Գոլոնիայէն . . .	իր. 9	45	8	15	Պատէնպախէն . .	3	10
Փարիզ կը հաս.	առ. 9	50	իր. 8	26	Վիէննա կը հաս.	կ. ե. 3	12

Ֆրիտրիքսհաֆէն	33	85	24	46
Էսլինկէն	32	67	23	55
Շդուդկարթ . . .	33	26	23	92
Հայլպրոն	35	57	25	29
Պրուխսալ	36	90	26	40
Տարմշթատ . . .	41	35	29	56
Ֆրանքֆուրթ . .	42	60	30	48
Պազէլ	47	23	33	82
Ֆրայպուրկ . . .	44	33	31	73
Քէլ	41	60	29	78
Պատէն-Պատէն .	39	80	28	49
Քարլսրուհէ . . .	39	95	27	19
Հայտելպերկ . . .	38	27	27	44
Մանհայմ	39	38	28	19
Փարիզ	64	98	47	32

Գ.

Անուանք շոգեկայարանաց	Ճեպընթաց				Աստիճան						Անուանք շոգեկայարանաց	Ճեպընթաց			
	ժ.	վ.	ժ.	վ.	Ա. ֆ.	Ա. ս.	Բ. ֆ.	Բ. ս.	Գ. ֆ.	Գ. ս.		ժ.	վ.	ժ.	վ.
ՓԱՐԻԶԻ հաղորդակցութիւնը գլխաւոր շոգեկայարաններուն ու նաւահանգիստներուն հետ:															
Փարիզէն	առ. 11	5	իր. 7	45	..	..	..	..	..	..	Մարսիլիայէն . . .	իր. 10	30	առ. 11	30
Լիոն կը հաս.	իր. 10	5	առ. 4	50	57	35	43	—	..	..	Լիոն կը հաս.	առ. 7	—	իր. 7	24
կ'ել.	իր. 10	45	5	20	..	..	..	..	..	..	կ'ել.	7	35	8	5
Մարսիլիա կը հաս.	առ. 6	36	կ. օ. 12	—	96	65	72	50	..	..	Փարիզ կը հաս.	իր. 6	30	առ. 6	55
Փարիզէն	իր. 11	5	առ. 7	20	..	..	..	..	..	..	Լոնտոնէն	իր. 8	35	առ. 7	30
Գալէ կը հաս.	առ. 10	10	կ. ե. 1	10	36	60	27	45	..	..	Գալէէն	առ. 1	30	իր. 12	10
Լոնտոն	առ. —	—	իր. 5	45	67	85	51	20	..	..	Փարիզ կը հաս.	7	20	6	—
Փարիզէն	առ. 8	—	իր. 4	35	..	..	..	..	..	..	Վիշիէն	իր. 9	35	առ. 10	20
Վիշի կը հաս.	իր. 7	35	առ. 4	10	41	—	30	70	..	..	Փարիզ կը հաս.	առ. 5	25	իր. 6	10
Լիոնէն	իր. 5	20	առ. 9	30	..	..	..	..	..	..	Ժընէվրայէն . . .	առ. 7	10	իր. 3	50
Ժընէվրա (կէնֆ) կ. հս.	10	55	իր. 3	30	13	10	9	85	..	..	Լիոն կը հաս.	1	15	8	57
Լիոնէն	իր. 8	35	առ. 5	40	..	..	..	..	..	..	Միւլհաուզէն . . .	առ. 9	59	կ. ե. 3	30
Տիժոնէն	առ. 2	45	իր. 2	40	..	..	..	..	..	..	Պըզանսոն . . .	2	19	8	21
Պըզանսոնէն . . .	5	8	6	4	10	30	7	75	..	..	Տիժոնէն	իր. 5	25	իր. 10	58
Միւլհաուզէն կը հս.	9	40	կ. յ. 10	55	26	45	19	85	..	..	Լիոն կը հաս.	10	—	առ. 4	50

Սպրասպուրկէն . . .	առ. 5	10	կ. օ. 12	45	..	..	..	..	..	..	Պազելէն	առ. 5	40	իր. 5	25
Գոլմար	7	36	3	11	7	60	5	70	..	..	Գոլմարէն . . .	8	37	8	22
Պազէլ կը հաս.	9	55	իր. 6	—	15	80	11	85	..	..	Սպրասպուրկ կը հաս.	առ. 10	—	10	40
									..						
Պազելէն	առ. 5	30	իր. 5	30	..	..	..	„	..	..	Միլանէն . . .	կ. ե. 3	10	առ. 5	30
Օլթըն կը հաս.	7	7	7	8	4	18	2	85			Լուչերնէն . . .	առ. 5	—	9	54
կ'ել.	7	26	7	35	..	..	..	..	..	..	Օլթըն կը հաս.	7	3	11	34
Լուչերն կը հաս.	9	54	իր. 9	37	5	80	4	10	..	..	կ'ել.	7	30	12	15
Միլան	—	—	առ. 8	12	.	..	..	..	..	..	Պազէլ կը հաս.	9	5	1	30

Դ.

ԴՈՒՐԻՆԻ *հաղորդակցութիւնը գլխաւոր շոգեկայարաններուն ու նաւահանգիստներուն հետ:*

					Լ.	Չ.	Լ.	Չ.	Լ.	Չ.					
Դուրինէն	առ. 5	35	կ. ե. 3	20	..	..	..	..	..	..	Գենուայէն . . .	առ. 5	45	կ. ե. 3	10
Աղեքսանդրիայէն .	8	25	6	10	10	5	7	5	..	..	Աղեքսանդրիայէն .	8	35	6	—
Գենուա կը հաս.	11	18	9	5	18	30	12	80	..	..	Դուրին կը հաս.	11	25	8	55
Աղեքսանդրիայէն .	առ. 2	30	կ. օ. 12	15	..	..	..	..	..	..	Պոլոնեայէն . . .	առ. 6	25	կ. յ. 11	25
Փիաչենցայէն . . .	7	23	կ. ե. 3	54	10	70	7	50	..	..	Մոտենայէն . . .	7	37	12	15
Մոտենայէն . . .	11	9	7	37	22	80	26	90	..	..	Փիաչենցայէն . . .	11	55	3	28
Պոլոնեա կը հաս.	12	18	իր. 8	42	47	50	36	35	.	..	Աղեքսանդրիա կը հա.	կ. ե. 4	5	7	10
Ֆիորենցայէն . . .	առ. 5	45	կ. ե. 5	—	..	..	..	..	..	..	Լիվորնոյէն . . .	առ. 6	—	կ. ե. 3	—
Փիզայէն	8	5	7	—	7	60	6	20	..	..	Փիզայէն	6	38	3	33
Լիվորնոյ կը հաս.	8	35	8	30	9	35	7	70	..	..	Ֆիորենցա կը հաս.	9	—	6	—
Հռոմէն	առ. 7	—	կ. ե. 4	10	..	..	..	..	..	..	Չիվիթա Վէքքիայէն	առ. 6	45	կ. ե. 4	45
Չիվիթա Վէքքիա հ.	9	20	7	20	9	85	6	30	..	..	Հռոմ կը հաս.	10	—	7	5
Նաբոլիէն . . .	առ. 9	—	..	..	..	..	..	..	..	..	Հռոմէն. . . .	10	10	..	..
Վելեթրիէն . . .	6	—	..	..	26	25	21	—	..	..	Վելեթրիէն . . .	11	15	..	..
Հռոմ կը հաս.	7	—	..	..	31	80	25	40	..	..	Նաբոլի կը հաս.	8	10	..	..

Պոլսոյ՝ Եւրոպայի վրայէն աշխարհքիս ուրիշ կողմերու հետ շոգենաւներով կապակցութիւնը:

Ա. ՅԱմերիկա:

Ա. Հիւսիսային Ամերիկա:

Անթվերբէն Նիւ-Եօրք եւ Ֆիլատելֆիա Լիվըփուլի վրայէն ամէն դշ. շբ.

Պրեմէն Նիւ-Եօրք Սութհէմփթընի վրայէն 12. 26. Սեպտ. 10. 24. Հոկտ. 21. Նոյեմբ. 19. Դեկտ.

Գալվայէն Պոսթըն 15. Սեպտ. 13. Հոկտ. եւ այլն Նիւ-Եօրք 1. 29. Սեպտ. եւ այլն.

Համպուրկէն Նիւ-Եօրք Սութհէմփթընի վրայէն երկու շբ. օրը մէյմը 5. 19. Սեպտ. 3. 17. 31. Հոկտ. (դարձը նոյն օրերը).

Համպուրկէն Նիւ-Եօրք եւ Գիւպէք Կլէսկոյի վրայէն 18. Յուլ. 8. 29. Օգ. եւ այլն.

Հավրէն Նիւ-Եօրք 1. 15. 29. Սեպտ. 13. 27. Հոկտ. 24. Նոյեմբ. 22. Դեկտ.

Լիվըփուլէն Նիւ-Եօրք եւ Ֆիլատելֆիա ամէն դշ.
" " երկու շբ. օրը մէյմը 12. 26. Սեպտ. 10. 24. Հոկտ. եւ այլն.
" Պոսթըն երկու շբ. օրը մէյմը 5. 19. Սեպտ. 3. 17. 31. Հոկտ. եւ այլն.
" Գիւպէք ամէն եշ.

Սութհէմփթընէն Նիւ-Եօրք ամէն դշ. Ամեր. շոգ.
" " Պրեմէնի շոգեն. 2. 16. 30. Սեպտ. 14. 28. Հոկտ. 25. Նոյեմբ. 23. Դեկտ.

Բ. Միջին ու հարաւային Ամերիկա:

Սութհէմփթընէն Արեւմտ. Հնդկաստան, Մեքսիգօ եւ Գալիֆորնիա ամէն ամսոյն 2. 17.

Սութհէմփթընէն Րիօ Ճանէյրոյ, Պուէնոս Այրէս, Լիսապոնի վրայէն ամէն ամսոյն 9.

Անթվերբէն Պրազիլիա ամէն ամսուան 1. օրը.

Պորտոյէն Լիսապոնի վրայէն Փերնամպուք, Պահիա ու Րիօ Ճանէյրոյ ամէն ամսոյն 25, քսան եւ հինգ օրուան մէջ: Զորս օր կենալէն ետեւ կը դառնայ.

Սէն Նազէրէն Մարթինիք, Քուպա եւ Վէրա Քրուզ ամէն ամսոյն 16ին:

Բ. ՅԱփրիկէ:

Ա. (Տես Գ.ին մէջ):

Բ. Արեւմտեան Ափրիկէ:

Պորտոյէն ամէն ամսոյն 25ին.
Լիվըրփուլէն ամէն ամսոյն 24ին.
Սութհէմփթընէն ամէն ամսոյն 9ին.

Գ. Ի Գլուխ Բարեյուսայ:

Ցէվընփորթէն ամէն ամսոյն 6ին.

Դ. ՅԱսիա:

Արեւել. Հնդկաստան եւ Ճենաստան, Աղեքսան. վրայէն:

Մարսիլյայէն Արեւել. Հնդկաստան ամէն ամսոյն 5. 12. 20. 28. ամէն ամսոյն 12. 28. Ճենաստան.

Սութհէմփթընէն Արեւել. Հնդկաստան ամէն ամսոյն 4. 12. 20. 27. ամէն ամսոյն 4. 20. Ճենաստան.

Թրիեստէն Արեւել. Հնդկաստան ամէն ամսոյն 5. 12. 20. 28 Ճենաստան ամէն ամսոյն 12. 28.

Ե. ՅԱւստրալիա:

Աղեքսանդրիայի վրայէն:

Սութհէմփթընէն ամէն ամսոյն 20.
Մարսիլյայէն ամէն ամսոյն 28.
Տրիեստէն ամէն ամսոյն. 28.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՔ

կիր·	կիրակի·
բշ·	երկուշաբթի·
գշ·	երեքշաբթի·
դշ·	չորեքշաբթի·
եշ·	հինգշաբթի·
ուր·	ուրբաթ·
շբ·	շաբաթ·
ժ.	ժամ.
վ·	վայրկեան·
հ· չ·	հասարակ չու·
ա·	առաջին·
բ·	երկրորդ·
գ·	երրորդ·
մղ·	մղոն·
կը հս·	կը հասնի·
կ'ել·	կ'ելլէ·
առ·	առատու·
իր·	իրիկուն·
գ·	գիշեր·
կ· յ·	կէսօրէն յառաջ·
կ· ե·	կէսօրէն ետքը·
կ· օ·	կէսօր·
ֆ·	ֆիօրին·
գ·	գարանդան
ֆր·	ֆրանք·
ս·	սանդիմ·
լ·	լիրա·
չ·	չէնդէզիմոյ·

ԱՌԱՋՆՈՐԴ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Անցագիր. Մաքս. Ստակ. Ճամբու մէջ թեթեւութիւն. Լեզու. Զգեստ. Գիներու վրայ տախտակ. Եւրոպայի տախտակ. Մղոն. Փարիզ երթալու ճամբայ:

Անցագիր. Ճամբորդը՝ ճամբայ ելլած՝ հարկաւոր բաները պէտք է որ հոգացած ըլլայ: Օրինակի աղագաւ Պոլիսէն Եւրոպա ճամբորդութիւն ընել ուզողին անհրաժեշտ հարկաւոր է՝ իր տէրութենէն անցագիր մը, որն որ տեսնուած ու կնքով հաստատուած ըլլայ Պոլիս գտնուող այն տէրութեանց դեսպանատուններէն, որոնց երկրին մէջ պտըտիլ կամ մէջէն անցնիլ կ'ուզէ: Աս գործողութիւնը դեսպանատուններէն ոմանք ձրի կ'ընեն, ոմանք ալ վճարել կու տան, ամէնը՝ ամէն տեղ միօրինակ չէ:

Մաքս. Զգուշանալու է որ մարդ՝ գացած երկրին օրէնքէն արգելուած բան մը հետը չառնու, եւ եթէ առած է, գաղտնի չպահէ. որովհետեւ ծանր տոյժ կայ թէ որ սահմանը կամ մաքսատունը քննած ատեննին, բան մը գտնելու ըլլան: Սովորաբար արգելուած բաներն ասոնք են. ծխախոտ, քթախոտ, սիգար, կնքուած նամակներ ու խաղի թղթեր: Թղթերը գործածուած կ'ըլլան նէ՝ բան մը չկայ: Ամէն ճամբորդ իր գործածութեան համար երկու լբ̃ (11 դրամ) ծխախոտ ու տասնի չափ սիգար կրնայ հետը առնուլ. բայց թէ աւելի ըլլայ, Աւս-

տրիայի մէջ պէտք է ամէն մէկ ֆունտի (175 տրամի) համար 3 ֆիորին վճարէ: Նոյնպէս կրնայ ունչայ ալ առնուլ, բայց 100 ունչայի համար պէտք է 3 ֆիորին վճարել: Միտ դնելու է որ այսպիսի ծանր մաքսի տակ ինկող բաները, ուր տեղ որ պիտ'որ գործածուին, հոն խաւրուին կամ ուղղակի եւ կամ մէկ մաքսատունէն մէկալ մաքսատուն (transito) մինչեւ որ իր տեղը հասնի. որպէս զի հետը պտըտցընելով՝ ամէն տեղ հարցման ու քննութեան տակ չիյնայ, միանգամայն երկրորդ ու երրորդ անգամ վճարելու վտանգէն ազատ ըլլուի:

Ստակ. Ոսկի դրամ՝ որ տէրութեան որ ըլլայ, ամէն տեղ կ'անցնի, բայց աւելի օգտակարն ու ապահովը Նաբոլէոնն է, որուն անունը, գինը, կարգն եւ ուրիշ տէրութեանց ստակներուն հետ համեմատութիւնը՝ ամէն տեղ ամենուն ծանօթ է: Բայց ուղեւոր ճամբորդի համար խիստ մեծ դիւրութիւն է, թէ որ հարկաւոր եղած ստակը քովն ունենալէն զատ, զանազան տեղեր ալ սեղանաւորներու վրայ վստահութեան թուղթ (crédit) առած ըլլայ, որպէս զի ուզած ատեն եւ ուզած տեղը ստակ առնու եւ նեղութիւն չքաշէ: Ճամբու մէջ ինչպէս հարկաւորէն աւելի հետը ստակ ունենալը կրնայ վտանգաւոր ըլլալ, նոյնպէս հարկաւորէն պակաս ըլլալն ալ կրնայ շատ նեղութիւն տալ:

Թեթեւութիւն. Ճամբորդին մեծ ծախք կը պատճառէ ու շատ ալ ծանրութիւն կու տայ, ճամբու մէջ հարկաւորէն աւելի բան հետն ունենալը: Շոգեկառքներու մէջ ամէն տեղ ամէն ճամբորդին թոյլ տուեալ է 50 ֆունտ բեռ հետն առնելու, աւելին կը կշռուի ու ամէն մէկ աւելի ֆունտին համար, երթալու տեղւոյն մօտաւորութեան ու հեռաւորութեան համեմատ վճարել

կու տան, 5 գարանդանէն մինչեւ 20—30—40 գարան-դան: Շոգենաւերու մէջ՝ որչափ ալ ասոր այնչափ ճիշդ չինայուիր, ի վերայ այսր ամենայնի տեղ տեղ վճարել կու տան: Անոր համար տարւոյն եղանակին ու երթալու տեղերուն կլիմային նայելով, կրնայ աս հարկաւորութիւնը չափաւորուիլ: Հաւասար ու ամէնը մէկ խելքէ ըլլող ընկերութիւնն ալ ճամբան շատ զուարճալի կ'ընէ. բայց հիւանդք, կանայք ու տղաք հասարակօրէն շատ արգելք կ'ըլլան:

Լեզու. Շատ մեծ դժուարութիւն կը պատճառէ ճամբորդին գացած ու կեցած տեղւոյն լեզուն չգիտնալը: Ստոյգ է որ ամէն պանդոկներու մէջ միշտ ճամբորդին սպասող շատխօսութեամբ ու ճարտարաբանութեամբ երեւելի Կիկերոն ըսուած լեզուագէտներ չեն պակսիր. բայց թէ որ խեղճ անլեզու ճամբորդը մէյ մը ատանցմէ մէկուն ձեռքն իյնայ, որն որ խիղճ չունենայ զինքը գերփելու եւ քերթելու, ճամբու մէջ ըրած կամ յուսացած զբօսանքը քիթէն բերնէն կը բերէ: Այսպիսի դիրքի մէջ գտնուող ճամբորդին խորհուրդ կու տանք, նախ որ աս տեսակ Կիկերոններուն իրենք զիրենք բոլորովին չհաւտան. երկրորդ՝ որ զանոնք ան բաներուն մէջ միայն գործածեն, որ առուտուրի հետ գործք չունենայ: Թէ որ ճամբորդն ուզենայ բան մը գնել կամ ծախել, նայի որ միշտ շահ չունեցող բարեկամի մը մատը մէջն ըլլայ: Ուզելով որ նաեւ աս դժուարութեան մէջն ալ ձեռքերնէս եկածին չափ մեր ճամբորդին օգնենք ու զինքն առանձին թող չտանք, գրքիս ետեւը հայերէն, տաճկերէն, գաղղիերէն ու գերմաներէն լեզուաւ համառօտ խօսակցութիւն մը դրինք, որուն մէջ ուզողը կրնայ հարկաւոր եղած բաները գտնել:

Զգեստ. Արեւելեան զգեստը Եւրոպայի մէջ միշտ յարգութիւն ունի. ուստի ազգային զգեստովն Եւրոպա պտըտող Արեւելցին ամէն տեղ մեծ ընդունելութիւն կը գտնէ, ու ամէն տեսնելու տեղերն իրեն համար բաց են։ Բայց օտարական հիւրի մը համար աս ընդունելութիւնը որչափ ալ ախորժական բան է, նոյնչափ ալ մեծ նեղութիւն կը պատճառէ թէ որ անոր համաձայն ձեռքը բանալու վիճակի մէջ չէ։ Քիչ մը մաքուր զգեստ հագած ու գլուխը ֆէս դրած մէկը դուրսը տեսնուած ատեն՝ փաշա մը կը կարծեն եւ կ'ուզեն պատուել ու պատուիլ. անոր համար խորհուրդ կու տանք, որ ճամբորդն ուր որ հարկաւորութիւն չկայ, Եւրոպայի հագուստ հագնի, որն որ զինքն այսպիսի աւելորդ պատիւներէն ու պատիժներէն ազատ կը պահէ։

Գիներու վրայ տախտակ. Ճամբորդն երթալու ճամբան մտքին մէջ որոշելէն ետքը՝ կ'ուզէ միանգամայն գիտնալ թէ երթալու եւ անցնելու տեղերը մէկը մէկալէն որչափ հեռու են, երբ մէկ տեղէն մէկալ տեղ ճամբայ կ'ելլէ ու երբ կը հասնի. եւ ճամբուն գինը, վիճակին ու կարողութեան համեմատ բռնելու ատիճանին նայելով՝ ինչ կրնայ ըլլալ։ Հաշիւը գիտցող ճամբորդին ատոնց երեքն ալ հարկաւոր բաներ են։ Առջինը, այսինքն՝ հեռաւորութիւնը գիտնալը՝ շատ դիւրին է ու միշտ անփոփոխ կը մնայ։ Բայց երկրորդ ու երրորդ հարցմունքը շատ դժուարին է, որովհետեւ մարդու կամքէն կախում ունի, որն որ զանազան պարագաներուն միտ դնելով՝ այսօրուան տրամադրութիւնը վաղը կրնայ փոխել ու նոր կարգադրութիւն հրատարակել, ինչպէս իրօք ալ կ'ընէ։ Ուր որ ճամբորդներու յաճախութիւն կայ ու կանոնաւոր հրատարակութեանց սովորութիւնը ժողովրդեան մէջ

մուած է, հոն տեղուանքն ու փոփոխութիւնները դժուարութիւն չեն բերեր. որովհետեւ եղած փոփոխութիւնները յանկարծական չըլլալով, թէ լրագիրներն ու թէ ամսական տետրակները, որոնք մասնաւոր եղանակաւ ամսուան մէջ եղած՝ օրերուն, ժամերուն ու գնոց փոփոխութեանցը վրայ կը գրեն, դեռ ժամանակը չեկած՝ հասարակութիւնն ամէն բանին տեղեակ կ՚ընեն: Բայց աս մեր ճամբորդութեան գրքին մէջ ասոնց վրայ ճշդիւ բան մը խօսիլն անկարելի է: Մենք՝ աս անկարելին կարելի ընելու համար՝ մտածեցինք որ գրքիս մէջ երթալու ճամբուն ու տեղերուն վրայ գրելէն ետքը, ասոնց վրայ ամենեւին բան մը չխօսինք. հապա գրքին վերջը տախտակ մը կամ պատկեր մը դնենք, զորն որ՝ ամէն տարի, մանաւանդ թէ ամէն անգամ՝ որ երեւելի փոփոխութիւն որ կ՚ըլլայ, նորէն տպենք ու հնոյն տեղը դնենք, որպէս զի ճամբորդին առաջնորդ ըլլող գիրքս՝ միշտ նոր մնայ ու միշտ խորհուրդ հարցընողին ձեռքէն բռնած՝ ուղիղ ճամբան ցուցընէ: Յայտնի է որ մեր վախճանը Պոլիսէն ուղիղ գծով Եւրոպայի հետ հաղորդակցութիւն ունեցող շոգենաւաց ու շոգեկառաց ընկերութիւններուն վրայ խօսիլ է: Բայց ասոնց գործքերը՝ միայն Եւրոպայէն Պոլիս գալ ու երթալ չէ, հապա նոյն մայրաքաղաքն իրենց գլխաւոր կայարաններէն մէկն ընելով, Պոլսոյ ու Տաճկաստանի ուրիշ նաւահանգիստներու մէջն ալ կը բանին. անոր համար նոյն տախտակին մէջ իւրաքանչիւր ընկերութեան շոգենաւներուն կանոնաւոր ընթացքին վրայ ալ գրած ու նշանակած ենք: Աս տախտակը կամ պատկերը գրքիս ամբողջացուցիչ մասն է:

Եւրոպայի տախտակ. Աս փոփոխական տախտակէն զատ՝ մէյ մ՚ալ անփոփոխ, անփոփոխելի ու գրեթէ ամ-

բողջ Եւրոպայի ընդարձակ տախտակ մը դրած ենք, որուն մէջ ծովու, գետի ու ցամաքի ճամբաներն ամբողջ ու ճիշդ նշանակուած են, այնպէս որ միայն ասոր առաջնորդութեամբը՝ ճամբորդը կրնայ դեռ տեղէն չելած՝ երթալու ճամբան գտնել. հեռաւորութիւնը ճանչնալ ու մտքով չափել թէ որչափ ատենուան մէջ կրնայ հոն հասնիլ: Մեր ազգային ճամբորդին Եւրոպայի մէջ հանդիպելու տեղերը պայծառ ցուցընելու համար, իւրաքանչիւր քաղքին քով կամ գաւառին մէջ գտնուած տեղերուն մեծ մասը զանց առինք ու չդրինք, որպէս զի ասոնցմով խճողելով՝ չըլլայ որ շփոթութիւն մը պատճառի: Բայց ճամբորդը հասած տեղը՝ տեղական ծանօթութիւններ առնելու համար գրքիս չիկարօտիր:

Մղոն. Կը մնայ միայն որ գուցէ ճամբորդը բաղձայ գիտնալ, որ շոգեկառքներն ինչ շուտութեամբ կը քալեն, ու մղոնի վրայ հաշուելով՝ ամէն մէկ մղոնի համար աստիճանին համեմատ ինչ կը վճարուի: Ասոնց վրայ, ինչպէս ըսինք, ճիշդ բան մը չիկրնար ըսուիլ. բայց աս յայտնի է որ Բելգիայի ու Անգղիայի մէջ՝ շուտ, գրեթէ մէկ ժամու մէջ 8 Աւստրիական մղոն[1] կը քալեն, Գաղղիայի մէջ 7 ու Աւստրիայի մէջ 6:

[1] Աւստրիայի հասարակ աշխարհագրական . . . 1 մղոնը, որն որ ոտքով քալելով շուրջ 2 ժամ է,
Անգղիայի ծովական կամ աշխարհագրական . . . $4^2/_3$ է " " " " " 26 րոպէ.
Գաղղիայի հասարակ աշխարհագրական . . . . $1^1/_3$ Lieue " " " "1 ժամ 10 րոպէ
Իտալիայի աշխարհագրական . . . . 4 " " " " " $^1/_2$ ժամ.
Ռուսի աշխարհագրական $6^{29}/_{30}$ վէրստ " " " 18 րոպէ.
Օսմանեան " $4^4/_9$ միլ " " " 27 րոպէ.
Ուստի աս համեմատութենէն կ'երեւայ որ Աւստրիայի մէջ ոտքով 12 ժամ քշելու ճամբան՝ շոգեկառքով 1 ժամ կը տեւէ, իսկ Անգղիայի մէջ 45 րոպէ ու Գաղղիայի մէջ $51^1/_2$ րոպէ կը տեւէ:

Մղոնի տեւողութեան պէս՝ գնոյն ալ չափ մը չէ դրուած տէրութեանց կողմանէ. իւրաքանչիւր ընկերութիւն ազատ է՝ իր տէրութեան գիտութեամբն ու հաւանութեամբը՝ իր գինը դնել: Բայց եղած գիները մէկը մէկալին հետ համեմատելու որ ըլլանք, կը տեսնենք որ ասոր մէջն ալ, որչափ ալ ճիշդ չէ, ի վերայ այսր ամենայնի կանոն մը կայ, որմէ աս կ'ելլէ որ Աւստրիայի մէջ մէկ Աւստրիական մղոնի համար առջի աստիճանին մէջ կը

վճարուի	36—40	գարանդան
Բ. աստիճանին մէջ .	27—30	„
Գ. „ „ .	18—20	„

Գրեթէ ուրիշ տէրութեանց մէջ գտնուող ընկերութեանց գիներն ալ քիչ շատ աս ոտքի վրայ է: Եւ կամ աւելի դիւրին եղանակաւ ըսելու համար՝ ճեպընթաց (express) ըսուած շոգեկառքով ճամբորդութիւն ընողին ամէն մէկ ժամը՝

Ա. աստիճանին մէջ գրեթէ 5 ֆրանգ կու գայ.
Բ. „ „ „ 3 „ 75 սանդիմ:

Ծովու ու գետի վրայ շոգենաւով ճամբորդութիւնը շոգեկառքին համեմատութեամբ միշտ աժան է ու գրեթէ կէս գինը կու գայ, թէ որ ցամաքի ճամբորդութեան պէս՝ ժամերու եւ վայրկեաններու վրայ բաժնուելու ըլլայ:

Փարիզի ճամբայ. Պոլսէն Փարիզ երթալու համար երեք ճամբայ կայ: Առջինը՝ Մարսիլեայի վրայէն, ուր Պոլսէն ամէն շաբաթ Մեսաժըրի ընկերութեան շոգենաւը կ'ելլէ ու Բիրէոյ ու Մեսինա հանդիպելով, Մարսիլեա կը հասնի: Շոգենաւերը շատ գեղեցիկ են, կերակուրներն աղնիւ ու ծառայութիւնն ըստ բաւականին աղէկ:

Երկրորդը՝ Թրիեստի վրայէն, ուր որ նոյնպէս ամէն

շաբաթ Աւստրիական Լոյտի ընկերութեան շոգենաւ մը կ՚ելլէ. ճամբան հանդիպած տեղերն են Սիրա ու Գորֆու: Ասոր շոգենաւերն ալ գեղեցիկ են ու ամուր. Ծառայութիւնը շատ աղէկ ու նաւերուն արագընթացութեան վրայ ճամբորդը գոհ կրնայ ըլլալ:

Երրորդը Քէօսթէնճէի ու Դանուբ գետին վրայէն, որն որ հիմակու հիմայ ամենէն կարճն ու ամենէն զուարճալին է. ու կը բանի գարունէն մինչեւ աշուն, որչափ որ ջուրերուն վիճակը թոյլ կու տայ: Անոր համար մենք ալ մեր ճամբորդները շիտակ աս ճամբէն Փարիզ կը տանինք. բայց թող տալով որ տեղ տեղ հանդչին, ու միանգամայն Վիէննայէն չելած՝ հոն հասցընող կողմնական ճամբաներուն վրայ տեղեկութիւն տալով, որպէս զի ճամբորդը որն որ ուզէ, ան ընտրէ:

Ա.

ՊՈԼԻՍԷՆ ՎԻԷՆՆԱ

Պոլիսէն Դանուբի վրայէն գացող ճամբորդը պէտք է որ քանի մ՚ընկերութեան ձեռքէն անցնի. բայց ասիկայ իրեն նեղութիւն մը չէտար. որովհետեւ զանազան ընկերութիւնները մէջերնին դաշամբ միացած, ճամբորդին նկատմամբ՝ մէկ համարուած են. սակն ալ կամ մաս մաս եւ կամ ամբողջ կրնայ Պոլիսէն մինչեւ Վիէննա վճարել, թէ որ Լոյտի շոգենաւերով ճամբորդութիւն կ՚ընէ, որուն երթեւեկութեան ժամանակը Դանուբի ընկերութեան հետ կապուած է:

Կալացի վրայէն գացողը, մինչեւ Կալաց որ ընկերութեան նաւով որ կ՚ուզէ, կրնայ երթալ, եւ անկէ վեր կը գտնէ Դանուբի ընկերութեան շոգենաւը, որն որ ամէն շաբաթ երկու անգամ ճամբայ կ՚ելլէ: Մէկը կամաց կամաց գետին մէկ դին մէկալ դին եղած գլխաւոր տեղերը հանդիպելով, իսկ մէկալը՝ ճեպընթաց, քիչ տեղ ածուխ առնելու համար միայն կենալով, որոշուած օրերը Վիէննա կը հասնին: Ճեպընթացին մէջ կերակուրին սակն ալ ճամբու սակին հետ մէկտեղ վճարել կուտան, ու բոլոր ճամբուն գինը թէ դէպ ի վեր ջուրին դէմ ըլլայ ու թէ դէպ ի վար, մի եւ նոյն է ու անփոփոխ կը մնայ: Ասոր հակառակը՝ կամաց քալողին մէջ կերակուրը մէկտեղ ուտելու պարտաւորութիւն չկայ. ու միանգամայն դէպ ի վեր երթալու ատեն շատ ժամանակ կորսուելուն պատճառաւ, գինը՝ վար գալու գինէն գրեթէ % 10 նուազ է: Ուզողը կրնայ նաւուն վերնայարկին

վրայ անիւներուն մօտ գտնուած խցիկներն ալ (Cabinet) բռնել, որոնց մէջ շատ հանգիստ կ'ըլլայ. բայց ասիկայ միայն առջի աստիճան բռնողներուն համար է, միանգամայն բռնած առաջին աստիճանին գինէն ուրիշ, ասոր գինն ալ շատ պիտ'որ վճարէ: Ասոնց ամենուն գինը եւ շոգենաւերուն ելլելու եւ մտնելու օրերը տես ետեւի տախտակին մէջ:

Ինչպէս վերը ըսինք, (Տես. եր. 8.) Քէօսթէնճէի ճամբան առջինէն կարճ է, ու գարունէն սկսեալ՝ շաբաթը երկու հեղ Լոյտի ընկերութեան շոգենաւն անոր ու Պոլսոյ մէջ կը բանի, որն որ 18—20 ժամէն աւելի չիտեւեր: Աս ճամբով Պոլիսէն մինչեւ Վիեննա 118 ժամ ու 50 րոպէ, իսկ Վիեննայէն Պոլիս՝ 90 ժամ 30 րոպէ միայն կը տեւէ, ճամբան կեցած տեղերն ալ մէկտեղ համբելով, թէ որ ճամբորդն երթալու եւ գալու ատեն Վիեննայի ու Պազիաշի մէջ շոգեկառք նստի: Իսկ 28 ժամ 20 րոպէի տարբերութիւնը Չեռնավոտայի ու Պազիաշի մէջ շոգենաւուն ջուրին ընթացքէն վեր կամաց, ու ընթացքէն վար շուտ քալելէն է:

Քէօսթէնճէ՝ Սեւ ծովուն եզերքը բաց տեղ մըն է, ու դեռ նոր ըլլալուն՝ քաղաքն ալ օտարականաց համար ոչ պանդոկ կայ եւ ոչ ալ ուրիշ ուզածը գտնելու դիւրութիւն: Նոյնպէս է գրեթէ Չեռնավոտա Դանուբի եզերքը, որն որ Քէօսթէնճէի հետ շոգեկառքով կապուած է ու գրեթէ 2 ժամու ճամբայ է: Սեւ ծովին ու աս երկու անբնակ տեղերուն մէջ քաշած նեղութիւններուն հատուցումը կը գտնէ ճամբորդը Դանուբի ընկերութեան աղւոր զարդարուած ու ամէն երեւակայելի դիւրութիւններ ունեցող արագընթաց շոգենաւերուն մէջ, որոնք ճամբորդները վար վեր կը տանին, ու ջուրերը բարձր եղած ա-

տեն՝ առանց փոփոխութեան մինչեւ Փէշթ կ՚երթան ։ Ճամբորդն ատոնցմով Պազիաշ հասնելէն ետքը, որն որ Դանուբի եզերքը արեւելքէն եկողներուն համար հիմակու հիմա առջի շոգեկայարանն է, կրնայ իր ճամբան դէպ ի Վիէննա կամ շոգենաւով եւ կամ շոգեկառքով յառաջ վարել ։ Մինչեւ Պազիաշ տոմսակ ունեցողը՝ ազատ է որ ատրճանով որ կ՚ուզէ՝ անոր համաձայն նորէն տոմսակ առնելու. բայց թէ որ մէկը Պոլիսէն կամ Չեռնավոտայէն այնպէս տոմսակ առած է, որն որ միայն շոգենաւով երթալու համար կ՚արժէ, ան ատեն պէտք է որ Պազիաշէն վեր ալ շոգենաւով երթայ. իսկ անոր հակառակը եթէ այնպէս տոմսակ մ՚առած է, որն որ խառն տոմսակ կ՚ըսուի, որ կ՚ուզէ նէ՝ շոգենաւով, կ՚ուզէ նէ՝ շոգեկառքով երթայ, ան ատեն իր ձեռքն է ընտրութիւնը, միայն թէ աս խառն տոմսակները, որոնք Պոլիսէն մինչեւ Պազիաշ առջի ատրճան նստելու իրաւունք կու տային ու նոյն իրաւունքը կու տան եթէ դարձեալ շոգենաւ նստելու ըլլայ, շոգեկառքին մէջ երկրորդ ատրճանին համար զօրութիւն ունին ։ Բայց ով որ ատոր տարբերութիւնը կը վճարէ, կրնայ առջի ատրճանաւ ալ երթալ ։ Ոմանք գետեզերքին գեղեցկութիւնը վայելելու համար, որն որ միշտ կը փոփոխուի, կ՚ուզեն աւելի շոգենաւով երթալ, մանաւանդ գարնան ու ջուրին բարձրութեան ժամանակը, որն որ արտաքոյ կարգի զբօսալի բան է ։ Բայց երբեմն կը պատահի որ Չեռնավոտայի ու Պազիաշի մէջ, մանաւանդ Երկաթի դուռ ըսուած տեղը, ջուրի պակսութեան պատճառաւ, ճամբորդը նաեւ նաւէ նաւ փոխադրուի. եւ երբեմն ալ որոշեալ քիչ տեղ ցամաքի վրայէն հասարակ կառքով յառաջ երթայ ։ Ասոր համար ինք նոր ծախք մը չունի. բայց միշտ այսպիսի

դեպքերը ճամբորդին համար այնչափ հաճոյական չեն կրնար ըլլալ։

Ճամբորդին շատ դիւրութիւն է ճամբան ազատ ըլլալ ու չկապուիլ, որովհետեւ չիգիտեր որ գլուխն ինչ կրնայ գալ. անոր համար նայի որ առած տոմսակներուն մէջն ալ կամքին ազատութիւնն իրեն պահէ. այսինքն՝ այնպէս տոմսակ մ'առած ըլլայ, որուն զօրութեամբը, ուր որ կ'ուզէ՝ կարող ըլլայ մնալ, եւ երբ կ'ուզէ՝ յառաջ երթալ։ Աս տեսակ տոմսակները հասարակօրէն թուականը դրուած օրէն մէկ ամիս արժէք ունին. բայց կրնայ ըլլալ որ աւելի ալ ունենան, մանաւանդ՝ երբ որ առնուած տոմսակն երթալու եւ ետ դառնալու համար է, որուն գինն ալ միշտ աժան կ'ըլլայ։ Բայց չմոռնալու է որ հասած տեղը գտնուած ընկերութեան գործակալին կնիքը վրան կոխել տալու, որն որ տեղ տեղ կը պահանջեն։ Նոյն կարգն է նաեւ Եւրոպայի մէջ մէկ տեղէ մէկալ տեղ առնուած տոմսակներուն նկատմամբ։

Պոլիսէն Վիեննա աս ճամբով գալու ատեն շոգենաւին հանդիպած գլխաւոր կայարաններն ասոնք են.

Քէօսթէնճէ	Kustendje	Վիտին-Գալաֆաթ	Viddin-Calafat
Չեռնավոտա	Czernavoda		
Սիլիստրիա	Silistria	Ռատուճէվաց	Radujevatz
Օլթէնիցա	Oltenitza	Թուռն-Սէվէրին	Turn-Severin
Ռուսճուգ	Rustzuk		
Եէրկէօյ	Giurgevo	Օրշովա	Orsova
Շիշթով	Sistov	Տրէնգովա	Drencova
Թուռն-Մոկուրէլլօ	Turn-Mogurello	Պազիաշ	Basiasch
		Զէմլին	Semlin
Բիքէթ	Piquet	Փէշթ	Pest
Լօմ-փալանգա	Lom-Palanka	Վիեննա	Wien.

Շոգենաւն աս տեղերը այնչափ ատեն կը կենայ, որչափ որ ածուխ առնելու համար հարկաւոր է։ Աս միջոցին՝ ուզողը կրնայ քաղաքը տեսնել, նամակ ունի նէ՝ նամակատունը յանձնել. գրեթէ ամէն տեղ հեռագրատուն ալ կայ, այնպէս որ եթէ կ'ուզէ՝ կրնայ հեռագիր (Թելէկրաֆ) ալ քաշել։ Բայց քաղաքներուն մեծ մասին մէջ տեսնելու արժանի բան մը չկայ. ամէնն ալ քիչ շատ արեւելքի ուրիշ քաղաքներուն նման վիճակի մէջ են։ Փէշթ Հունգարացւոց մայրաքաղաքը միայն շատ գեղեցիկ է. անոր համար խորհուրդ կու տանք մեր ճամբորդին որ քիչ մը հոն հանգչի։

ՓԷՇԹ ՈՒ ՕՖԷՆ

Պանդոկ. Քէօնիկին ֆօն Էնկլանտ, Königin von England, կամրջէն վար. շատ աղէկ.

Էրցհերցօկ Շթեֆան, Erzherzog Stephan, կամրջէն վեր. շատ աղէկ.

Օդէլ տը լ'Էօրօփ, Hôtel de l'Europe, կամրջին դիմացը. աղէկ.

Քէօնիկ ֆօն Ունկառն, König von Ungarn, գործքի մարդիկներուն համար.

Եէկէրհօռն, Jägerhorn, աղէկ.

Բալադին Palatin, աղէկ.

Պրուք կասդհաուս, Bruck-Gasthaus, Օֆէնի մէջ։

Արճանոց ու լրագիր կարդալու համար ժողովատեղիներ չեն պակսիր, որոնց մեծ մասը փառաւոր ու ախորժական շինուած ու զարդարուած են։

Պանդոկներէն շոգեկառքին տեղը, ու անկէ պանդոկ գալու համար կառքեր կան։ Քաղքին մէջ հեռաւորութեան համեմատ երկու ձիով կառքին վարձքը՝ 1 ֆի-

որինէն մինչեւ 70 գարանդան է: Օմնիպիւս բռուած կառքերուն վարձքը 14 գարանդան է, թէ որ բեռ ունի՝ 18 գարանդան:

Եկեղեցի. Տասնուչորս հատ ուղղափառաց եկեղեցի կայ. որոնց մէջէն գեղեցիկներն ասոնք են: Մայր եկեղեցի Վերափոխման, Ս. Աննա, Քափուչիններուն եկեղեցին, եւ այլն:

Թատրոն եւ ուրիշ զուարճութեան տեղեր ալ շատ կան. որոնց անուններն ամէն պանդոկի մէջ կախուած կը գտնուին, ըլլալու խաղերուն, օրերուն ու ժամերուն ծանօթութեամբ մէկտեղ: Գլխաւոր պտըտելու տեղւոյն անունը Շդատվալտ (Stadtwald) կ'ըսուի ու շատ աղուոր է:

Փեշթ քաղաքը հարիւր տարի յառաջ խեղճ տեղ մըն էր. հիմա 131,700 բնակիչ ունի. որոնց մեծագոյն մասը Մաճառ է ու աղէկ առուտուր կ'ընէ: Ուսումնարաններն ու ազգային թանգարաններն ալ գէշ չեն. բաղնիք շատ կայ. գլխաւորաբար Օֆէն, որոնցմէ քանի մը հատը հին ատեն տաճիկներէն շինուած են: Փեշթի մէջ թատրոնին քով անուանի ճարտարապետէ մը շինուած Հրէից ժողովրդանոցը (Սինակոկա) երեւելի շէնքերէն մէկն է, որն որ հինգ տարեան մէջ լմնցաւ ու քաղքին մեծ զարդ եղաւ: Օֆէնին մէջ նաւ շինելու տեղն ալ տեսնելու արժանի բաներէն մէկն է:

ՓԵՇԹԷՆ ՎԻԷՆՆԱ

Փեշթէն Վիէննա երթալու համար օրը չորս, հինգ առիթ կայ: Ամառը՝ երկու հեղ շոգենաւ կ'ելլէ. իսկ ամառ ձմեռ՝ երեք անգամ շոգեկառք կ'ելլէ. ճեպընթաց շոգեկառքը՝ 6 ժամու, իսկ առտու իրիկուն ելող հասարակ շոգեկառքը՝ $9^1/_2$ ժամու մէջ կը հասնի: Ասոնց

ելլելու ժամերուն ու վճարելու սակին վրայ, տես ետեւի տախտակը։ Փեշթէն Վիեննա գալու ատենդ՝ ձախ կողմը, իսկ Վիեննայէն Փեշթ երթալու ատենդ՝ աջ կողմը նստէ, թէ որ Դանուբին տեսքը կ՚ուզես վայելել։ Այս ճամբուն մէջ գլխաւոր քաղաքներէն մէկն է Փրէզպուրկ, որուն որչափ որ կը մօտիկցուի, այնչափ աւելի շրջակայ դաշտերուն գեղեցկութիւնը ճամբորդին աչքն իրեն կը քաշէ։ Այս շոգեկառաց կայարանին անմիջապէս մօտը երկու կամարաշէն ստորերկրեայ անցք (Թունէլ) կայ, որն որ գրեթէ երկու րոպէ կը տեւէ։

ՎԻԷՆՆԱ

Վիեննա մտած ժամանակդ, կամ շոգեկառքին քով եւ կամ շոգենաւին մէջ մաքսի վերաբերեալ բաներուն վրայ հարցում կ՚ընդունիս. երբեմն ալ կը քննուիս. տես եր ես 1—2։

Պանդոկ. Շոգենաւէն կամ շոգեկառքէն դուրս ելածին պէս, ճամբորդին չորս կողմը կառապանները կ՚առնուն։ Ասոնցմէ շատերն որոշեալ պանդոկ մը կ՚ուզեն տանիլ, ճամբորդը շատ կը նեղեն, եւ աս կամ ան պանդոկը տեղ չկայ ըսելով, վերջապէս կամ ուզած տեղերնին կը տանին եւ կամ ասդին անդին շատ պտըտցնելով՝ աւելի վարձք կը պահանջեն։ Անոր համար ճամբորդն աս գիտնալով՝ պէտք չէ որ անոնց ամէն ըսածին հաւտայ, մինչեւ որ ինք անձամբ ուզած պանդոկին տիրոջը կամ դռնապանին հետ չխօսի ու բանը չիմանայ։ Քաղաքը կը բաժնուի բուն ներքին քաղաք ու արտաքին իր արուարձանները։ Բուն քաղքին մէջ եղած պանդոկները՝ տեսնելու արժանի բաներուն անմիջապէս քովն են. դուրսը արուարձաններն եղածները ասկէ 10—15 րոպէ հե-

ռու են: Քաղքին մէջ եղած պանդոկներուն երեւելի-ները հետեւեալներն են:

Օդէլ Մունշ, Hôtel Munsch, շատ աղէկ. բայց նոյնպէս գինն ալ:

Էրցհէրցոկ Գարլ, Erzherzog Karl, շատ աղէկ:

Օդէլ Մայսլ, Hôtel Meissl, շատ աղէկ: Երեքն ալ Քէռնթնէրշդրասսէ, Kärnthnerstrasse, բռուած փողոցին մէջ են:

Շթատ Ֆրանքֆուրդ, Stadt Frankfurt, Սայլէրկասսէ, Seilergasse, շատ աղէկ:

Մաչաքէրհոֆ, Matschakerhof, մի եւ նոյն տեղը, շատ աղէկ:

Գայզէրին ֆոն Էօսթէրրայհ, Kaiserin von Oesterreich, Վայպուրկկասսէ, Weihburggasse.

Վիլտէր ման, wilder Mann, Քէռնթնէրշթրասսէ, Kärnthnerstrasse.

Ռէօմիշէր Գայզէր, römischer Kaiser, Ռէննկասսէ, Renngasse.

Աս ութը պանդոկը մէկը մէկալէն մօտ քաղքին կենդրոնն են, եւ ամէն ալ աղէկ են:

Օդէլ Վանտլ, Hôtel Wandl, Ամ Բէդէր, am Peter, բարձր ու նեղ պզտիկ խցերով:

Շթատ Լոնտոն, Stadt London, Ֆլայշմարգդ, Fleischmarkt.

Ասոնք ամէնն ալ առջի կարգի պանդոկներ են: Երկրորդ կարգի պանդոկներուն կը վերաբերին:

Ունկարիշէ Գրոնէ, ungarische Krone, Հիմմէլփորթկասսէ, Himmelpfortgasse.

Վայսէր Վոլֆ, weisser Wolf, Ֆլայշմարգդ, Fleischmarkt.

Քէօնիկ ֆօն Ունկառն, König von Ungarn, Շուլէնշդրասսէ, Schulenstrasse.

Կոլտէնէր Շթէռն, goldener Stern, Ս. Ստեփանոսին քովը:

Արուարձաններուն մէջ ալ հետեւեալ մեծ պանդոկները կան:

Կոլտէնէս Լամ, goldenes Lamm, Լէօփոլտշդատ, Leopoldstadt, շատ աղէկ:

Վայսէս Ռօս, weisses Ross.

Նացիոնալ-Կաստհօֆ, National-Gasthof.

Շվարցէր Ատլէր, schwarzer Adler.

Օդէլ Շրէօտէր, Hôtel Schröder.

Ռուսիշէր Հօֆ, russischer Hof.

Կոլտէնէս Քրայց, goldenes Kreuz, Վիտըն, Wieden, աղէկ:

Կոլտէնէս Լամ, goldenes Lamm.

Ասոնք են գլխաւոր պանդոկներուն անունն ու տեղը. ուրիշ մնացածներուն վրայ չենք ուզեր գրել, որովհետեւ շատ երկայն կ'ըլլայ:

Սենեկաց գինը: Պանդոկաց կերակուրներուն ու սենեակներուն գնոյն վրայ որոշ բան մը գրել շատ դժուարին է. բայց ընթերցողներուն վեր ի վերոյ տեղեկութիւն մը տալու համար՝ կը ծանուցանենք, որ Վիէննա մեծ պանդոկներուն մէջ մէկ օրուան սենեկի չափաւոր վարձքը՝ առ նուազն 1 ֆիորին է. ճրագի համար՝ 50 գարանդան. կէս բաժին կաթով խահուէի համար հացով մէկ տեղ՝ 50 գարանդան: Պզտիկ պանդոկներուն մէջ աւելի նուազ գնով ալ կ'ըլլայ: Բայց սենեկին դաւիկոնը, ներքին զարդն ու փողոցի վրայ ըլլալն ալ գինը կ'աւելցընէ: Անոր համար ճամբորդը՝ որպէս զի վերջին օրը հա-

շիւը տեսնելով չպլպլի ու հանգիստ սրտով ճամբայ ելլէ, առջի իջած օրը կրնայ տեղեկանալ ու գնոյն վրայ խօսիլ: Իսկ կերակուրներուն գինը՝ կերողին ճաշակէն ու ախորժակէն կախում ունի, որուն համեմատ աղէկ ալ վճարել կու տան, եթէ ասոր առջեւն ալ առնելու համար ճամբորդը յառաջագոյն չիզգուշանար: Զգուշաւոր ու բանը գիտցող ճամբորդն ամէն տեղ ամէն բանին աղէկն ալ աժանն ալ կը գտնէ, ինչպէս փորձը կը ցուցընէ:

ՊԱՐԳԵՒ. Պարգեւ տալու սովորութիւնն աս է: Չորս, հինգ օր սենեակը մաքրող ու անկողինը շիտկող ծառային, սովորաբար 50 գարանդան կը տրուի. ութը օրուան համար 1 ֆիորին բաւական է: Սենեակը բացող ու հաշիւը բերող ծառային, թէ որ ծառայութիւն մ'ըրած է, օրինակի աղագաւ խահուէն եւ կամ ուրիշ բան բերած է, երեք, չորս օրուան համար 35 գարանդան, ութը օրուան համար 70 գարանդան կը տրուի: Թէ որ ամենեւին ծառայութիւն մ'ըրած չէ, բան մը տալ հարկ չկայ: Նոյնպէս իմացիր դռնապանին համար: Զգեստը մաքրողին օրը 20 գարանդան. քաղաքը տեղ մը խաւրելու համար 20 գարանդան, քաղքէն դուրս 35 գարանդան. կառքէն սենեակը կամ սենեկէն կառքը բան տանող բերող ծառային 20 մինչեւ 40 գարանդան՝ ըրած ծառայութեան համեմատ. սեղանի վրայ ծառայողին՝ ամէն անգամ հինգ, տասը գարանդան. գիշերը դուռը բացողին՝ ութը, տասը գարանդան բաւական է:

ԿԱՌՔ. Երկու կամ մէկ ձիով կառք՝ իւրաքանչիւր իր սեպհական թուովը ամէն մեծ հրապարակներուն ու գլխաւոր փողոցներուն մէջ հրամանին պատրաստ կը սպասէ: Որչափ ալ ստակինութեան կողմանէ մանրամասն ա-

անոնց վարձքին գինն որոշուած ու իւրաքանչիւր կառքին մէջ տպած թղթով կախուած է, ի վերայ այսր ամենայնի աղէկ է որ օտարականը ներս մտնելէն յառաջ գնոյն վրայ խօսի ու որոշէ։ Աս մասին մէջ Վիեննայի կառապանները շատ անուանի են, բայց միանգամայն ոստիկանութենէ շատ կը վախնան. բուն ծնեալ Վիեննացին իր քաղաքացի կառապանը կը ճանչնայ ու զինքը լռեցընելու եղանակը գիտէ։ Բայց օտարականին դէմ շատ անգամ աներես կ'ըլլան ու փուճ տեղը սակը կը քաշեն։ Այսպիսի առթի մէջ օտարականին բաւական է ըսելն որ սակդ չեմ տար. ոստիկանութեան թիւ 563 երթանք, հոն կ'ընդունիս։ Ասով ձեռքէն կ'ազատի։ Ոստիկանութենէն որոշուած գինն աս է։ Քաղքին ու արուարձաններուն մէջ երկու ձիով կառքին՝ առջի կէս ժամուն համար՝ 53 գարանգան, առջի ժամին համար՝ 1 ֆիորին 5 գարանգան կը վճարուի։ Մէկ ձիով կառքին ամէն մէկ քառորդը, թէ քալէ ու թէ կենայ, 21 գարանգան կը հաշուուի։ Գիշերը՝ որն որ ժամը 10էն մինչեւ երկրորդ օրը 7ին կը համարուի, կէս մ'ալ աւելի կը վճարուի։ Շոգեկառքի կայարանները գացողներն ալ իրենց որոշուած գինն ունին, որոնք տեղւոյն մերձաւորութեան ու հեռաւորութեան համեմատ իրարմէ կը տարբերին։

Նռանց թուոյ կառք ուզողը՝ կրնայ գտնել ու կէս օրուան համար կը վճարէ 4 ֆիորին, թէ որ քաղքին մէջ պիտ'որ պտըտի. քաղքէն դուրս՝ 5 ֆիորին, 1 ֆիորին ալ կառապանին պարգեւ։ Ամբողջ օրը կ'արժէ 8 ֆիորին, պարգեւ 2 ֆիորին։ Ընտանիք ունեցողներն աւելի կ'ընտրեն աս տեսակ կառքերը։ Քաղքին մէջէն մօտ ու հեռաւոր տեղեր գացող Օմնիպիւս ըսուած կառքերն ալ միշտ շարժման մէջ են, ամէն առեն կը հանդիպին, ու

քիչ սակով հեռու տեղեր կը տանին ու շատ հանգիստ են:

Շոգեկառաց կայարաններն ասոնք են:

Նորտպան, Nordbahn, Պայմ Բրաթերշդեռն, beim Praterstern.

Սիւտպան, Südbahn, Պելվետերլինիէ, vor der Belvederlinie.

Վեսդպան, Westbahn, Մարիահիլֆերլինիէ, vor der Mariahilferlinie.

Շոգենաւին տեղը՝ Դանուբի քով Ֆրանց Եօզէֆսթօր, vor dem Franz Josefsthore.

Նամակատան տեղը, Ֆլայշմարգդ, Fleischmarkt, թիւ 665, ժամը առտու 9էն մինչեւ իրիկունը 9ին բաց է: Ասդին անդին արուարձաններուն մէջն ալ կան. ու նամակ ձգելու համար ամէն գլխաւոր փողոցներուն մէջ ալ պզտիկ երկաթէ արկղիկներ ալ դրուած են:

Հեռագրի (Թելէկրաֆի) գլխաւոր տեղը քաղաքը Րէննկասսէ, Renngasse, թիւ 140 է: Ասդին անդին արուարձաններուն մէջն ալ կան:

ՎԻԷՆՆԱ

Աւստրիայի կայսերանիստ մայրաքաղաքը՝ ներքին քաղքին մէջ 55,000, իսկ դրսի 8 արուարձաններուն մէջ՝ 555,000 բնակիչ ունի: Իբր 12,000 բողոքական, 10,000 հրեայ, 800 յոյն, ու 150ի մօտ արեւելեան ու արեւմտեան հայ կայ. 20,000 պահապան զօրք ունի: Քաղքին մօտ գեղերուն բնակիչներովը մէկ տեղ, որոնք ամէն օր քաղքին հետ հաղորդակցութիւն ունին, բոլոր բնակչաց թիւը՝ 663,000էն աւելի է:

Մխիթարեան Միաբանութեան վանքը՝ հիմակուան

նոր թուագիրներուն համեմատ՝ Նայպաւ, Neubau, արուարձանին մէջ, Մէքիթարիսթէն կասսէ, Mechitharistengasse, թիւ 4 է։

Մայր եկեղեցին՝ Ս. Ստեփանոս, որն որ 1144ին շինուած եւ 1258ին ու 1404ին նորոգուած է, բուն քաղքին մէջտեղն է։ Ճարտարապետութիւնը Գոթացի ոճով ու ձեւը լատինական խաչի նման է։ Ամբողջ շէնքը մէկտեղ առնելով՝ որչափ որ ալ հնութեան ու հնոց ճաշակին պատիւ ընող մեծագործութիւն ունի, Իտալիայի հնութեանց պէս աչքն ու սիրտն իրեն քաշող զարմանագործութիւն մը չունի։ Սկզբնաբար երկու զանգակատուն պիտ՚որ ունենար, բայց մէկ հատը միայն լմնցած է։ Բարձր ու վեհ է, դրսէն եկող օտարականին աչքին ամէն բանէն յառաջ աս կը ներկայանայ, միանգամայն իր բարձրութեան համար՝ քաղքին ու մերձաւոր տեղերուն մէջ պատահած կրակի նշան տալու կը ծառայէ։ Ս. Ստեփանոսի զանգակատան բարձրութիւնը՝ 435$^{1}/_{2}$ ոտք է։ Աս եկեղեցւոյն տակ 30 ստորերկրեայ կամարաշէն շիրիմներ կան, որոնց մէջ կայսերական տնէն մեռեալներուն ընդերքը կը պահուին։

Ասկէ զատ քաղքին ու արուարձաններուն մէջ շատ եկեղեցիներ կան, որոնց մէջէն տեսնելու արժանի է քաղքին Գափուչիններուն պզտիկ եկեղեցին, որուն տակը կայսերական ընտանեաց մարմինները արծաթի դագաղներու մէջ կը պահուին։ — Օգոստինեանց եկեղեցին, ուր աս մեռեալներուն սիրտն արծաթի սափորներու մէջ կը պահուին։ Նոյն եկեղեցւոյ մէջ տեսնելու արժանի է Գանովա երեւելի արձանագործին Գարարայի մարմորէն շինած շիրիմը։ — Ս. Կարոլոսի եկեղեցին ու նորերս լմնցած Ալդլէրխէնֆէլտ, Altlerchenfeld, արուար-

ձանին ժողովրդապետական եկեղեցին, որուն թէ ճարտարապետութիւնն ու թէ վարպետ նկարիչներէն պատերուն վրայ քաշուած պատկերներուն գեղեցկութիւնը Իտալիայի եկեղեցիներուն հետ կրնայ համեմատուիլ։ — Բայց ասոնց ամէնը կ՚անցընէ Փրկիչ եկեղեցին, որն որ սկսաւ 1854ին ու դեռ կը շինուի, մարդասպանի ձեռքէն կայսեր հրաշալի կերպով ազատելուն յիշատակն անմահ ընելու համար։

Թատր եւ ուրիշ խաղի ու զբօսանքի տեղեր չեն պակսիր. իսկ սրճանոցաց թիւը՝ 400էն աւելի է, որոնցմէ ոմանք պարտեզի մէջ, ոմանք ալ տներու տակ են. ամառը առտու իրիկուն գրեթէ միշտ երաժշտութիւն ալ կը գտնուի պարտէզներու մէջ։

Կայսերական պալատին հրապարակին մէջ 1835ին վախճանած Փրանկիսկոս կայսեր արձանը կայ, որն որ Միլան անուանի Մարքէզէն ձուլած է։ Ասկէ դուրս՝ 1847ին մեռած նոյն կայսեր եղբօրը Կարոլոս Արքիդքսին ձիու վրայ արձանը, որն որ Վիէննա Փէռնքոռն արձանագործը շինած է, ու առջինէն աւելի համբաւ գտած է։ Նոյն պալատին հրապարակական գրատան առջեւը 1790ին վախճանած Յովսէփ կայսեր ձիու վրայ արձանը կայ, որն որ շատ նմանութիւն ունի Հռոմայի Անտոնինոսի արձանին հետ։

Թանգարաններն ու ասոնց նման բաները տեսնելու համար որոշեալ օրեր կան. ան օրերը գացողին՝ դուռը բաց է։ Ուրիշ օրեր ալ կրնայ բացուիլ, թէ որ մէկ հոգւոյ համար 35—50 գարանդան, ու ամբողջ ընտանեաց համար 1 ֆիորին պարգեւ տրուի։

1. Կայսերական գրատունը 1722ին շինուած է. մէջը 300,000 հատոր տպած ու 16,000 ձեռագիր կայ։

ժողովրդեան համար բաց է, ամէն առտու ժամը 9էն մինչեւ իրիկուան 6: Բայց Օգոստոսի մէջ կը գոցուի ու-ումնականաց հանգստեան ամիս ըլլալուն համար:

2. Թանգարան բնական գիտութեան՝ անմիջապէս գրատան քովն է, ու տեսնելու արժանի բաներէն մէկն է. ժողովրդեան համար բաց է ամէն հինգշաբթի օրը առտու ժամը 9էն մինչեւ կէսօրէն ետքը 2ին: Օգոստոս ամիսն աս ալ կը գոցուի:

3. Հանքային Թանգարանը նոյն պալատան մէջ, որն որ ըստ ամենայն մասանց կատարեալ է. ժողովրդեան համար բաց է ամէն չորեքշաբթի ու շաբաթ օրերը ժամը 10էն մինչեւ 1:

4. Գանձատունը, որն որ նոյնպէս մի եւ նոյն պալատան մէջն է, սանկ հաւաքածոյից մէջ ամենէն հարուստն է, ու շատ տեսնելու արժանի բաներ ունի, այնպէս որ ամէն բան աղէկ տեսնելու համար քանի մը ժամ հաղիւ կը բաւէ: Գանձատան տեսնելու արժանի բաներէն մէկն ալ 139½ կերատ փլորենտեան ադամանդն է: Ուրբաթ ու շաբաթ օրերը ժամը 10ին տոմսակովներս կը մտցուի, որն որ յառաջագոյն երկուշաբթի ու երեքշաբթի օրուընէ Գանձապետէն խնդրուած ու առնուած պիտ՚որ ըլլայ: Գանձատունը բոլոր ձմեռը գոց է:

5. Հնութեանց Թանգարանը՝ Հանքային Թանգարանին անմիջապէս քովն է. այսպիսի բաներով զուարճացող օտարականն ատոր մէջն ալ իր հետաքրքիր մտացը յագուրդ տալու շատ բաներ կը գտնէ: Ամէն երկուշաբթի ու ուրբաթ բաց է:

6. Պէլվէտէր. Ս. Ստեփանոսէն ոտքով կէս ժամ հեռու՝ Գաղղիական ախորժակաւ շինուած պարտէզի մը մէջ վերն ու վարը երկու մեծ շէնք է, որն որ 1724ին

Սաւոյայի Եւգինէոս իշխանը շինած է։ Վերի շէնքին մէջ պատկերներ կան, իսկ վարինին մէջ հնութիւններ, որն որ Ամպրազերի հաւաքածոյ կ'ըսուի։ Երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ժամը 10էն—4 բաց է։ Բայց ամբողջ Հոկտեմբեր ամիսն ու Ապրիլ 11էն մինչեւ 24 գոց է։

7. Զինատուն։ Աս զինանոցը Պելվէտեր պարտէզին վերի դռնէն ելլողին շատ մօտ է։ Հինգշաբթի օրը ժամը 8էն մինչեւ 12 ուզողը կրնայ երթալ, միայն թէ մտնելու համար յառաջագոյն պատերազմի պաշտօնէին կողմանէ տոմսակ մը առած ըլլայ։

8. Յօզէֆինում։ Մեղրամոմէ բնականին նմանցուցած մարդկային մարմնոյն ամէն մասերն առանձին առանձին դրուած է. որն որ բժշկական գիտութեան համար շատ օգտակար է։ Շաբաթ օրերը բաց է։

Ասոնցմէ զատ կան ուրիշ շատ հրապարակական ու առանձնական պատկերներու եւ գիտութեանց թանգարաններ եւ ուսումնարաններ. օրինակի աղագաւ Բազմարուեստեան գիտութեանց, Լիհդէնշթայն իշխանին պատկերաց թանգարանը, տէրութեան տպարանը, որն որ Եւրոպայի անուանիներէն մէկն է. կենդանեաց հիւանդանոցը, վաճառականաց ժողովատեղին, եւ այլն։

Պտըտելու տեղեր ու պարտէզներ։

1. Քաղքին մէջ անմիջապէս կայսերական պալատին ձախ կողմը Պուրկ կամ Գայզեր Կարդըն ըսուած պարտէզը ու անոր դիմացը Ֆոլգսկարդըն, այսինքն՝ ժողովրդեան պարտէզը. առջինին մէջ Մարիամ Թերեզիային ամուսնոյն Փրանկիսկոս Ա.ին ձիու վրայ արձանը կայ. երկրորդին մէջ Թեսէոսին տաճարը, որուն մէջի արձանը՝ անուանի Գանովային ամենէն երեւելի գործքերէն մէկն է։

2. Մաքսատան մօտ Վիէննա գետին երկու կողմը նորէրս շինուած Շթատբարք ըսուած պարտէզը, որուն երկու մասերը՝ երկաթի կամրջով մէկը մէկալին հետ կը կապուի։

3. Լէոբոլտշթատէն դուրս Բրադէր ըսուած ընդարձակ անտառը, ուր հազարաւոր կառք, ձիաւորք ու ոտանաւորք միշտ զանազան ուղղութեան մէջ կը շարժին։

4. Աւկարդէն, զոր որ Յովսէփ Բ. կայսրը ժողովրդեան դիւրութեան համար 1775ին շինած է. ճամբաները, անտառներն եւ ուրիշ ծաղիկ տնկուած ածուները Գալլիայի հին ախորժակաւ յօրինուած է։

5. Տնկաբանութեան պարտէզը, Պելվետէրի, Լիխտենշթայն ու Շվարցենպէրկ իշխաններուն պարտէզներն ալ քաղաքին մօտ են։

6. Շէօնպրուն, կայսեր ամառուան պալատը, Վիէննայէն ոտքով՝ 5 քառորդ, կառքով՝ կէս ժամ հեռու է. Մատաթիա կայսրը սկսած ու Մարիամ Թերեզիա կայսրուհին 1775ին լմնցուցած է։ Ասիկայ Վիէննայի պարտէզներուն թագաւորը կրնայ ըսուիլ, ու ամէն օր ժողովրդեան բաց է։ Պալատին տակէն դէպ ի պարտէզ դուրս ելածիդ պէս՝ աչքիդ առջեւն աղուոր տեսարան մը կ'ելլէ. երկու կողմը 32 հատ մարմարիոնէ շինուած արձաններ կան, մէջտեղը գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած եւ մէկը մէկալէն լայն ճամբաներով բաժնուած ածուները, գեղեցիկ ճարտարութեամբ շինուած աւազանի մը կը տանին, որուն ետեւը բլրակի վրայ՝ սիւներով զարդարուած տաճար մը (Գլօրիէթ) կայ, որն որ իբրեւ թագ՝ բոլոր պարտէզին վրայ կեցած է։ Պարտէզին երկու կողմը՝ շատրուաններ ու ընտանի կենդանեաց եւ վայրենի գազա-

նայ բնակարաններ ալ կան։ Քօլի ծաղկանոցին մէջն ալ հեռաւոր երկիրներու բոյսեր, այլեւայլ տեսակ ծաղիկներ ու տնկեր կը պահուին։

7. Լաքսէնպուրկ, նոյնպէս կայսեր ամառանոցն է, ու Վիէննայէն հասարակ կառօք 2½ ժամ, շոգեկառքով 3 քառորդ հեռու է։ Աս պարտէզին մէջն ալ շատ տեսնելու արժանի բաներ կան, ու շատ զուարճալի է, մանաւանդ անոր համար՝ որ լճանման ընդարձակ աւազանին մէջ պզտիկ գեղեցիկ շէնքերով զարդարուած կղզիներուն առջեւը նաւակներով վար վեր կրնայ պտըտուիլ. եւ ուզողը՝ կրնայ միանգամայն Թիակը ձեռք առնուլ ու իր նաւակն ինք վարել, թէ որ կ՚ուզէ քրտնիլ։

Ասոնցմէ զատ՝ օտարականը չիզղջար թէ որ Պրիւլ, Պրուն, Պատն, Հէլէնէնթալ, Գալէնպէրկ, Լէօբոլտսպէրկ, Տէօպլինկ, Տոռնպախ ու Հիցինկ այցելութիւն ընելու ըլլայ։ Վերջապէս մեր բարեկամ Ճամբորդին խորհուրդ կու տանք որ կայսերական Թատրոնը չտեսնած ու Շթրաուսի երաժշտութիւնը չլսած՝ Վիէննայէն չելլէ։

Վ Ի Է Ն Ն Ա Յ Է Ն   Թ Ր Ե Ս Տ

Վիէննայէն դէպ ի Փարիզ ճամբայ չելած՝ կ՚ուզենք հոս Վիէննայի ու Թրեստի մէջ եղած ճամբուն վրայ խօսիլ, որպէս զի, թէ որ մէկը ծովու վրայէն եկած է, կարող ըլլայ ճամբան գտնել ու առանց աշխատութեան յառաջ երթալ։

Վիէննայէն Թրեստ երթալու եւ Թրեստէն Վիէննա գալու համար ամէն օր երկու անգամ առտու իրի-

կուն հասարակ շոգեկառք կ'ելլէ ու 23 ժամու մէջ ճամբան կը կատարէ. ասկէ զատ՝ ճեպընթաց շոգեկառք ալ կայ, որն որ նոյն ճամբան շուրջ 15 ժամու մէջ կը կատարէ։ Ելլելու ժամերուն ու գիներուն վրայ տես Յաւելի տախտակը։

Այս ճամբուն մէջ ճամբորդին ուշադրութեան կը յանձնենք գլխաւորաբար Սէմմէրինկ ըսուած բարձր լեռը, որուն վրայէն շոգեկառքը բազմապտոյտ ճամբաներ ընելով՝ վեր կ'ելլէ եւ 13 հատ մեծ ու պզտիկ ստորերկրեայ ճամբաներէն (Թունէլներէն) անցնելէն ետեւ, դէպ ի վար Միւրցուշլակ կ'իջնայ։ Ինչ որ մարդկային հանճարը՝ երկաթուղւոյ ճարտարութեան մէջ հրաշքներ կրնայ գործել, աս լերան վրայ սքանչելի եղանակաւ ճամբորդին առջին կ'ելլեն։ Ասոնք աղէկ տեսնելու համար՝ Վիէննայէն Թրեստ երթալու ատենդ՝ կառաց մէջ ձախ կողմը, Թրեստէն Վիէննա գալու ատենդ՝ աջ կողմը նստէ։

Կրաց ու Լուպիանա քաղաքներն ալ գէշ չեն ու աս ճամբուն մէջ գլխաւոր կենալու տեղեր են։ Կրացի մէջ Էլէֆանդ, Elephant ըսուած պանդոկն ամէնէն աղէկն է. իսկ Լուպիանա՝ Փոստ, Post պանդոկը։ Կրացին շրջակայ տեղերը շատ աղուոր է ու օդը խիստ առողջ։ Շոգեկառքէն դուրս ելլել չուզողին՝ աւելի աղէկ է աս երկու քաղքին մէջ եղած ձորային ճամբով զուարճանալ, որն որ ամէն աչք բանալ գոցելուն փոխուելով, բնութեան նորանոր սքանչելիքը ճամբորդին առջեւը կը բերէ։ Բայց Ատելսպէրկի Այրը (grotta) աշխարհքիս մէջ մէկ հատիկ ըլլալուն համար, տեսնելու արժանի է, որն որ Թրեստէն հազիւ 31 ժամ հեռու է։

Թրեստ հասածիդ պէս՝ թէ առանձին կառք եւ

թէ Օբչինա— պատրաստ կը գտնես շոգեկառաց կայարանը, որն որ քաղքէն հազիւ 15 րոպէ հեռու է:

Պանդոկ. Օդէլ տը լա վիլ, Hôtel de la Ville, ծովու վրայ, շատ աղէկ:

Լոգանտա կրանտէ, Locanda grande, մէկ երեսը ծովու եւ մէկալ երեսը Ս. Պետրոսի հրապարակին վրայ, շատ աղէկ:

Վիգթորիա Օդէլ, Victoria Hôtel, աղէկ:

Օդէլ տը Ֆրանս, Hôtel de France, աղէկ:

Ալպերգօ Տանիէլ, Սանտ Վիրգ, եւ այլն:

Թրեստի Բրոսէգգօ ըսուած գինին ու խոզի ապուխտը շատ անուանի է:

Արճանոց, Թատր, տաք ու պաղ բաղնիք ուզողը կրնայ գտնել:

Թրեստի բնակչաց թիւը 80,000էն աւելի է, մեծ մասն օտարազգի են ու վաճառականութեան կը պատաղին: Աւստրիայի տէրութեան առաջին նաւահանգիստն ըլլալուն պատճառաւ, ասոր առուտուրն ալ, ուրիշ նաւահանգիստները նայելով, անոնցմէ աւելի է, որուն շատ օգնած է ու կ'օգնէ Լօյտի ընկերութիւնը:

Մա՛յր եկեղեցին Ս. Յուստոս կը կոչուի. կան ուրիշ եկեղեցիներ ալ, բայց Իտալիայի ուրիշ կողմերուն պէս ո՛չ այնչափ շատ են, ո՛չ ալ գեղեցիկ: Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնն ալ հոս նորաշէն եկեղեցի մը ունի, որուն կից է Վանատունը, ուր գիշեր ցորեկ տղաք կը սորվին:

Տեսնելու արժանի տեղերն են քաղքին մէջ Թէրճէսթէօ ըսուած մեծ շէնքը, որն որ հիմա սեղանաւորաց տան (Պորսայէ) տեղ ալ կը գործածուի. Մայր եկեղեցին, որուն մօտ է նաեւ բարձր լերան վրայ շինուած աշտա-

րակը։ Քաղքէն դուրս՝ Միրամար, կայսեր եղբօրը Մաքսիմիլեան Արքիդքսին պալատն ու պարտէզը. Ս. Անդրէաս ըսուած հրապարակական պտըտելու տեղը, ուր Լոյտի նաւ շինելու տեղն ալ կայ, որն որ մինչեւ հիմա եղածներուն մէջէն ամենէն աղէկն է։

Վենետիկ տեսնելով Իտալիայի ու Հելուետիայի վրայէն Փարիզ երթալու ճամբաներուն հեռաւորութեան ու գնոյն վրայ ընդհանուր ցանկին մէջ կը տեսնես։

Բ.

ՎԻԷՆՆԱՅԷՆ ՓԱՐԻԶ

Վիէննայէն Փարիզ կամ Փարիզէն Վիէննա շոգեկառքով շատ ճամբայ կայ, ուզողն ու գործք ունեցողը՝ կրնայ Փրակայի, Պոտէնպախի, Տրէզտայի, Լայփսիկի, Մակտէպուրկի, Պրաւնշվայկի, Հաննովէրի ու Գոլոնիայի վրայէն Փարիզ երթալ ու մի եւ նոյն ճամբով դառնալ։ Ուզողը կրնայ միանգամայն Գոլոնիայէն խոտորելով՝ Ախէնի, Պրիւսսէլի ու Գալէի վրայէն Լոնտոն ալ երթալ ու նոյն ճամբով ետ դառնալ։ Բայց աս ճամբաներն երկայն են. մենք ասոնց վրայ գրքիս ընդհանուր ցանկին մէջ կը խօսինք, եւ մեր ճամբորդը՝ 36 ժամ ու 5 րոպէ միայն տեւող կարճ ճամբէն Փարիզ կը տանինք, որն որ Լոնտոնի հետ ալ կապուած է։ Աս ճամբուն տեւողութիւնը 32 ժամ միայն է, թէ որ ասդին անդին կենալով կորսուած ատենը չհամրենք, ու Վէստպան ընկերութիւնը կը բանի։ Աս շոգեկառաց կայարանը Մարիահիլֆ ըսուած արուարձանէն դուրս Շէօնպրունի ճամբուն

վրայ է։ Առտու իրիկուն զանազան շոգեկառքներ կ'ելլեն, բայց Փարիզ տանող ճեպընթացը՝ օրը մէկ անգամ կ'ելլէ, ու հետեւեալ տեղերը հանդիպելով Փարիզ կը հասնի, այսինքն՝

Վիէննայէն		Շդուդկարդ	Stuttgart
Լինց	Linz	Միւլաքեր	Mühlacker
Լամպախ	Lambach	Պրուխսալ	Bruchsal
Սալցպուրկ	Salzburg	Քարլսրուհէ	Carlsruhe
Միւնիխ	München	Քէլ	Kehl
Աւկսպուրկ	Augsburg	Սդրասպուրկ	Strassburg
Ուլմ	Ulm	Փարիզ	Paris.

Ինչպէս բսինք, դարձն ալ նոյն կարգ ճամբով կ'ըլլայ։ Շոգեկառաց ելլելու ժամերուն ու վճարելու գիներուն վրայ, տես եաեւի տախտակը։ Կրնայ ըլլալ որ ճամբորդը վերը բսուած տեղերը տեսնելով ու հանդչելով ուզէ երթալ, անոր համար նոյն տեղերուն վրայ հոս համառօտիւ մէկիկ մէկիկ կը խօսինք։

ԼԻՆՑ

Վիէննայէն Լինց ճեպընթաց շոգեկառքով 4 ժամ 40 րոպէ կը տեւէ։

Պանդոկ. Էրցհերցոկ Գարլ, Erzherzog Carl, շատ աղէկ։

Կոլտէնէր Ատլէր, goldener Adler, շատ աղէկ։

Ռոթէր Գրէպս, rother Krebs, աղէկ։

Լամ, Lamm, Լէօվէ, Löwe, եւ այլն։

Լինց քաղաքը Դանուբի վրայ է, ունի 27,628 բնակիչ։ Վերին Աւստրիայի մայրաքաղաքն ըլլալով՝ առուտուրն ու օտարականաց յաճախութիւնը շատ է։ Եկեղեցիներն ու հրապարակական տեղերն ալ գէշ չեն։

գործելու ու աղէկ տեղեր ունի։ Տեսնելու բանն է 1863ին վախճանած Արքիդ. Մաքսիմիլեան դ'Էսդէին քաղքին բոլորտիքը շինած 32 հատ աշտարակները։

Լինցէն Լամպախ 55 բոպէ կը տեւէ. բայց աս տեղերը ճամբորդի համար մասնաւոր տեսնելու արժանի բան չկայ։

ՍԱԼՑՊՈՒՐԿ

Լամպախէն Սալցպուրկ 2 ժամ 22 բոպէ կը տեւէ ու դրսէն Աւստրիա մտնող ճամբորդին հոս մաքսի նկատմամբ հարցմունք ու քննութիւն կ'ըլլայ։

Պանդոկ. Տրայ Ալիիրդէ, drei Aliirte, կամրջին քովը, շատ աղէկ։

Կոլտէնէս Շիֆ, goldenes Schiff, աղէկ։

Էրցհերցոկ Կարլ, Erzherzog Carl, աղէկ։

Գրոնէ, Krone, աղէկ։

Մօր, Mohr, Հիրշ, Hirsch, Ռայդ, Rait, եւ այլն։

Թատր, սրճանոց, ասդին անդին երթալու կառքեր չեն պակսիր։

Սալցպուրկ Գերմանիայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է. մինչեւ 1803 եկեղեցական իշխանի մը տակն էր, անկէ ետքը աշխարհական իշխանութեան տակ մտաւ. նոյն միջոցին քանի մը անգամ իր տէրը փոխելէն ետքը՝ 1816ին Աւստրիայի ձեռքն անցաւ։ Բնակչաց թիւը 17,253 հոգի է. շէնքերէն շատերն իտալական ճաշակով շինուած են։ Եկեղեցի ու վանք շատ կայ։ Տեղւոյն գեղեցկութեան, օդին առողջութեան ու ժողովրդեան հանդարտութեան համար, Աւստրիայի իշխաններէն շատերն աս տեղս շատ կը սիրեն, ու կայսերական տնէն ալ, մանաւանդ ամառը մարդ պակաս չ'ըլլար։

ՄԻՒՆԻՔ

Սալցպուրկէն Միւնիք 4 ժամու եւ 35 րոպէի մէջ կը հասնուի: Միւնիք քաղաքը Պաւիերայի Թագաւորութեան մայրաքաղաքն է:

Պանդոկ. Ֆիր Եարէսցայդէն, vier Jahreszeiten, շատ աղէկ ու աժան:

Պայրիշէր Հոֆ, bairischer Hof, աղէկ:

Օդէլ Հաւարտ, Hôtel Havard.

Պլաուէ Դրաւպէ, blaue Traube, Լայնֆէլտէր, Leinfelder, եւ այլն:

Ուրիշ տեղերուն համեմատութեամբ, հոս թէ բնակութիւնն ու թէ կերակուրը աժան է:

Թատր, բաղնիք, հրապարակական պարտէզներ ալ քիչ չեն. բայց սրճանոց խիստ քիչ կայ, ան ալ նորերս սկսաւ:

Գիտնական թանգարաններու կողմանէ շատ հարուստ է, որոնք որոշուած օրերը ժողովրդեան համար բաց են. գլխաւորները հոս կը դնենք:

Հնութեանց սրահ, Antikensaal, ամէն օր ժամը 9էն մինչեւ 12:

Հնութիւն, Antiquarium, երկուշաբթի ու երեքշաբթի ժամը 9էն մինչեւ 11:

Պաւարիա, Bavaria, հսկայաձեւ արձանը. ամէն օր 10էն մինչեւ 12, եւ 2էն մինչեւ 4:

Գրատուն, Bibliothek, ամէն օր 10էն մինչեւ 1. պարգեւ 24 գարանդան:

Տնկաբանական պարտէզ, botanischer Garten, 8էն մինչեւ 6. կիրակի ու տօնի օրեր գոց է:

Մատուռ, Capelle, երկուշաբթի եւ ուրբաթ ժամը 10ին:

Հանդէսներու սրահ, Festsaalbau, երկուշաբթի ու հինգշաբթի, տոմսակով:

Կլիպդոթէք, Glyptothek, արձաններու հաւաքածոյք. երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, առտու ժամը 8էն մինչեւ 12. իրիկունը 2էն մինչեւ 4:

Ապակւոյ վրայ նկարելու գործարան, Glasmalerei-Anstalt, ամէն օր:

Արքունի թատր, Hof-Theater, երկուշաբթի ու շաբաթ, հրամանաւ:

Հնադրամներու հաւաքածոյք, Münz-Sammlung, ամէն օր 10էն մինչեւ 12:

Թանգարան բնական պատմութեան, Naturalien-Cabinet, շաբաթ, 10էն մինչեւ 11:

Պատկերներու հաւաքածոյք, Pinakothek, ամէն օր 9էն մինչեւ 3:

Խառն հաւաքածոյք, vereinigte Sammlungen, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, 9էն մինչեւ 1:

Մինիխ մայրաքաղաքը 135,000 բնակիչ ունի, որոնցմէ 16,000 միայն բողոքական է, ու 2000 զինուոր:

Քաղքին շէնքերուն նման Եւրոպայի ուրիշ կողմերը շատ չեն գտնուիր: Մինչեւ հիմա ծանօթցուած ճարտարաշինութեան ոճը հոս ամէնէն կատարեալ է, նոր շէնք մը չկայ, որուն վրայ ասոր ճշմարտութիւնը չտեսնուի: Քաղքին այսպէս շուտ յառաջանալուն պատճառը Լուդովիկոս թագաւորն եղած է, որն որ դեռ գահ չելած՝ Եւրոպայի հռչակաւոր արհեստաւորներն իր քովը ժողված էր: Մինիխ՝ բոլոր Գերմանիայի քաղաքներուն զարդն է, կրնայ ըսուիլ, եւ աս գովեստն իրաւամբ վերյիշեալ թագաւորին կ'երթայ. բայց օդն առողջարար չէ:

Հին եկեղեցիներուն մէջ անուանի է, Ս. Աստուա-

ծածնայ Մայր եկեղեցին, Frauenkirche, Ս. Միքայէլ, St. Michaels-Hofkirche, որն որ յառաջ Յիսուսեանց էր. Թէաթինեանց եկեղեցին, Theatinerkirche. Նորերուն մէջ՝ Աուէրքիրհէ, Auerkirche, ու Ս. Յովհաննէս, Johannis-Kirche. Ս. Լուդովիկոս, Ludwigskirche. Ամենայն սրբոց եկեղեցին, Allerheiligenkirche.

Վերջապէս աղուոր արձաններով եւ ուրիշ տեսնելու արժանի շատ բաներով աս սքանչելի նոր քաղքին հրապարակներն ու հրապարակական տեղերը զարդարուած են, այնպէս որ ամէնը տեսնելու համար անկէ անցնողն առ նուազն ութը օրուան կարօտութիւն ունի: Բայց Պաւարիա կամ Ռումսհալլէ ըսուած տեղն ու քաղքին գերեզմանատունը, Gottesacker, չտեսած քաղքէն ելլողը՝ կրնայ ըսել թէ Միւնիք գացի, բայց Միւնիք քաղաքը չտեսած՝ ճամբայ ելայ:

ԱՒԿՍՊՈՒՐԿ

Միւնիքէն Աւկսպուրկ 1 ժամու եւ 15 րոպէի մէջ կը հասնուի:

Պանդոկ. Տրայ Մորէն, drei Mohren, աղէկ:

Կոլտէնէ Դրաուպէ, goldene Traube, շատ աղէկ:

Վայսէս Լամ, weisses Lamm, աղէկ:

Տայչէս Հաուս, deutsches Haus, աղէկ:

Այզէնհուդ, Eisenhut, շատ աղէկ:

Բնակչաց թիւը 42,695 հոգւոյ կը հասնի, որոնց մէջէն հինգին երկուքը բողոքական է: Հոս ալ տեսնելու հնութիւններ կը գտնուին, բայց ուրիշ տեղ եղածներէն աւելորդութիւն մը չունենալուն համար՝ մէկիկ մէկիկ չենք ստորագրեր:

ՈՒԼՄ

Աւկսպուրկէն Ուլմ 1 ժամ 55 րոպէ կը տեւէ։ Բնակչաց թիւը 26,000էն աւելի չէ. բայց գեղեցկութեան կողմանէ Եւրոպայի ուրիշ քաղաքներէն վար չիյնար։

Պանդոկ. Ռուսիշէր Հոֆ, russischer Hof, շատ աղէկ։

Պատ-Բոստ, Bad-Post, աղէկ։

Գրոնբրինց, Kronprinz, շատ աղէկ։

Հիրշ, Hirsch, Պաումշդարգ, Baumstark, երկուքն ալ աղէկ։

Ուլմ՝ գերմանական դաշնակցութեան բերդաքաղաքներէն մէկն ըլլալով, շատ ծաղկած է ու կենդանութիւն ունի։

ՇԴՈՒԴԿԱՐԴ

Ուլմէն Շդուդկարդ 2 ժամու եւ 30 րոպէի մէջ կը հասնուի։ Շդուդկարդ Վիւրդէմպէրկի մայրաքաղաքն է ու 57,183 բնակիչ ունի, որոնցմէ 3000 միայն ուղղափառ է։

Պանդոկ. Օդէլ Մարգարտ, Hôtel Marquardt, աղէկ։

Օդէլ Ռուայալ, Hôtel Royal.

Բէթէրսպուրկէր Հոֆ, Petersburger Hof, աղէկ։

Հիրշ, Hirsch, Կրոսֆիւրստ, Grossfürst, Օդէլ Մունք, Hôtel Munk, եւ այլն։

Շդուդկարդին մէջ տեսնելու արժանի բան չկայ. բայց քաղքին դիրքին ու մաքրութեան պէս ուրիշ տեղ շատ չիգտնուիր։ Գինին գլխաւոր բերքն է։ Քէօնիկսշդրասսէ բռուած փողոցն իր լայնութեան ու երկու կողման փառաւոր շէնքերուն պատճառաւը շատ բանուկ ու

գեղեցիկ է։ Զբօսանաց ու դիտութեան պատաղողներն ալ իրենց յատուկ տեղերը կրնան գտնել։

ՍՏՐԱՍՊՈՒՐԿ

Շտուտկարդէն Միւլաքէր՝ 1 ժամ 10 րոպէ, անկէ ալ Ստրասպուրկ՝ 3 ժամ 52 րոպէ կը տեւէ։ Ասոնց մէջտեղը կ՚իյնայ Քէլ՝ շոգեկառաց կայարանը, ուր դրսէն Գաղղիա մտնողներուն մաքսի կողմանէ հարցմունք ու քննութիւն կ՚ըլլայ։ 1681էն յառաջ Ստրասպուրկ Գերմանիայի կը վերաբերէր, անկէ ետքը Լուդովիկոս չորեքտասաներորդին ատենը Գաղղիայի ձեռքն անցաւ. բնակչաց թիւը 79,000 է. շատ բերդեր ու ամրոցներ ունենալուն պատճառաւ՝ 6000էն աւելի պահապան զօրք կայ։ Բնակչաց կէսին կրօնը բողոքական է։

Պանդոկ. Շդատ Փարիզ, Stadt Paris, շատ աղէկ։

Ռոթէս հաուզ Rothes Haus.

Կոլտներ Աբֆել, Goldener Apfel.

Կառք, սրճանոց, թատր եւ ուրիշ դիւրութեան ու զբօսանաց վերաբերեալ տեղեր պակաս չեն։

ՓԱՐԻԶ

Ստրասպուրկէն Փարիզ 10 ժամու եւ 35 րոպէի մէջ կը հասնուի։ Փարիզի գլխաւոր պանդոկներուն անուններն ասոնք են։

Պանդոկ. Կրանդ-Օդէլ տիւ Լուվր. Grand Hôtel du Louvre քաղաքին կենդրոնն է, Փալէ ռուայալին դիմացը, Rue de Rivoli փողոցին մէջ։ 600 սենեակ ու 60 մեծ սրահ ունի. ամենուն ալ ներքին զարդն ու դիւրութեան վերաբերեալ ծառայութիւնը սքանչելի է։ Հասարակաց կերակուրն իրիկուան ժամը 6ին է. համեմատա-

բար գինն ալ շատ բարձր չէ. որը 12 ֆրանգ 50 սանդիմով չորրորդ դստիկոնին մէջ ու 15 ֆրանգով երրորդ դստիկոնին մէջ՝ ճամբորդը կրնայ ունենալ սենեակ մը, նախաճաշ, կերակուր, ճրագ ու կարեւոր ծառայութիւնը։

Կրանդ-Օդէլ, Grand Hôtel, 1862ին բացուած է Boulevard des Capucines. 700 սենեակ ու 70 մեծ ու ընդարձակ սրահ ունի։ Հասարակաց կերակուրին ժամանակը՝ իրիկուան 6ին է, ու 300 հոգի մէկտեղ սեղանի կրնան նստիլ։ Ասոր մէջն ալ ամէն երեւակայելի դիւրութիւն ու հանգստութիւն կը գտնուի։ Գինն ալ առջինէն վեր չէ։

Օդէլ տէ փրէնս, Hôtel des Princes, Թ. 27, Rue Richelieu, աղէկ։

Կրանդ-Օդէլ տ'Անկլթեր, Grand Hôtel d'Angleterre, Rue des Filles-Saint-Thomas, աղէկ։

Կրանդ-Օդէլ Մորիս, Grand Hôtel Maurice, Թ. 42, Rue de Rivoli.

Օդէլ տը Փարի, Hôtel de Paris, Թ. 111, Rue Richelieu.

Օդէլ Վակրամ, Hôtel Wagram, Թ. 28, Rue de Rivoli.

Կրանդ-Օդէլ տը Գասդիյլ, Grand Hôtel de Castille, Թ. 101, Rue Richelieu.

Օդէլ տը Վիլ, Hôtel de Ville.

Օդէլ տէզ-Էդրանժէ, Hôtel des Etrangers, Թ. 3, Rue Vivienne.

Կը յուսանք որ մեր ճամբորդն աս 10 գլխաւոր պանդոկներուն անունովը կը շատանայ, որովհետեւ անկարելի է Փարիզ գտնուած անհամար ու ամէն օր շինուելու վրայ ըլլող պանդոկներուն անունը մէկիկ մէկիկ

հոս անուանել կամ ստորագրել։ Բաւական ըլլայ գիտնալը թէ որչափ ալ հիւրերուն թիւը շատ ըլլայ, միշտ նոր եկողին տեղ չիպակսիր։

Արձանոցներուն, թատրոններուն, խաղի տեղերուն ու երթալու գալու համար պատրաստ կեցած կառքերուն վրայ խօսիլն աւելորդ է. Փարիզ՝ այսպիսի բաներուն մայրաքաղաքն է։

Փարիզի բնակչաց թիւը 1½ միլիոնի կը հասնի ու օր քան զօր աւելնալու վրայ է։ Կայսրութիւնը բոլոր Գաղղիայի, բայց առանձին Փարիզ քաղքին նոր շքեղութիւն ու նոր զօրութիւն տուաւ։ Փողոցներու մէջ՝ որ 2000էն աւելի է, գիշեր ցորեկ 70,000 կառաց մէկը մէկալէն ետեւէն անդադար երթալ գալը, ալեաց նման ժողովրդեան շարժիլը, աշխարհքիս ամէն կողմանէ ժողովուած հիւրերուն իւրաքանչիւր իր ազգին ու քաղքին զգեստովը քաղքին ամէն հրապարակական տեղերը տեսնուիլը, իրաւամբ աս քաղաքն իր սեռին մէջ մէկ հատիկ կ'ընէ։ Նոյ նահապետին տապանին նման է ըսողն ալ՝ աւելի բան մ'ըսած չըլլար, որովհետեւ պզտիկ Փարիզը՝ մեծ աշխարհքիս պատկերն է։ Փարիզի դիրքը գեղեցիկ է. մէջտեղէն վազած Սէն գետը քաղքին հոգին է, գեղեցկութենէ զատ՝ հաղորդակցութիւնը կը դիւրնցընէ ու օդը կը մաքրէ։

Փարիզի տեսնելու արժանի բաները։

Գաղղիական Ճեմարան, Académie française. Քառասուն անդամ ունի, ամէն մէկ անդամը տարին 1200 ֆրանգ կ'ընդունի. Նիստերնին ամէն հինգշաբթի օրերը ժամը 2էն մինչեւ 4 կը տեւէ։ Նոյեմբերէն ետքը մինչեւ Ս. Լուդովիկոսի օրը երեքշաբթի օրերն ալ կ'ըլլայ։ Տա-

րեկան Հրապարակական նիստը՝ Օգոստոս ամսոյն 9ին է: Աս ճեմարանը տարին մէկ անգամ 1500ական փրանգ պարգեւ կը բաշխէ, նախ՝ ան աղքատ Գաղղիացւոյն, որն որ տարւոյն ընթացքին մէջ շինութիւն տեւող առաքինական գործ մ'ըրած է. երկրորդ՝ ան Գաղղիացւոյն, որն որ օգտակար բարոյական գիրք մը շինած է: Ասոնցմէ զատ՝ Գաղղիայի պատմութեան վրայ աղէկ կտոր մ'ալ գրողն անվարձ չ'ելլեր:

Կայսերական ճեմարան, Académie impériale. Նոյնպէս 40 անդամ ունի ու նիստն ուրբաթ օրերը 3էն մինչեւ 5 է: Հանդիսական նիստն ամէն տարի Յուլիսի մէջն է: Աս ալ նոյնպէս բարի վախճաններու համար դրամագլուխ ունի, ու արդիւնաւորողը 1500 փրանգէն վար չ'առնուր:

Գիտութեանց ճեմարան, Académie des sciences. Նիստը երկուշաբթի օրերը 3էն մինչեւ 5 է: Տարեկան հանդիսաւոր նիստը Յունիս ամսոյն առջի երկուշաբթի օրն է: Ասոր պարգեւաբաշխութիւնը 3000 փրանգ է:

Ազատական արհեստից ճեմարան, Académie des beaux arts. Նիստը՝ Հոկտեմբերի առջի շաբաթ օրն է:

Ասոնցմէ զատ կան ուրիշ շատ ճեմարաններ, ինչպէս Բարոյական ու քաղաքական գիտութեանց ճեմարան, Académie des sciences morales et politiques. Կայսերական ճեմարան բժշկութեան, Académie impériale de médecine, եւ այլն, եւ այլն:

Վարժարանք: Collége de France, Գամպրէ ըսուած հրապարակին մէջն է, 1520ին շինուած: Քսան'ութը հռչակաւոր ուսուցիչ ունի, որոնք ամէն տեսակ ուսում, գիտութիւն, արեւմտեան ու արեւելեան լեզուներ կը սորվեցընեն. աշկերտներուն թիւը 7000էն աւելի է, ու-

րոնք յօժարած ուսումնին ծրի կը սորվին: — Collége Bonaparte, Collége Stanislas, Collége Rollin, Collége Sainte-Barbe. Ասոնք ամէնն ալ շատ երեւելի ու ընտիր են:

Conservatoire des arts et métiers. Աս մեծագործ շէնքին մէջ երկրագործութեան ու ամէն տեսակ ճարտարարուեստից վերաբերեալ գիտութեանց մեքենաներուն կաղապարները կը պահուին: Ամէն կիրակի ու հինգշաբթի օրերը ժամը 10էն մինչեւ 4 բաց է. բայց 1 ֆրանգ պարգեւ տուողն ամէն օր ալ կրնայ մտնել:

Դպրոցք, Écoles. Փարիզի մէջ շատ դպրոցներ կան, որոնք զատ զատ գիտութիւն կը սորվեցընեն, համառօտութեան համար գլխաւորներուն միայն անունները կը դնենք. École de médecine, École de droit, École de pharmacie, École de polytechnique, École des beaux arts, École impériale des mines, École militaire.

Վարժոց. Lycée Louis-le-Grand, Թ. 123, Saint-Jacques փողոցին մէջ:

Lycée Napoléon, Թ. 23, Glovis փողոցին մէջ:

Lycée Saint-Louis, Թ. 94, Rue de la Harpe.

Lycée Charlemagne, Թ. 12, Saint Antoine փողոցին մէջ:

Թանգարանք: Տասուերեք հատ երեւելի թանգարաններ կան, որոնցմէ գլխաւորներն ասոնք են:

1. Musée des tableaux. Աս թանգարանը Լուվրի ժողովածոյից (Կալըրիէն) մէջն է, եւ մէջը գտնուած պատկերները՝ Գաղղիացի, Իտալացի, Գերմանացի ու Հոլանտացի վարպետ գրիչներէն նկարուած պատկերներ են: Սրահին երկայնութիւնը՝ 432, լայնութիւնը՝ 10 մետր է, որն որ տեսնողը կը զմայլեցընէ:

2. Musée de l'école française. Աս Թանգարանին մէջ եղած պատկերներուն բոլորն ալ Գաղղիացի գրիչներու գործքն է:

3. Musée des antiques. Ասոր մէջ 808 հատէն աւելի Յոյն ու Հռոմայեցի ճարտար արձանագործներու քանդակներ կան: Ասոնցմէ զատ՝ Լուվրի Թանգարանը կայ, որն որ ուզուած ժամանակը կրնայ տեսնուիլ, ու մէջը շատ ճարտարարուեստ բաներ կան:

Մատենադարանք, Bibliothèques. Փարիզի մէջ շատ երեւելի մատենադարաններ կան, որոնց գլխաւորները հետեւեալներն են:

1. Կայսերական մատենադարան, Bibliothèque impériale, Ռիշլիէօ փողոցին մէջ Թիւ 58. ամէն օր ժամը 10էն մինչեւ 3 բաց է. 700,000 հատոր տպած գիրք ու 70,000 ձեռագիր մատեան ունի. իսկ պատկերի պէս տպած բաներուն Թիւը 2,000,000 կ'անցնի:

2. Bibliothèque de l'arsenal, Սիւլի փողոցին մէջ, 200,000 հատոր տպած ու իբր 8000 ձեռագիր ունի: Ժամը 10էն մինչեւ 2 բաց է:

3. Bibliothèque de Sainte-Geneviève, Փանթէոն անուանուած հրապարակին մէջ, ունի 150,000 հատոր տպած ու 3000 ձեռագիր մատեան: Ժամը 10էն մինչեւ 3 բաց է:

4. Bibliothèque Mazarine, Թ. 23. Քոնդ բռուած գետեզերքին քով, ունի 150,000 տպած ու 4500 ձեռագիր: Հինգշաբթիէն զատ ամէն օր ժողովրդեան համար բաց է:

Ասոնցմէ զատ կան նաեւ Bibliothèque de la ville — Bibliothèque du jardin des plantes — Bibliothèque de la Sorbonne — Bibliothèque de l'école de médecine

— Bibliothèque du conservatoire des arts et métiers. Թիւ 292, Saint Martin.

Կամարք յաղթութեան, Arcs de triomphe. Աս հետեւեալ չորս հոյակապ յաղթութեան կամարները Գաղղիացի ազգին փառաց ու պարծանաց նշանն է։

1. Arc de triomphe du Carrousel. Ասիկայ Թիւիլրիի պալատան հրապարակին առջեւի կողմը կ'իյնայ ու 1806ին շինուած է։ Երկու ճակատին զարդը երեք կամարն է ու ութը հատ կորնթացի ձեւով տնկուած սիւներ, որոնց ամէն մէկուն վրայ մէյմէկ հեծելազօրի արձան կայ։

2. Arc de triomphe de la porte S. Denis. Աս կամարը 1672ին Փարիզ քաղաքն ի պատիւ Լուդովիկոս ԺԴ.ին շինած է. քառասունուիրեք մէդր բարձրութիւն ունի. ու լայնութիւնն ալ բարձրութեան համեմատ։

3. Arc de triomphe de la porte S. Martin. Նոյնպէս Փարիզ քաղաքն ի պատիւ վերյիշեալ թագաւորին շինած է ու շատ գեղեցիկ է։

4. Arc de triomphe de l'Étoile, 1806ին շինուած է Գաղղիացի զօրաց անունն անմահացընելու համար։ Ասոնցմէ զատ՝ շինուած են ու միօրինակ շինուելու վրայ են աս կարգի մէջ նորանոր զարմանալի բաներ։

Սիւներ։ Colonne de Juillet. Աս պղնձէ սիւնը Յուլիսի յեղափոխութեան յիշատակն է, զորն որ յեղափոխականք կանգնեցին մեռնողներուն անունը վրան գրելով՝ յիշատակնին անմահ ընելու համար։ Պղնձէ շինուած 210 աստիճաններով սեան վրայ կ'ելլուի. ուստի բոլոր շրջակայ տեղերուն ազատ տեսքը՝ նոյնպէս աչքին աղուոր տեսարան մը կ'ընծայեցուցանէ։ Ասկէ զատ անուանի է նաեւ Colonne de la place Vendôme բսուած սիւնը, որն որ Փարիզ եղած յիշատակաց արժանի բաներուն մէկն է,

եւ 1806ին կանգնուած է, Գաղղիացւոց անյաղթ բանակին նոյն ժամանակներն ըրած քաջութիւններուն յիշատակը միշտ կենդանի պահելու համար: Բարձրութիւնը 43 մետր է, տրամագիծը՝ 4 մետր. վրան 276 պատերազմի յիշատակարաններ քանդակուած են ու սեան գլուխը Ա. Նաբոլէոնին արձանը կայ:

Աղբիւր. Fontaine du Châtelet, 1807ին շինուած. Fontaine de Grenelle, 1739ին շինուած. Fontaine du Château d'Eau, 1811ին շինուած: Կան ուրիշ շատ աղբիւրներ ալ, որոնց ամէնն ալ մէկը մէկալէն զարդարուն ու վարպետութեամբ շինուած բաներ են:

Եկեղեցի: Փարիզ աղուոր ու ճաշակաւոր եկեղեցիներ շատ կան: Ամէնուն վրայ մէկիկ մէկիկ խօսիլն անկարելի ըլլալով, գլխաւորներն յառաջ բերենք:

1. Եկեղեցի Մ. Մագդաղենացւոյ, Église de la Madeleine, ամէնէն գեղեցիկ ու ամէնէն հոյակապն է:

2. Եկեղեցի վերափոխման, Église de l'Assomption, 1670ին շինուած է:

3. Եկեղեցի Ս. Լուդովիկոսի, Église Saint-Louis.

4. Եկեղեցի Ս. Փիլիպպոսի, Église Saint-Philippe.

5. Եկեղեցի Ս. Ռոքոսի, Église Saint-Roch.

6. Եկեղեցի Ս. Աստուածածնի Լորէթոյի, Notre-Dame de Lorette.

7. Ս. Աստուածածին, Notre-Dame. Այս մայր եկեղեցին 1010ին Ռոպէր Թագաւորին ատենը շինուած է. ձեւը լատինական խաչի նման, երկայնութիւնը 138 մետր, լայնութիւնը 50, ու բարձրութիւնը 34 մետր է: Երկու զանգակատուն ունի. որոնց բարձրութիւնը 68 մետր է, ու 389 աստիճանով վրանին կ'ելլուի: Հարաւային կողմի զանգակատան մէջի զանգակին ծանրութիւնը՝ 16,000

քիլօկրամ է ու թանձրութիւնը 20 սանդիմէդր: Զանգակին միայն լեզուն 488 քիլօկրամ կը կշռէ: Եկեղեցւոյն մէջի կողմն եղած զարդերը 16երորդ դարուն քրիստոնէից ունեցած ճաշակին սքանչելի ցոյցն են:

Ասոնցմէ զատ կան ուրիշ փառաւոր եկեղեցիներ, զորոնք փնտռողը կրնայ դիւրութեամբ գտնել:

Պալատ: Պալատներուն մէջ երեւելի են կայսեր բնակած Թիւիլրի ըսուած պալատը, Լուվրի պալատը, որուն 10 թագաւորք աշխատած են ու հազիւ հիմա 300 տարի ետքը լմըննալու վրայ է: Լիւքսանպուրի պալատը, որն որ 1612ին շինուած է: Փալէ րուայալ ըսուած գեղեցիկ պալատը, որն որ 1642ին շինուած է ու Փարիզի անուանի պալատներէն մէկն է, որուն տակը վարձքի տրուած փառաւոր խանութներն ու սրճանոցները տարին 2 միլիոն ֆրանգ կը բերեն:

Հիւանդանոց. L'Hôtel-Dieu, մէջը 1500 հիւանդաց համար անկողին կայ: Hôpital de la pitié, 624 անկողին կայ: Hôpital de la charité, 500 անկողին ունի: Ասոնցմէ զատ կան ուրիշ շատ հիւանդանոցներ, որոնց մաքրութիւնն ու խնամով հոգացողութիւնը՝ Գաղղիացւոց ազգին մարդասէր ըլլալուն նշան է:

Հրապարակական շէնքեր. Hôtel de Ville, Կրէվ հրապարակին մէջն է: Ձեւն ու ճարտարութիւնն անմիջապէս Իտալացւոց ճաշակը կը յիշեցընէ, 1605ին Փրանկիսկոս Թագաւորին ժամանակն սկսաւ: Ժամացուցին հարստութեան նման աշխարհքիս մէջ չիգտնուիր: Վերջի ատենները՝ տեղւոյն անձկութեան համար հարկաւոր եղաւ որ շէնքն ընդարձակուի, եւ ան աստիճան նորոգութիւններ ընդունեցաւ, որ չէ թէ միայն Փարիզի, այլ բոլոր Եւրոպայի ամենէն երեւելի շէնքերէն մէկն եղաւ:

Hôtel des Invalides, Լուդովիկոս ԺԴ.ին հրամանաւը 1670ին սկսաւ խեղ ու ծեր զինուորները հոն ժողվելու համար: Փարիզի սքանչելի շէնքերէն մէկն է: Ունի առանձին աղուոր եկեղեցի մը, որուն մէջ թաղուած է նաեւ Նաբոլէոն Ա.ին մարմինը: Գաղղիացւոց փառաւոր ազգին պատերազմող հոգին գրգռելու համար հարկաւոր եղած ամէն պարծանաց ու փառաց նշաններ ու դրօշներ հոս կատարեալ կը գտնուին: Յաղթութեանց լուրերն ալ՝ ասկից կը տրուին. մինչեւ որ աս տեղաց թնդանօթներուն որոտումը Փարիզի բնակչաց ականջը չհնչեր, վառվռուն հոգինին չհանդչիր: Նաբոլէոնին շիրիմը ժողովրդեան բաց է, ամէն հինգշաբթի օրերը ժամը 11էն մինչեւ 4:

Արտաքին գործոց պաշտօնէին պալատն ալ, որն որ Օրդէրլէյի փողոցին մէջն է ու բոլորովին նորէն շինուած է, տեսնելու բան է:

Imprimerie impériale. Աս կայսերական տպարանն ուզողը կրնայ տեսնել ամէն հինգշաբթի օրերը, ժամը 2ին. բայց պէտք է յառաջագոյն տպարանապետէն թուղթ մ'առնուլ:

Պարտէզ. Le jardin des plantes. Աս պարտէզն իր սեռին մէջ Եւրոպայի պարտէզներուն ամենէն աղէկն է. ու 1626ին սկսած է. մէջը շատ աղուոր ճեմելու համար ճամբաներ կայ, եւ նորահնար ճաշակաւոր բաներով ու դրսէն ժողվուած հազուագիւտ տնկերով ու ծաղիկներով զարդարուած է: Ծաղկանոցներուն մէջ ամառ ձմեռ կլիմայի չդիմացող տնկեր կը պահուին, ու կրնայ զըլուցուիլ որ աշխարհքիս ամէն կողմը բուսնող առանձնական տնկերը, հոս ամբողջ կը գտնուին, բժշկական գիտութիւնը յառաջ տանելու համար: Պարտէզին մէկ

կողմը օտար երկիրներու կենդանիները պահելու համար ալ տեղեր շինուած են։ — Le jardin des Tuileries. Համանուն կայսերական պալատին առջեւն է։ Աս պարտէզն ալ՝ նոյնպէս ճաշակ ունեցողները՝ իր սեռին մէջ մէկ հատիկ կը համարին։ Մէջը չորս շատրուան կայ, 1000էն աւելի Թաղարի մէջ նարընջի ծառեր, ու ճարտարութեամբ գործուած անհամար արձաններ բոլոր պարտէզին զարդն են։ Ասոնցմէ զատ կան ուրիշ շատ աղուոր պարտէզներ ալ։

Հրապարակ։ Փարիզի մէջ այսօրուան օրս 90էն աւելի հրապարակ կայ, որոնց գլխաւորներն ասոնք են։

1. Place de la Concorde. Թիւիլրի պալատէն հեռու չէ, խիստ գեղեցիկ է եւ շատ ալ տեսնելու բաներ ունի։

2. Place du Carrousel, նոյնպէս վերըյիշեալ պալատան առջեւի կողմը կ'իյնայ։

3. Place Vendôme, եւ այլն, եւ այլն։

Կամուրջ։ Սէն գետին երկու եզերքը մէկը մէկալին հետ կապելու համար 21 կամուրջ կայ, որոնց մէջն ալ ճաշակով շինուած տեսնելու արժանի շատ բաներ կը գտնուին։ Բայց ամենէն աւելի նորն ու գեղեցիկը Pont du Carrousel ըսուածն է, իսկ ամենէն աւելի բանուկը՝ Dauphine ըսուած փողոցը հանող Նոր կամուրջն է։

Պարիէր, Barrières. Փարիզ քաղքին արուարձաններուն ծայրը՝ ներս մտնելու համար 27 հատ դռներ կայ, ուր մաքսի վերաբերեալ բաներ ներս բերողներէն տուրք կ'առնուն։ Ասոնց ամէնն ալ գրեթէ շատ գեղեցիկ ու զարդարուն շինուած են։

Գերեզմաննոց։ Cimetière Montmartre, Փարիզի հիւսիսային կողմը։ Աս չորս կողմը պատով գոցուած գե-

րեզմանատան մէջ շատ աղուոր ու վարպետ յիշատակարաններ կան ։ Ասկէ զատ կայ Cimetière du Père Lachaise, Օնի արուարձանին դուրսը Պուլվարին վրայ։ Ասիկայ առջինէն շատ աւելի աղէկ ու անուանի է։

Թատրոնի ու աս կարգի վերաբերած բաներու վրայ խօսիլն աւելորդ է, որովհետեւ այսպիսի բաներուն բուն տեղը Փարիզ է։ Ամէն հիւր իր քմացն ու ճաշակին համաձայն զբօսանքի ու զուարճութեան տեղ կրնայ գտնել։ Հարկ չկայ որ ցորեկը միայն պտըտի, թէ որ կրնայ հսկել ու անքուն մնալ, գիշերն ալ Փարիզի համար ցորեկ է։ Նոյնպէս աւելորդ է տեղէ տեղ երթալու գալու վրայ խօսիլ. թէ հասարակ առանձնական կառաց ու թէ հասարակաց համար Օմնիպիւս ըսուած կառաց երթեւեկութիւնը գրեթէ գիշեր ցորեկ չիդադրիր, ու եղանակը գիտցողը՝ բոլոր օրը քիչ ստակով կրնայ ուզած կողմը պտըտիլ։ Միայն փողոցները քարայատակ չըլլալուն համար, որն որ մեծ անպատշաճութիւն է, օդը թաց եղած ատեն՝ շատ ցեխ, չոր եղած ատեն՝ շատ փոշի կը հանէ։ Մօտաւոր գեղերու հետ հաղորդակցութիւնը պահելու համար ամէն ժամ շոգեկառք կ՚ելլէ, ստակն ալ շատ չէ։ Փարիզին բոլոր շրջանակը գրեթէ 30էն աւելի պզտիկ քաղաքներ ու գեղեր կան, ուր ժողովուրդն ամառը կ՚անցընէ։ Գլխաւորներն ասոնք են, Belleville, Fontainebleau, ուր կայսրը կ՚երթայ. Saint-Cloud, Saint-Denis, Saint-Germain, Versaille, Vincennes, եւ այլ։

ՓԱՐԻԶԷՆ ԼԻՈՆ ՈՒ ՄԱՐՍԻԼԻԱ

Փարիզէն Լիոն ու Մարսիլիա երթալու համար ամէն օր հասարակ ասդին անդին հանդիպող ու կեցող շոգեկառքներէն զատ՝ Express ըսուած ճեպընթաց շոգե-

կառք ալ կայ, որն որ օրը երկու հեղ կ'ելլէ։ Նոյնն իմանալու է նաեւ Մարսիլեայէն ու Լիոնէն Փարիզ գալու համար։

Փարիզէն Լիոն ճեպընթացը 11 ժամ կը տեւէ, իսկ Փարիզէն Մարսիլիա 19 ժամ 30 րոպէ։ Ասոնց ելլելու ժամանակն ու վճարելու գինը տես ետեւի տախտակին մէջ։

Լիոն կեցող ճամբորդին կրնանք յանձնել աս պանդոկները։

Պանդոկ. Կրանդ-Օդէլ տը Լիոն, Grand Hôtel de Lyon, շատ աղէկ։

Օդէլ Պօքի, Hôtel Beauquis, շատ աղէկ։

Օդէլ տիւ Նոր, Hôtel du Nord, աղէկ։

Օդէլ տը Միլան, Hôtel de Milan, աղէկ։

Օդէլ տը Փարի, Hôtel de Paris, շատ աղէկ։

Ասոնցմէ զատ՝ կան ուրիշ շատ պանդոկներ ալ, որոնք մէկը մէկալէն աղէկ ու գեղեցիկ են։

Լիոն՝ Փարիզէն ետքը տէրութեան առջի քաղաքն է ու 200,000էն աւելի բնակիչ ունի, որոնց մեծագոյն մասին գործքը մետաքսի առուտուրն է։ Ունի շատ հրապարակներ, մարդասիրական շէնքեր, արուեստից գործատուններ, եկեղեցիներ եւ ուսումնական տեղեր։ Հոս է նաեւ Վաճառ փորձման հաստատոց ըրուած Լիոնի հռչակաւոր ընկերութիւնը, որն որ աս վախճանին համար տարիէ տարի հաւատացեալներէն 5 միլիոն ֆրանգի չափ ստակ կը ժողվէ, ու աշխարհքիս ամէն կողմը գտնուող Առաքելութեանց կ'օգնէ, որոնք կամ անհաւատից եւ կամ հռոմէական չեղող տէրութեանց երկիրը քարոզութիւն կ'ընեն։

Մարսիլեայի գլխաւոր պանդոկներուն անուններն ասոնք են։

Պանդոկ. Կրանդ-Օդէլ տէզ անբրէօր, Grand Hôtel des Empereurs, դիրքը գեղեցիկ ու Գամպէտիէր փողոցին վրայ է: Սուրհանդակարանի, շոգենաւերու եւ շոգեկառքերու մօտ ըլլալուն համար ալ ճամբորդին շատ դիւրութիւն կու տայ: Կերակուրն ու ամէն ծառայութիւնը ճիշդ ու մաքուր, ամէն լեզուի թարգման ալ կայ:

Կրանդ-Օդէլ տիւ Լուվր, Grand Hôtel du Louvre, նոյնպէս վերը բռուած տեղերէն հեռու չէ ու շատ աղէկ է:

Կրանդ-Օդէլ տը Լ'Իւնիվէր, Grand Hôtel de l'Univers, շատ աղէկ:

Կրանդ-Օդէլ տէզ Անպասատէօր, Grand Hôtel des Ambassadeurs.

Նոյնպէս հոս ալ ճամբորդին դիւրութեան համար բան մը չիպակսիր:

Մարսիլեայի բնակչաց թիւը 175,000 է: Աս քաղաքը Գաղղիայի վաճառականութեան առջի քաղաքներէն մէկն է ու միշտ ծաղկելու վրայ է. շատ եկեղեցիներ, աղուոր շէնքեր ու գործատուններ ալ ունի:

ՓԱՐԻԶԷՆ ՊՐԻԽՍԷԼ

Փարիզէն Պրիւսէլ ճեպընթաց շոգեկառքը 7 ժամու եւ 35 րոպէի մէջ կը հասնի. իսկ հասարակը 13 ժամ կը տեւէ:

Պանդոկ. Օդէլ տը Պէլվիւ, Hôtel de Bellevue, շատ աղէկ:

Օդէլ տը Ֆլանտր, տը Լ'Էօրոփ, Hôtel de Flandre, de l'Europe.

Օդէլ տը Սիւէտ, Hôtel de Suède.

Օդէլ տը Սաքս, Hôtel de Saxe.

Օդէլ տը Պրապան, Hôtel de Brabant.

Ասոնց ամէնն ալ աղէկ պանդոկներ են։ Ասոնցմէ զատ կան ուրիշ պանդոկներ, սրճարաններ ալ, եւ այլն։

Պրիւսէլ Բէլգիայի մայրաքաղաքը՝ Եւրոպայի ամենագեղեցիկ քաղաքներէն մէկն է. 240,000 բնակիչ ունի ու լեզուն գաղղիերէն է։ Քաղքին մէջ տեսնելու շատ փառաւոր շէնքեր կան, որոնց երեւելիներն են արքունական պալատը, համալսարանը, խորհրդարանը, արքունական թատրը։ Ունի նաեւ շատ գործատուններ ու աղուոր եկեղեցիներ. որոնց մէջէն ամենէն փառաւորը Սրբուհի Կուդուլ ըսուած Մայր եկեղեցին է։ Ասոնցմէ զատ մեծամեծ հրապարակներ ու արուեստով շինուած գեղեցիկ աղբիւրներ քաղքին մեծ զարդ կու տան։

Գ.

ՓԱՐԻԶԷՆ ԼՈՆՏՈՆ

Փարիզէն Լոնտոն երթալու համար կարճ ու դիւրին ճամբան է Գալէի վրայէն Տուվր անցնիլ։ Նեղուցին անցքը 1 ժամ 45 րոպէէն աւելի չտեւեր. ուստի ընդամէնը Փարիզէն Լոնտոն աս ճամբով 10—11 ժամ միայն կը տեւէ։ Պարզ երթալու եւ կամ պարզ գալու համար առնուած տոմսակները շաբաթ մը կ'արժեն, բայց երթալու գալու համար առնուածները՝ ամիս մը արժէք ունին ու գինն ալ աժան է։ Ուրիշ երկայն ճամբով, մանաւանդ Թէմս գետին վրայէն գացողներն աւելի աժան ալ կրնան երթալ։ Գիները տես ետեւի տախտակին մէջ։ Ամէն մարդ գիտէ որ Անգղիացիք բնութեամբ ու սովորութեամբ ուրիշ ազգերէն շատ կը տարբերին. անոր հա-

մար կը յանձնենք մեր ճամբորդներուն, որ աս հետեւեալ մանաւոր տեղեկութիւններուն միտ դնեն։

Լեզու. Ստակ. Ժամանակ. Անցագիր. Մաքս։

Լեզու. Անգղիա ճամբորդութիւն ընողին գրեթէ անհրաժեշտ հարկաւոր է գոնէ քիչ մը վեր ի վերոյ անգղիերէն գիտնալ։ Ամենեւին բան չգիտնալը կրնայ ճամբորդին շփոթութիւն պատճառել, թէ որ վարպետորդի խաբեբայի մը ձեռք իյնայ. Լոնտոնի մէջ շուրջ 15,000 հոգի սովորաբար գողութենէ կ՚ապրին, ասոնք՝ գրեթէ նոյնչափ ալ իրենց խեռ ու թափառական աշկերտներն ունին։ Ուստի թէ որ հարկ ըլլայ բան մը հարցընել, ամէն մարդուն մի հարցըներ, ֆոլիսմէն ըսուած ոստիկանութեան մարդիկներուն հարցուր, որոնք ամէն քայլ կը գտնուին աս անզգամաց դէմ օտարականները պաշտպանելու համար։ Խանութպանի մ՚ալ կրնաս հարցընել, բայց խորհուրդ չենք տար, որ ամէն խանութպանի ինք զինքդ հաւտաս։

Ստակ. Անգղիա օտար ստակ այնչափ դիւրութեամբ չանցնիր. իրենք իրենց Pound Sterling, Shilling ու Penny (Յոգն. Pence) ստակները կը ճանչնան ու սիրով կ՚ընդունին։ Բայց Պոլսոյ բնակիչներուն՝ Եւրոպայի ամէն կողմանց ստակները ծանօթ ըլլալով, չենք կարծեր որ ասոր վրայ հարկաւոր ըլլայ խօսիլ։ Այսչափ միայն կ՚ըսենք որ հետդ առած Սդէրլիններդ՝ հոն կենալու օրերեդ շատ ըլլան, քիչ չըլլան։

Լոնտոն տեսնելու գացողին՝ Ապրիլ, Մայիս, Յունիս ու Յուլիս ամիսներն ուրիշ ամիսներէն յարմար են, որովհետեւ նոյն ամիսները խորհրդանոցը բաց ըլլալով՝ պատգամաւորաց ներկայութիւնը քաղքին հոգի կուտայ, միանգամայն նոյն ամիսները այնչափ մշուշ չ՚ըլլար։

Անգղիա մտնելու ելլելու համար անցագրի հարկաւորութիւն չկայ. բայց քովդ անցագիր մ'ունենալը միշտ աղէկ է. մանաւանդ երբ որ տեղ մ'երթաս ու բան մ'ուզես տեսնել, առոլ կրնաս օտարական ըլլալդ ցուցընել ու դիւրութեամբ ներս մտնել: Ճամբորդին հետը մէկտեղ առածին սովորաբար մաքս չկայ, միայն թէ խմելիք ու կէս ֆունտէն աւելի սիկար չունենայ:

Պանդոկ: Թէ որ գիշերը Լոնտոն կը հասնիս, լաւագոյն կ'ընես եթէ մինչեւ առտու շոգեկառաց կայարանին մօտ պանդոկներէն մէկուն մէջ անցընես: Անոնց մէջ աղէկներն ասոնք են: Թէրմինըս Օդէլ, Terminus Hotel. Լընտըն-պրիճ-ռէյլուէյ London-bridge-railway, մեծ ու նոր կայարանին մօտ: Պրիճ Հաուզ Օդէլ, Bridge House Hotel.

Աս միայն գիտնալու է որ Լոնտոնի սենեակներուն գինը՝ դատիկոնին, գիրքին ու ներքին զարդերուն համեմատ կը չափուի: Գիշերը միայն քնանալու համար բռնուած սենեկին գինը՝ ցորեկն ալ նստելու համար բռնուած սենեկի գինէն տարբեր է: Ընդհանրապէս Լոնտոնի պանդոկներն Եւրոպայի ուրիշ տեղերուն նայելով՝ սուղ են, թէեւ Անգղիացւոց այնպէս չ'երեւար: Առջի կարգի պանդոկները քաղքին Ուէսդէնտ Westend ըսուած կողմը կը գտնուին, թէպէտ եւ ասոնք շատ աղէկ են, բայց հարուստները միայն կրնան իջնալ: Անուններն ասոնք են:

1. Քլէրիճս Օդէլ, Claridge's Hotel, Թ. 42, Brook-street. Լոնտոնի առջի պանդոկն է, ծառայութիւնն ու ամէն բան շատ աղէկ, ու սովորաբար իշխանազունք կ'իջնան:

2. Պրիթիշ Օդէլ, British Hotel, Թ. 82, Jermyn-street ըսուած տեղը:

3. Ուաղէրլու Օդէլ, Waterloo Hotel, Թ. 85, մի եւ նոյն տեղը։

4. Պրընսուիք Օդէլ, Brunswick Hotel, աս ալ մի եւ նոյն տեղն է, բայց յառաջագոյն ծանուցանելու եւ սենեակ որոշելու է։

5. Գօգսիս Օդէլ, Cox's Hotel, Թ. 55, եւ Ֆէնդընս Օդէլ, Fenton's Hotel, Թ. 63, St. James's-street բռնուած տեղը։

6. Լընկս Օդէլ, Long's Hotel ու Սդիվնս Օդէլ, Stevens Hotel, Թ. 181, New Bond բռնուած տեղը։

7. Կրօսվէնըր Օդէլ, Grosvenor Hotel, նոր ու ազնիւ, Victoria-stationին մօտ։

8. Ֆարրանսիս Օդէլ, Farrance's Hotel, Թ. 11, Belgrave-street բռնուած տեղը։

9. Ֆըրտս Օդէլ, Ford's Hotel, Թ. 127, Brook-street բռնուած տեղը։

10. Թըմմըս Գըլլընէտ Օդէլ, Thomas Collonade Hotel, Թ. 20—24, Charles-street բռնուած տեղը։

Ասոնք բոլոր առջի կարգի պանդոկներ են. երկրորդ-կարգիններն հետեւեալներն են, որոնց գինն ալ առջիններէն աժան է։

11. Գիզըրս Օդէլ Րօյալ, Keyser's Hotel Royal. Neu Bridge-street բռնուած տեղը։

12. Անտէրդընս Օդէլ, Anderton's Hotel, Թ. 162, Fleet-streetին մէջ։

13. Գըթիտրըլ Օդէլ, Cathedral Hotel. Թ. 48 St. Paul's Church-yard բռնուած տեղ։

14. Քլէյնս Օդէլ, Klein's Hotel, Թիւ 38, Սէյտս Օդէլ, Seyd's Hotel, Թ. 36 Finsbury-square բռնուած տեղը։

15. Լընտըն Քօֆֆի Հաուզ Էնտ Ֆէմիլի Օթէլ, London Coffee House and Family Hotel. Ludgate hill բռնուած տեղ։

Ասոնցմէ զատ Լոնտոն քաղաքը հարիւրաւոր պանդոկներ կան, որոնք ամէն թաղի մէջ կը գտնուին, որոնց վրայ մէկիկ մէկիկ գրել անկարելի բան է. շատ է՝ որ մեր ճամբորդները գլխաւորներէն մէկ քանի հատը գիտնան, ասոնցմէ զատ ուզած տեղն ալ գտնելու համար դիւրութիւն չիպակսիր։ Բայց երկայն ատեն Լոնտոն կենալ ուզողն աղէկ կ'ընէ ու շատ աժան կ'ելլէ թէ որ մասնաւորաց քովը բնակելու ըլլայ։

Կերակուր ուտելու առանձին տեղեր, սրճատուններ, թատրոններ եւ ուրիշ ինչ որ Եւրոպայի ուրիշ կողմերը կայ, հոս ամէնն ալ առաւելութեամբ կրնայ ճամբորդը գտնել, միայն թէ կրկին սղութեամբ. շատ տեղ ալ կերակուրները չվարժող քմաց ու ստամոքսի անտանելի են։ Բայց միսերնին շատ աղէկ է, մանաւանդ երբ որ քիչ մը աւելի եփած կ'ըլլայ, ու արեան գոյնը կորսնցընէ։ Ընդհանրապէս կերակրոյ տեսակին կարօտութիւն չիքաշեր ճամբորդը, ինչու որ խոնաւ ցամաքէն զատ, մերձաւոր ծովն ալ առատութեամբ ամէն կարեւոր եղած բաները կը մատակարարէ։ Տեղւոյն վարժ ըլլողը չափաւոր ստըկով փորն ալ աղէկ կը կշտացընէ. բայց ուր որ սովորաբար կերակուրներն արծաթէ ափսէիւ կու գան, հոն քսակը պարապ ու փորն անօթի կ'ելլէ։ Գինին թէ սուղ է եւ թէ քիչ. աղէկը ձեռք բերելու համար՝ պէտք է որ քրտնիս։

ԼՈՆՏՈՆ

Լոնտոն քաղաքը կաւային երկիր ունեցող բլրակի վրայ շինուած է, որուն մէջէն Թէմս գետը կ'անցնի։ Քա-

ղաքն երկու կը բաժնուի, Սիթի (City) ու Ուեսթէնտ (Westend). Սիթին՝ քաղքին հին մասն է, ուր հիմա միայն առուտուրի գործողութիւններ կ'ըլլայ: Ուեստէնտ ետեւէ ետեւ աճած ու աճելու վրայ եղած մասն է, ուր թագուհւոյն, մեծամեծաց ու բոլոր քաղաքացւոց բնակութիւնը կայ:

Թեմս գետին ձախ կողմի եզերքը՝ նաւ, մեքենաներ եւ ուրիշ բաներ շինելու գործատուններով լեցուն է: Բնակչաց թիւը 2.803,034 կը հաշուի, որն որ ամէն օր աճելու վրայ է. 25,000 դերձակ, 30,000 կօշկակար, 45,000 զարդ շինող ու 180,000 ծառայութիւն ընողներ կան: Քաղաքը 100,000 փողոց ունի, որոնց մէջ մարդիկ կը վխտան ու կառքեր ասդին անդին կը վազեն. 360,000 կազի լապտեր աս փողոցները կը լուսաւորեն: Աս համառօտ ստորագրութենէն Լոնտոն քաղքին ինչ հրէշ ու ինչ աստիճանի մեծ ըլլալը կրնայ երեւակայուիլ, բայց կատարեալ չըմբռնուիր:

Լոնտոն քաղաքն աղէկ տեսնելու համար առնուազն երեք չորս շաբաթ պէտք է: Հետեւեալ օրերուն բաժանումը կրնայ ծառայել ամենէն աւելի տեսնելու արժանի բաներուն այցելութիւն ընելու համար:

Ա. օր. Քաղքին վրայ ծանօթութիւն մ'ունենալու համար կառքով պտըտիլ. այսինքն՝ Hyde park corner ըսուած տեղը, ուր որ կառաց բազմութիւն կը գտնուի, Օմնիպիւս ելլել ու կառապանին քովը նստելով անցած տեղերուն վրայ անկէ տեղեկութիւն առնուլ, որով գրեթէ մէկ օրուան մէջ չափաւոր գաղափար մը կ'ունեցուի քաղքին վրայ: Ասոր շատ կ'օգնէ նաեւ քաղքին ճիշդ յատակագիծը ունենալ:

Բ. օր. Ս. Պօղոսի եկեղեցին տեսնել, որն որ Լոն-

տունի մայր եկեղեցին է ու Սիդի ըսուած մասին մէջ բլրակի մը վրայ շինուած է։ Հռոմի Ս. Պետրոսի եկեղեցւոյն շատ նման է, բայց անկէ շատ պզտիկ։ Լապտերին վրայ եղած խաչին ծանրութիւնը 3360 ֆունտ է։

Գ. օր. Ս. Բարթողիմէոսի հիւանդանոցը, որուն դրամագլխոյն տարեկան մուտքն է 30,000 ստէրլին, ու տարին 88,000 հիւանդ կը հոգայ։ Անկէ զատ կան ուրիշ հիւանդանոցներ ալ։

Դ. օր. Ս. Ստեփանոս, Պանքօ, Պօրսա, Պարքլէի գարեջուր շինելու գործատունն ու Guildhall ու Mansion House ըսուած տեղերը։

Ե. օր. Լումայանոց, Tower, Trinity House ու Lambeth Palace.

Զ. օր. Նաւահանգիստը, դօքերը, Թէմս գետին Թունէլն ու ձկնարանը։

Է. օր. London-bridge ըսուած տեղը տեսնել ու Թայմզ լրագրին տպարանին այցելութիւն ընել։

Ը. օր. Տաճարն ու New Record office.

Թ. օր. Trafalgar Square, Northumberland House, Society of arts եւ Waterloo-bridge.

Ժ. օր. The National Gallery տեսնել, որուն մէջ շատ աղուոր պատկերներ կան։

ԺԱ. օր. Somerset House, St. Clements Danes, Royal College of Surgeons, Soane Museum, Convent-garden market.

ԺԲ. օր. Whitehall, Museum of United service Institution, East-India Museum.

ԺԳ. օր. Խորհրդարանոցի շէնքը, Westminster Hall ու Westminster Abbey.

ԺԴ. օր. National Portrait Gallery, South-Ken-

sington Museum, Hyde-Park ու շրջակայ տեղերը տեսնել։

ԺԵ. օր. Հայտ-Բարգ եղած առանձնական պալատները տեսնել։

ԺԶ. օր. St. James's Palace ու Park, Museum of Geology, St. James's Church ու Buckingham Palace տեսնել։

ԺԷ. օր. British Museum.

ԺԸ. օր. Regents-Park եւ քովն եղած տնկոց ու ծաղկանց պարտէզը։

ԺԹ. օր. Greenwich ու Woolwich.

Ի. օր. Sydenham բռնուած տեղն եղած ապակեղէն պալատը։

ԻԱ. օր. Hampton Court, Richmond ու Kew.

ԻԲ. օր. Dulwich.

ԻԳ. օր. Windsor ու Eton.

Ըս ամէն վերը բռնուած տեղերը տեսնելու համար օրեր ու ժամեր սահմանուած են, որոնք ուզողը՝ ուր որ ըլլայ՝ պանդոկի մէջ կախուած թղթերուն ու լրագիրներուն մէջ կրնայ գտնել։ Նոյնպէս կրնայ գտնել կառքերուն վարձքը, շոգենաւներուն ու շոգեկառքերուն մտնելու ելլելու ժամանակը, երթալու տեղերուն հեռաւորութիւնն ու անոնց գիները, որոնց վրայ մէկիկ մէկիկ գրել՝ տեղւոյս անձկութիւնը չներեր։ Տեսնելու բաներուն մէկն ալ խորհրդանոցն է, որն որ գարունն ու ամառը բաց է, եւ առանց տոմսակի մտնելու համար շաբաթ իրիկունը ժամը 10էն մինչեւ 4 կրնայ երթըցուիլ։

Ի հարկէ՝ Լոնտոն գացողը կ'ուզէ հետը տունն ալ յիշատակ մը բերել. անոր համար քանի մ'երեւելի խանութներուն անուններն ու տեղերն ալ հոս կը դնենք։

Կազմած գիրք կամ Ալպոմ կ՚ուզես նէ, գնա *Bedford*, Blue anchor-yard, York-str., Westminster; *Rivière*, 196 Piccadilly; *Holloway*, 25 Bedford-street, Coventgarden; *Zaehnsdorf*, 30 Bridges-str., Coventgarden.

Թէ որ ներկ կ՚ուզես գնել, գնա *Ackermann*, 191 Regent-str.; *Newman*, 24 Soho-square; *Rowney*, 51, 52 Rathbone-place; *Windsor* et *Newton*, 38, 39 Rathbone-place; *Droosten and Allen*, 126 Strand.

Քիմիական գործիքներու համար գնա *Griffin*, 119 Bunhill-row; *Horne et Thornwaite*, 121 Newgate-str.

Վիրաբուժական գործիքներու համար, *Weiss*, Strand.

Սիկարի համար, *Ries*, 102 Strand; *Carreras*, Prince's-Street, Leicester-square; *Fribourg*, Haymarket.

Ապակի ու յախճապակեայ բաներու համար, *Chamberlain et Comp.*, 155 New Bond-street; *Copeland*, 160 New Bond-street; *Mortlock*, 18 Regent-street; *Phillips et Comp.*, 358 Oxford-street.

Արծաթի, ոսկի գործուածներու եւ ազնիւ քարերու համար, *Emmanuel*, 70 Brook street, Hanover-square; *Gass et Cp.*, 166 Regent-street; *Garrard et Cp.* (միայն արծաթի բաներ), 25 Haymarket; *Hancock*, 38 Bruton-street.

Ձեռքնոց ուզողը կրնայ երթալ, *Piver*, 160 Regent-street; *Redmayne*, 20 New Oxford-street; *Wrentmore*, 250 Regent-street.

Կտրոցի վերաբերեալ բաներ ուզողը, *Aspley*, 166 New Bond-street; *Holzapfel et Comp.*, 64 Charing Cross; *Lund*, 23 Fleet-street; *Mappin Brothers*, 67 King William-street.

Նորաձեւ (մօտա) բաներ կը ծախէ *Hitchcock et Rogers*, St. Paul's churd-yard; *Lewes et Allenby*, Silk-mercer, 193, 195 Regent-street; *Marshall et Snellgrove*, 150, 151 Oxford-street; *Redmayne*, 20 New Bond-street; *Shoolbred et Comp.*, 151—156 Tottenham Court-road.

Հեռագիտական գործիքներ, այսինքն դիտակ, աչքնոց եւ ասոնց նման բաներու համար են, *Elliotts*, 30 Strand; *Dallmeyer*, 19 Bloomsbury-street; *Horne et Thornthwaite*, 121 Newgate-street; *Negretti et Zambra*, 59 Cornhill; *Çollagham*, 23ª New Bond-street.

Հովանոցի համար, *Sangster*, 94 Fleet-street, 140 Regent-street, 75 Cheapside.

Պներձակի համար, *Blamey*, 62 Charing Cross; *Doudney*, 170 New Bond-street; *Hamilton*, 105 Strand; *Miles*, 68 Bond-street.

Կօշկակար (արանց համար), *Beyer*, 184 Regent-street; *Bowley*, 53 Charing Cross; *Castle*, 28 1/2 Poultry; *Harbord*, 2 Cheapside. (կանանց համար), *Bird*, 86 Oxford-street; *Gundry et Son* (to the queen), 1 Soho-square; *Hubert*, 292 Regent-street.

Ժամացոյց գնելու համար, *Bennett*, 64, 65 Cheapside ու 62 Cornhill; *Benson*, 33, 34 Ludgate-hill; *Frodsham*, 94 Strand.

Վերջապէս ինչ որ մինչեւ հիմա Լոնտոնի վրայ ըսինք, իր մեծութեան նայելով՝ բան մ՚ըսած չենք համարիր. այսչափս ալ անոր համար ըսինք, որպէս զի Լոնտոնի վրայ ալ բան մ՚ըսած ըլլանք։

Կարելի է որ ճամբորդը Փարիզէն Լոնտոն կամ Լոնտոնէն Փարիզ երթալու ատեն մէջտեղն եղած Գալէ (Calais) կամ Տուվր (Douvres) քաղաքներուն մէկուն

մէջ հանգչէ, անոր համար ան տեղերուն վրայ ալ համառօտիւ կը խօսինք:

ՏՈՒՎՐ

Տուվր 23,000 բնակիչ ունի, գլխաւոր պանդոկներուն անուններն ասոնք են:

Պանդոկ. Լորտ Ուորտն, Lord Warden. Շոգենաւին ու շոգեկառքին կայարանին մօտ ու շատ աղէկ:

Շիփ, Ship, հին պանդոկ:

ԳԱԼԷ

Գալէ քաղքին մէջ տեսնելու արժանի բան չկայ. չորս կողմը պատնէշներով պատած է. պտըտելու տեղերուն մէջէն երեւելին է, Quai de Marie ըսուած տեղը, որն որ դէպ ի ծով կ'երթայ:

Պանդոկ. Օդէլ Մորիս, Hôtel Maurice.

Օդէլ Տէսէն, Hôtel Dessin, քաղքի մէջ:

ԱՐԵՒԵԼՔ ԳՆԱԼՈՒ ԿՈՂՄՆԱԿԱՆ ՃԱՄԲԱՆԵՐ

Լոնտոնէն Գալէ դառնալէն ետքը, արեւելքէն եկող ճամբորդը կ'ուզէ նէ՝ կրնայ եկած կարճ ճամբէն ետ դառնալ, կ'ուզէ նէ՝ Հելուետիայի ու Իտալիայի վրայէն դառնալ: Բայց աս ամէն ճամբաներուն կեդրոնը՝ Փարիզ ըլլալով, պէտք է որ նախ հոն գայ: Թէ որ առջինը կ'ընտրէ, այսինքն՝ Հելուետիայի վրայէն երթալ, պէտք է որ Փարիզէն Ստրասպուրկ, անկից ալ՝ Պազէլ, Պեռն ու Ժընեվրա (Հելուետիա) մտնէ: Թէ որ Իտալիայի վրայէն կ'ուզէ երթալ, պէտք է որ Փարիզէն Լիոն, Շամպէրի ու անկից Դուրին (Իտալիա) մտնէ: Ասկից Ճենովա շատ հեռու չէ, ուսկից ծովով Պոլիս դառնալ ուզողը՝ կրնայ

ամէն շաբաթ շոգենաւ գտնել։ Ադրիական ծովով եւ կամ Դանուբի վրայէն դառնալ ուզողն արդէն ճամբան գիտէ, եւ պէտք է որ Դուրինէն Միլան, Վենետիկ, Թրիեստ եւ կամ Վիեննա գայ։

Դուրինէն Իտալիոյ ներսի կողմերը մտնելու հաղորդակցութիւնն օրէ օր շատնալու վրայ է, այնպէս որ անկից Հռոմ կամ Նապոլի գացող ճամբորդը՝ ամենեւին դժուարութիւն չիքաշեր· եւ ամէն տեղ տեսնելու արժանի բաներ, մանաւանդ հնութեան սքանչելի գործքերը չեն պակսիր։ Բայց պանդոկներու մէջ եւ ուրիշ տեղեր՝ կենաց դիւրութեան համար Եւրոպայի մէկալ կողմերը սովորութիւն եղած բաներուն շատը դեռ տեղ տեղ ան տեղուանքը կը փնտռուի։

Ծովէն չքաշուող ճամբորդը կրնայ միանգամայն Փարիզէն Մարսիլիա իջնալ ու անկէ Ճենովա, Լիվոռնոյ ու Չիվիթավէքքիա երթալ, ուսկից Հռոմ շոգեկառքով քանի մը ժամ միայն կը տեւէ։ Մարսիլիայէն ուղղակի Չիվիթավէքքիա ծովով հազիւ 32 ժամ է։ Ուզողը Հռոմայէն ցամաքի վրայէն շոգեկառքով կրնայ Նապոլի անցնիլ, ուր քաղաքն ու տեսնելու բաները տեսնելէն ետքը՝ շաբաթական շոգենաւով Պոլիս դառնալ։

Աս յիշեալ տեղերուն վրայ մանր չուզեցինք խօսիլ, որովհետեւ վախճաններնէս դուրս է. ապա թէ ոչ՝ ասոնց վրայ միայն պէտք էր մատեաններ լեցընել։ Բայց Ճենովա ու Դուրին՝ Փարիզէն դարձողներուն համար ճամբու վրայ ըլլալով, պէտք ենք այնչափ միայն ըսել, որ Ճենովայէն Դուրին շոգեկառքով 5 ժամու ճամբայ է։ Ճենովայի երեւելի պանդոկներն ասոնք են։

Lega italiana, Լէկա իդալիանա։

Quattro Nazioni, Գուադրոյ Նացիոնի։

Ճենովայէն Նիցցա շատ հեռու չէ, շոգեկառքով 5 ժամու չափ կը տեւէ: Օդին բարեխառնութեան համար կուրծքի տկարութիւն ունեցողները՝ ձմեռը հոն կ՚անցընեն:

Պանդոկ. Hôtel Victoria, Օդէլ Վիքդորիա.

Hôtel de France, Օդէլ տը Ֆրանս.

Grande Bretagna, Կրանտէ Պրեդանեա.

Դուրին Իտալիայի Թագաւորանիստ քաղաքն է, ու 165,000 բնակիչ ունի:

Պանդոկ. Hôtel de la Ville, Օդէլ տը լա Վիլ.

Europa, Էվրոփա.

Albergo di Londra, Ալպէրկօ տի Լոնտրա:

Միլան Լոմպարտիայի մայրաքաղաքն է ու Դուրինէն շոգեկառքով քանի մը ժամու ճամբայ է:

Պանդոկ. Hôtel de la Ville, Օդէլ տը լա Վիլ.

Bella Venezia, Պէլլա Վէնէցիա.

Gran Bretagna, Կրան Պրեդանեա. երեքն ալ աղէկ:

Միլան Իտալիայի քաղաքներուն ծաղիկն ըլլալով, պէտք է որ ասոր վրայ քիչ մ՚աւելի խօսինք: Միլան քաղաքն 1162ին Ֆրեդերիկոս Ա. Պարպարոսայէն գետնի հաւասար ըլլալէն ետքը, առջինէն աւելի գեղեցիկ շինուեցաւ, եւ հարստութեամբն ու մեծագործ շինուածներովն առաջինն անցուց: Ունի 190,000 բնակիչ, որոնց մեծ մասը մետաքսի առուտուրի կը պատաղին:

Ութսուն եկեղեցիներուն մէջ անուանին ու հոյակապն է Տոմ ըսուած Մայր եկեղեցին, որն որ ընծայուած է Ս. Աստուածածնայ ծննդեան, ինչպէս եկեղեցւոյն ճակատն ու զանգակատան վրայ դրուած արձանին մէջ դրուած ոսկի տառերը կը ցուցնեն: Հռոմի Ս. Պետրոսէն

ու Սպանիա Սէվիլէայի մայր եկեղեցիէն ետքը՝ Եւրոպայի մէջ ամենէն մեծն է։ Գմբեթը կամ կաթուղիկէն՝ 232 ոտք, իսկ զանգակատունն 335 ոտք բարձրութիւն ունի․ յարկը 98 հատ գոթայի արձաններով ու բոլոր եկեղեցւոյն արտաքին կողմը 4500 մարմարեայ արձաններով զարդարուած է։ Շէնքին ճարտարապետն էր Գերմանացի Հենրիկոս Գամոտիա․ 1386ին սկսաւ ու 15երորդ դարուն վերջերը գլխաւոր մասերը միայն լմնցաւ։ Նաբոլէոն Ա․ 1805ին նորէն սկսել տուաւ․ անկից ետքը ամէն տարի մէկ կողմանէ շէնքն ու մէկալ կողմանէ նորոգութիւնը յառաջ կ'երթայ։ Միլանցիք իրենց Մայր եկեղեցւոյն վրայ շատ կը պանծան եւ աշխարհքիս ութերորդ սքանչելիքը կը կոչեն։

Իրօք ալ Գոթացի ձեւով շինուած հին ու նոր եկեղեցիներուն մէջ մէկ հատիկ է ու նմանը չիգտնուիր․ հինգ միջավայր (navate) ու 52 հատ՝ արձաններով զարդարուած սիւներ ունի։ Եկեղեցւոյն առաստաղը գոյնզգոյն նկարներով սքանչելի կերպով նկարուած է, այնպէս որ հեռուանց նայողին աչքին բոլոր քարէ փորուած կ'երեւայ։ Դասին առջեւը ոսկւով ու մարգարտով զարդարուած Ս․ Կարոլոսի Մատուռը, Փրկչին շիրիմով մէկտեղ ամէն օր ժամը 5էն մինչեւ 10 ժողովրդեան համար բաց է․ բայց անկէ ետքը տեսնել ուզողին 5 ֆրանգով կը բացուի։ Եկեղեցւոյն միջավայրներուն մէջ Մէտիչիի ցեղէն Յակոբու շիրիմը, զորն որ Միքայէլ Անճելոյ ծրագրած է, եւ Ս․ Կուսին արձանը՝ որն որ Պոմպէոս Մարքիզեին գործքն է, ստուգիւ տեսնելու արժանի բաներ են։ Ասոնց նման վարպետ գործքերով բոլոր եկեղեցին լեցուն է։ Դասին երեք պատուհանին վրայ եղած նոր ապակիներն ու 350 նկարները 1849ին վախճանած Պեր-

թինիին գործքերն են, որոնցմով հնութեան նմանեցաւ: Եկեղեցւոյն յատակին վրայ դրուած պղնձէ գաւազանը օրուան ժամերը կը ցուցընէ: Այս Մայր եկեղեցին տեսնելու գացողներուն խորհուրդ կու տանք որ յարկին ու զանգակատան վրայ ելլելու չզանցառեն. շէնքին մէջէն 194 ու դրսէն 300 աստիճանով վեր կ'ելլուի, որոնցմէ 150 հատը միայն զանգակատուն ելլելու համար է:

Այս Մայր եկեղեցւոյն ստորագրութենէն միայն կ'երեւայ որ Միլանի մէջ տեսնելու բաներ չեն պակսիր. որոնց վրայ մէկիկ մէկիկ խօսիլն անկարելի է: Զբօսանաց ու զուարճութեան տեղեր, ուսումնարաններ ու թանգարաններ, ուրիշ տեղ եղածներէն վեր են ու վար չեն:

Միլանէն Վենետիկ շոգեկառքով 8 ժամ կը տեւէ: Վենետիկ ծովու վրայ շինուած քաղաք մըն է ու Ադրիական ծովուն թագուհին կը կոչուի:

Բնակչաց թիւը 123,000ի կը հասնի, որոնք ըստ մեծի մասին ծովու առեւտուրով կ'ապրին:

Պանդոկ. Լունա, Luna.

Կրանտ-Օթէլ Վիդդորիա, Grand Hôtel Vittoria.

Էվրոփա, Europa, երեքն ալ աղէկ:

Հռոմէն վերջը Իտալիոյ մէջ Վենետիկի եկեղեցիներն անուանի են: Մայր եկեղեցին Ս. Մարկոսն է, որն որ ներքին ու արտաքին զարդին համար իր սեռին մէջ մէկ հատիկ կը համարուի: Առջեւի հրապարակին նման Եւրոպայի ուրիշ կողմերը շատ չիգտնուիր: Ընդհանրապէս ամէն շէնքերը, մանաւանդ հրապարակական պալատները, իր առջի մեծութիւնը կը յիշեցընեն:

Հոս է նաեւ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը, որն որ իր բազմարդիւն հիմնադրէն ընտրուած Ս. Ղազարու կղզին կը բնակի:

Վիէննայէն Բոհեմիայի մէջ գտնուող բաղնիքներն երթալու վրայ:

Բոհեմիայի մէջ գտնուող գլխաւոր բաղնիքներուն անուններն ասոնք են. Գարլսպատ, Մարիէնպատ, Ֆրանցէնսպատ ու Թէփլից:

ԳԱՐԼՍՊԱՏ (Carlsbad).

Վիէննայէն Գարլսպատ՝ Նորտպանի հասարակ շոգեկառքով ճամբայ կ'ելլուի, որն որ կ'երթայ մինչեւ Փրակա, Փիլզէն ու Թէփլից: Աս տեղերէն անդին պէտք է հասարակ ձիու կառքով յառաջ երթալ, մինչեւ որ ամբողջ շոգեկառքին երկաթի ճամբան լմննայ. բայց առտու իրիկուն կանոնաւոր ձիու կառքեր չեն պակսիր: Հիմակու հիմա Վիէննայէն մինչեւ Գարլսպատ աս ճամբով 30 ժամու չափ կը տեւէ: Ասոնց գիները տես ետեւի տախտակին մէջ:

Պանդոկ. Կոլտէնէր Շիլտ, goldener Schild, շատ աղէկ:

Տոյչէր Հոֆ, deutscher Hof, շատ աղէկ:

Ռուսիշէր Հոֆ, russischer Hof, շատ աղէկ:

Շդադ Հաննովէր, Stadt Hannover, աղէկ:

Բրինց ֆոն Բրոյսէն, Prinz von Preussen, աղէկ:

Տրայ Ֆազանէն, drei Fasanen.

Ատմիրալ, Admiral.

Ասոնցմէ զատ կան ուրիշ պանդոկներ ալ, մանաւանդ թէ երբ որ հիւրերը կը շատնան, ամէն տուն մէյմէկ պանդոկ կ'ըլլայ. որովհետեւ տարեկան ապրուստին օտարականներէն է:

Գարլսպատ Եւրոպայի մէջ գտնուած բժշկական

բաղնիքներուն առաջինն է. տարին 12,000էն աւելի հիւր կու գայ: Քաղաքը նեղ ձորի մէջ շինուած է, որուն մէջէն Թէփէլ առուակը կ'անցնի, 3750 բնակիչ ու 600 տուն ունի: Ինչպէս ըսինք, քաղքին ապրուստն ու հարըստութիւնն օտարականներէն է, անոր համար եկող հիւանդհիւրերուն ամէն կարելի մտադրութիւնը կ'ընէ, որ հանգիստ ու ամէն կողմանէ ապահով ըլլան: Բնութեան հողի տակ տաքցուցած կենդանարար ջուրն իրենց գանձն է: Ասիկայ զանազան աղբիւրներէ կը բխի ու զանազան տաքութեան աստիճաններ կը բաժնուի, որոնք աս կարգն ունին:

Շբրուտէլ, Sprudel	Ռէօմիւր	59°
Հիկէասգուէլլէ, Hygeasquelle	„	59°
Մարգդպրուննէն, Marktbrunnen . . .	„	40°
Շլոսպրուննէն, Schlossbrunnen	„	42°
Թէրէզիէնպրուննէն, Theresienbrunnen .	„	43°
Միւլպրուննէն, Mühlbrunnen	„	$44\frac{1}{4}$°
Ֆէլզէնգուէլլէ, Felsenquelle	„	46°
Նայպրուննէն, Neubrunnen	„	48°
Պէռնարտսպրուննէն, Bernardsbrunnen .	„	55°
Տունսդաուսշդրէօմունկ, Dunstausströmung	„	35°
Ֆրէմտէն հօսբիթալգուէլլէ, Fremden-hospitalquelle	„	38°
Գայզէրպրուննէն, Kaiserbrunnen . . .	„	40°
Գուէլլէ ցուր ռուսիշէն Գրօնէ, Quelle zur russischen Krone	„	18°
Տորոթէէն Սաուէրպրուննէն, Dorotheen Sauerbrunnen	„	12°
Կազաուսշդրէօմունկ, Gasausströmung . .	„	12°
Այզէնգուէլլէ, Eisenquelle	„	8°

Ամէն հիւանդ ուզած ջրէն չիկրնար խմել. բժիշկ-

ներ կան, որոնք հիւանդին հիւանդութեան համաձայն խմելու ջրին տեսակն ու չափը կ'ապսպրեն։

Գարլսպատին շրջակայ տեղերն ալ շատ գեղեցիկ են եւ հիւրերուն դիւրութեան ու զբօսանաց համար արուեստով ալ շատ բաներ շինած են։ Առտուընները ջուր խմողները՝ ընդարձակ սրահներուն մէջ պտըտելու ժամանակ երաժշտութիւնը զիրենք կը զուարճացընէ։ Յուսացուած ու ստացուած առողջութեան համեմատ Գարլսպատի ծախքն ալ շատ չէ։

ՄԱՐԻԷՆՊԱՏ (Marienbad).

Փիլզէնէն 12 ժամու մէջ ու Գարլսպատէն 5 1/2 ժամու մէջ Մարիէնպատ կը հասնուի, ու ամէն օր առտու իրիկուն աւիթ չիպակսիր։

Պանդոկ. Քլինկեր, Klinger, շատ աղէկ։

Նեբդուն, Neptun, աղէկ։

Շդադ Համպուրկ, Stadt Hamburg.

Մարիէնպատ շատ աղուոր տներ ունի, տարին 5000էն աւելի հիւանդ հիւրեր կու գան, որոնց մեծ մասը Գարլսպատէն դարձողներն են, ուր դարմանէն ետքը կ'ուզեն քիչ մը հանգչիլ ու վրայ գալ։

ՖՐԱՆՑԷՆՍՊԱՏ (Franzensbad).

Փիլզէնէն 12 1/2 ժամու մէջ ու Գարլսպատէն 6 ժամու մէջ Ֆրանցէնսպատ կը հասնուի։

Պանդոկ. Քայզէր ֆոն Էօսդէրայխ, Kaiser von Oesterreich.

Կրոսֆիւրսդին ֆոն Ռուսլանտ, Grossfürstin von Russland.

ԹԷՓԼԻՑ (Teplitz).

Գարլսպատէն Թէփլից 13 ժամ 40 րոպէ կը տեւէ:

Պանդոկ· Շդադ Լոնտոն, Stadt London.

Բոսդ, Post. Հիրշ, Hirsch.

Բրէնս տը Լինեը, Prince de Ligne.

Նոյնպէս հոս ալ տարին 5000էն աւելի բաղնիք ընելու համար հիւրեր կու գան, ջրին տաքութեան աստիճանը 20—38° Ռէօմիւր է: Թէփլիցին շրջանակը պտըտելու համար շատ գեղեցիկ տեղեր կան:

Ասոնցմէ զատ շատ անուանի են վերին Աւստրիայի մէջ Կաստայն (Gastein), Գարինթիայի մէջ Լոյչ (Loitsch) բուսած բաղնիքները: Կաստայն՝ Սալցպուրկին հարաւային կողմը կ՚իյնայ· Յունիս ամսէն սկսեալ՝ մինչեւ Սեպտեմբերի 15 ամէն օր ճեպընթաց ձիու կառք կ՚ելլէ ու $13^{1}/_{2}$ ժամու մէջ կը հասնի:

Պանդոկ· Շվարցեր Ադլեր, schwarzer Adler.

Պլաուէ Դրաուպէ, blaue Traube.

Տարին 5500էն աւելի հիւր կու գայ, որոնց մեծագոյն մասը հարուստ տներէն են· օդը զով է ու ջրերուն զօրութիւն կու տայ:

Աս ըսածներնէս զատ Պաւիէրայի մէջ Քիսսինկէն (Kissingen) բաղնիքը կայ, որն որ Սալցպուրկէն 14 ժամ հեռու է: Վենետիկի մօտ Ռէգուարոյ (Recuaro): Գաղղիայի մէջ շատ անուանի է Վիշի (Vichy) բուսած բաղնիքները, որոնք ուզողը ան կարգի համար շինուած գըրքերուն մէջ կրնայ գտնել:

ՑԱՆԿ

Գիտելիք· Անցագիր· Մաքս· Ստակ· Ճամբու մէջ Թեթեւութիւն· Լեզու· Զգեստ· Գիներու վրայ տախտակ· Եւրոպայի տախտակ· Մղոն· Փարիզ երթալու ճամբայ 1

Ա· Պոլիսէն Վիէննա 9

Փեշթ ու Օֆէն 13

Փեշթէն Վիէննա 14

Վիէննա 15

Պտտելու տեղեր ու պարտէզներ 24

Վիէննայէն Թրեստ 26

Կրաց ու Լուպիանա 27

Թրեստ 27

Բ· Վիէննայէն Փարիզ 29

Լինց 30

Սալցպուրկ 31

Միւնիք 32

Աւկսպուրկ 34

Ուլմ 35

Շդուդկարդ 35

Սդրասպուրկ 36

Փարիզ 36

Փարիզի տեսնելու արժանի բաները 38

Փարիզէն Լիոն ու Մարսիլիա 47

Լիոն 48

Մարսիլիա 48

Փարիզէն Պրիւսէլ 49

Գ· Փարիզէն Լոնտոն 50

Լեզու· Ստակ· Ժամանակ· Անցագիր· Մաքս . . 51

Լոնտոն 54
Տուվր 60
Գալէ 60
Արեւելք դառնալու կողմնական ճամբաներ . . . 60
Ճէնովա 61
Նիցցա 62
Թուրին 62
Միլան 62
Վենետիկ 64
Վիեննայէն Բոհեմիայի մէջ գտնուող բաղնիքներն երթալու վրայ 65
Գարլսպատ 65
Մարիէնպատ 67
Ֆրանցէնսպատ 67
Թէփլից 68
Կասդայն 68

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՉՈՐՍԼԵԶՈՒԵԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՉՈՐՍԼԵԶՈՒԵԱՆ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ա. ԲԱՌԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՒՄ

Le monde invisible.	*Անհրեւոյթ աշխարհք.*	**Die unsichtbare Welt.**
Dieu.	Աստուած.	Gott.
Տիէօ.	Ալլահ.	Կօթթ.
La Divinité.	Աստուածութիւն.	Die Gottheit.
Լա տիվինիթէ.	Իլահիյէթ.	Տի Կօթթհայթ.
Le Créateur.	Արարիչ.	Der Schöpfer.
Լը գրէաթէօր.	Եարատան, խալըգ.	Տէր շէօփֆէր.
La Trinité.	Երրորդութիւն.	Die Dreieinigkeit.
Լա թրինիթէ.	Թէսլիսի մուգատտէս.	Տի տրայայնիհքայթ.
Le Père éternel.	Հայր Աստուած.	Der ewige Vater.
Լը փէր էթէռնէլ.	Փէտէրօ-ուլլահ.	Տէր էվիկէ ֆաթէր.
Le Christ.	Քրիստոս.	Christus.
Լը քրիսթ.	Հազրէթի Իսա.	Քրիսթուս.
Le Saint-Esprit.	Հոգին սուրբ.	Der heilige Geist.
Լը սէնթ-էսփրի.	Րուհ-ուլլահ.	Տէր հայլիկէ կայսթ.
La Sainte-Vierge.	Սուրբ Աստուածածին.	Die Jungfrau Maria.
Լա սէնթ-վիէրժ.	Վալիտէթ-ուլլահ.	Տի եունկֆրաու Մարիա.
L'Éternité.	Յաւիտենականութիւն.	Die Ewigkeit.
Լ'էթէրնիթէ.	Էպէտիյէթ.	Տի էվիհքայթ.
Un ange.	Հրեշտակ.	Ein Engel.
Էօն անժ.	Մէլէք, Փէրիշթէ.	Այն էնկէլ.
Un saint. Une sainte.	Սուրբ. Սրբուհի.	Ein Heiliger, eine Heilige.
Էօն սէն. Իւն սէնթ.	Էվլիյա, աղիզ. Աղիզէ.	Այն հայլիկէր, այնէ հայ-
Les Bienheureux.	Երանելիք.	Die Seligen. [լիկէ
Լէ պիէնէօրէօ.	Էրմաղը ճէննէթ.	Տի զէլիկէն.
Les Prophètes.	Մարգարէները.	Die Propheten.
Լէ փրօֆէթ.	Փէյղամպէրլէր.	Տի փրօֆէթէն.
Les Apôtres.	Առաքեալները.	Die Apostel.
Լէզ ափօթռ.	Րէսուլլար, հավարիլէր.	Տի աբօսթէլ. [gen.
Les Martyrs.	Մարտիրոսները.	Die Märtyrer, Blutzeu-
Լէ մարթիր.	Շէհիտլէր.	Տի մէրթիրէր.
Le paradis.	Արքայութիւն.	Das Paradies.
Լը փարատի.	Ֆիրտէվս, ճէննէթ.	Տաս փարատիս:
Le purgatoire.	Քաւարան.	Das Fegefeuer.
Լը փիւրկաթուար.	Մաթհէր, արաֆ.	Տաս ֆէկէֆօյէր.
Le diable.	Սատանայ.	Der Teufel.
Լը տիապլ.	Շէյթան.	Տէր թօյֆէլ.
Un démon.	Դեւ.	Ein Dämon.
Էօն տէմօն.	Ճին.	Այն տէմօն:
L'enfer.	Դժոխք.	Die Hölle.
Լ'անֆէր.	Ճէհէննէմ.	Տի հէօլլէ.

Le monde visible.	*Երեւելի աշխարհք.*	**Die sichtbare Welt.**
Le ciel, les cieux.	Երկինք.	Der Himmel, die Himmel.
Լը սիէլ, լէ սիէօ.	Կէօյ, սէմավաթ.	Տէր հիմմէլ, տի հիմմէլ.
L'est, l'orient.	Արեւելք.	Der Osten.
Լ'էսթ լ'օրիան.	Մէշրըգ, կիւն տօղուշ-	Տէր օսթէն.
L'ouest, l'occident.	Արեւմուտք. [ու.	Der Westen.
Լ'ուէսթ, լ'օգսիտան.	Մաղրըպ, պաթը.	Տէր վէսթէն.
Le nord, le septentrion.	Հիւսիս.	Der Norden.
Լը նօր, լը սէփթանթրիօն.	Շիմալ.	Տէր նօրտէն.
Le sud, le midi.	Հարաւ.	Der Süden.
Լը սիւտ, լը միտի.	Գըպլէ.	Տէր զիւտէն.
L'atmosphère.	Մթնոլորտ.	Der Luft=Dunstkreis.
Լ'աթմօսֆէր.	Ճէվվի հէվա.	Տէր լուֆթ- տունսթ-
Le soleil.	Արեւ, արեգակն.	Die Sonne. [գրայս.
Լը սօլէյլ.	Կիւնէշ.	Տի զօննէ.
La lune.	Լուսին.	Der Mond.
Լա լիւն.	Այ. գամէր.	Տէր մօնտ.
Une étoile, un astre.	Աստղ.	Ein Stern, Gestirn.
Իւնէթուալ, էօն ասթրը.	Եըլտըզ.	Այն շթէրն, կէշթիրն.
L'univers.	Տիեզերք.	Das Weltall.
Լ'իւնիվէր.	Քեաինաթ.	Տաս վէլթալլ.
La nature.	Բնութիւն.	Die Natur.
Լա նաթիւր.	Ախլագ, թապիաթ.	Տի նաթուր.
Un corps.	Մարմին.	Ein Körper.
Էօն գօր.	Ճէսէտ, պէտէն.	Այն քէօրփէր.

Division du temps.	*Ժամանակի բաժանում.*	**Eintheilung der Zeit.**
Un siècle.	Դար.	Ein Jahrhundert.
Էօն սիէգլ.	Եիւզ եըլ, ասըր.	Այն եարհունտէրթ.
Un an, une année.	Տարի.	Ein Jahr.
Էօն ան, իւն անէ.	Եըլ, սէնէ.	Այն եար.
Le jour de l'an.	Կաղանդ, Նոր տարի.	Der Neujahrstag.
Լը ժուր տը լան.	Եըլ պաշը.	Տէր նօյեարսթագ.
Année bissextile.	Նահանջ տարի.	Schaltjahr.
Անէ պիսէգսթիլ.	Սէնէի քէպիսէ.	Շալթեար.
L'année passée.	Անցած տարի.	Vergangenes Jahr.
Լ'անէ փասէ.	Կէչէն եըլ, պըլտըր.	Ֆէրկանկէնէս եար.
L'année prochaine.	Գալ տարի.	Nächstes Jahr.
Լ'անէ փրօշէն.	Կէլէճէք եըլ.	Նէհսթէս եար.
La saison.	Տարւոյ եղանակ.	Die Jahreszeit.
Լա սէզօն.	Ֆասըլ, էյեամ.	Տի եարէսցայթ.
Le printemps.	Գարուն.	Der Frühling, der Lenz.
Լը փրէնթան.	Իլք պահար.	Տէր ֆրիւ-լինկ, տէր լէնց.
L'été.	Ամառ.	Der Sommer.
Լ'էթէ.	Եազ.	Տէր զօմմէր.
L'automne.	Աշուն.	Der Herbst.
Լ'օթօն.	Կիւզ, սօն պահար.	Տէր հէրպսթ.
L'hiver.	Ձմեռ.	Der Winter.
Լ'իվէր.	Գըշ.	Տէր վինթէր.

Les vacances.	Հանգստեան օրեր.	Die Ferien.
Լէ վաքանս.	Իսթիրահաթ, թաթիլ.	Տի Ֆէրիէն.
Un mois.	Ամիս.	Ein Monat.
Էօն մուա.	Այ.	Այն մօնաթ.
Janvier.	Յունուար.	Jänner.
Ժանվիէ.	Քեանունի սանի.	Եէննէր.
Février.	Փետրուար.	Februar.
Ֆէվրիէ.	Շուպաթ.	Ֆէպրուար.
Mars.	Մարտ.	März.
Մարս.	Մարթ.	Մէրց.
Avril.	Ապրիլ.	April.
Ավրիլ.	Նիսան.	Ափրիլ.
Mai.	Մայիս.	Mai.
Մէ.	Մայըս.	Մայ.
Juin.	Յունիս.	Juni.
Ժիւէն.	Հազիրան.	Եունի.
Juillet.	Յուլիս.	Juli.
Ժիւյէ.	Թէմմուզ.	Եուլի.
Août.	Օգոստոս.	August.
Ու.	Աղուսթոս.	Աուկուսթ.
Septembre.	Սեպտեմբեր.	September.
Սէփթանպրը.	Էյլիւլ.	Սէփթէմպէր.
Octobre.	Հոկտեմբեր.	Oktober.
Օքթօպրը.	Թէշրինի էվվէլ.	Օքթօպէր.
Novembre.	Նոյեմբեր.	November.
Նօվանպրը.	Թէշրինի սանի.	Նօվէմպէր.
Décembre.	Դեկտեմբեր.	Dezember.
Տէսանպրը.	Քեանունի էվվէլ.	Տէցէմպէր.
Une semaine.	Շաբաթ.	Eine Woche.
Իւն սըմէն.	Հաֆթա.	Այնէ վօխէ.
Dimanche.	Կիրակի.	Sonntag.
Տիմանշ.	Փազար.	Զօննթագ.
Lundi.	Երկուշաբթի.	Montag.
Լէօնտի.	Փազար էրթէսի.	Մօնթագ.
Mardi.	Երեքշաբթի.	Dienstag.
Մարտի.	Սալը.	Տինսթագ.
Mercredi.	Չորեքշաբթի.	Mittwoch.
Մէրքրըտի.	Չարշէմպէ.	Միթվօխ.
Jeudi.	Հինգշաբթի.	Donnerstag.
Ժէօտի.	Փէնճշէմպէ.	Տօննէրսթագ.
Vendredi.	Ուրբաթ.	Freitag.
Վանտրըտի.	Ճումա.	Ֆրայթագ.
Samedi.	Շաբաթ.	Sonnabend, Samstag.
Սամըտի.	Ճումա էրթէսի.	Զօննապէնտ.
Un jour.	Օր. ցորեկ.	Ein Tag.
Էօն ժուր.	Կիւն. կիւնտիւզ.	Այն թագ.
Une heure.	Ժամ.	Eine Stunde.
Իւն էօր.	Սաաթ.	Այնէ շթունտէ.
Une demi-heure.	Կէս ժամ.	Eine halbe Stunde.
Իւն տըմի-էօր.	Եարըմ սաաթ.	Այնէ հալպէ շթունտէ
Une heure et demie.	Մէկ ու կէս ժամ.	Anderthalb Stunden.
Իւն էօր է տըմի.	Պիր պուչուք սաաթ.	Անտէրթհալպ շթունտէն.

Un quart d'heure.	Քառորդ մը.	Eine Viertelstunde.
Էօն քար տ'էօր.	Պիր չէյրէք.	Այնէ ֆիրթէլշթունտէ.
Une minute.	Րոպէ.	Eine Minute.
Իւն մինիւթ.	Տագիգէ.	Այնէ մինութէ.
Une seconde.	Մանրերկրորդ.	Eine Sekunde.
Իւն սըքօնտ.	Սանիյէ.	Այնէ զէքունտէ.
L'aube, l'aurore.	Արշալոյս.	Die Morgenröthe.
Լ'օպ, լ'օրօր.	Շէֆագ.	Տի մօրկէնրէօթէ.
Le point du jour.	Լուսընձալը.	Der Tagesanbruch.
Լը փուէն տիւ ժուր.	Աղարմա.	Տէր թակէսանպրուխ.
Le matin.	Առտու.	Der Morgen.
Լը մաթէն.	Սապահ.	Տէր մօրկէն.
De grand, bon matin.	Կանուխ.	Bei Zeiten, früh.
Տը կրան, պօն մաթէն.	Էրքէն, սապահլայըն.	Պայ ցայթէն, ֆրիւ.
La matinée.	Առտուան ժամանակ.	Der Vormittag.
Լա մաթինէ.	Գուշլուգ.	Տէր ֆօրմիթթակ.
Midi.	Կէսօր.	Mittag.
Միտի.	Էօյլէ, էօյլէն.	Միթթակ.
L'après-midi.	Երեկօթք.	Der Nachmittag.
Լ'աբրէ-միտի.	Էօյլէնտէն սօնրա.	Տէր նախմիթթակ.
Le soir, la soirée.	Իրիկուն.	Der Abend.
Լը սուար, լա սուարէ.	Աքշամ.	Տէր աբէնտ.
La nuit.	Գիշեր.	Die Nacht.
Լա նիւի.	Կէճէ.	Տի նախթ.
Minuit.	Կէս գիշեր.	Mitternacht.
Մինիւի.	Եարը կէճէ.	Միթթէրնախթ.
Aujourd'hui.	Այսօր.	Heute.
Օժուրտ'իւի.	Պու կիւն, պէօյիւն.	Հոյթէ.
Hier.	Երեկ.	Gestern.
Իէր.	Տիւն.	Կէսթէրն.
La veille.	Նախընթաց իրիկուն.	Der Vorabend.
Լա վէյլ.	Իլք աքշամ, արէֆէ.	Տէր ֆօրապէնտ.
Avant-hier.	Երէկ չէ մէկալն օր.	Vorgestern.
Ավանթ-իէր.	Տիւն տէյիլ օ պիր կիւն.	Ֆօրկէսթէրն.
Demain.	Վաղը.	Morgen.
Տըմէն.	Եարըն.	Մօրկէն.
Le lendemain.	Երկրորդ օրը.	Der folgende Tag.
Լը լանտըմէն.	Իրթէսի կիւնի.	Տէր ֆօլկէնտէ թակ.
Après-demain.	Վաղը չէ մէկալն օր.	Uebermorgen.
Աբրէ-տըմէն.	Եարըն տէյիլ օ պիր կիւն.	Իւպէրմօրկէն.

Phénomènes, météores.	*Օդերեւոյթներ.*	**Natur- und Lufterscheinungen.**
L'arc-en-ciel.	Ծիրանի գօտի.	Der Regenbogen.
Լ'արք-ան-սիէլ.	Ալայիմ սէմա.	Տէր րէկէնպօկէն.
Un brouillard.	Մէգ, մշուշ.	Ein Nebel.
Էօն պրուայեար.	Փուս.	Այն նէպէլ.
La chaleur. Chaud.	Տաքութիւն. Տաք.	Die Hitze. Warm.
Լա շալէօր. Շօ.	Սըճագ.	Տի հիցցէ. Վարմ.
Un éclair.	Փայլակ.	Ein Blitz.
Էօն էքլէր.	Շիմշէք.	Այն պլից.

Le feu.	Կրակ.	Das Feuer.
Լը ֆեօ.	Աթեշ.	Տաս ֆոյեր.
La flamme.	Բոց.	Die Flamme.
Լա ֆլամ.	Ալեւ.	Տի ֆլամմե.
La cendre.	Մոխիր.	Die Asche.
Լա սանտրը.	Քիւլ.	Տի աշէ.
Un charbon.	Ածուխ, գործելի.	Eine Kohle.
Էօն շարպօն.	Քէօմիւր.	Այնէ քօլէ.
Allumer.	Վառել. [դուրմագ.	Anzünden.
Ալիւմէ.	Եագմագ, Թութուշ-	Անցիւնտէն.
Consumer, brûler.	Այրել.	Verbrennen. Verzehren.
Գօնսիւմէ. պրիւլէ.	Եագմագ, Թիւքէթ էթմէք.	Ֆէրպրէննէն. Ֆէրցէրէն.
Éteindre.	Մարել.	Auslöschen.
Էթէնտրը.	Սէօնտիւրմէք.	Աուսլէօշէն.
S'allumer.	Բռնկիլ.	Fangen.
Ս'ալիւմէ.	Թութուշմագ.	Ֆանկէն.
La foudre.	Կայծակ.	Der Blitz.
Լա ֆուտրը.	Եըլտըրըմ.	Տէր պլից.
Le froid. Froid.	Ցրտութիւն. Ցուրտ.	Die Kälte. Kalt.
Լը ֆրուա. Ֆրուա.	Սօգուգ.	Տի քէլթէ. Գալթ.
Faire froid.	Պաղիլ, ցուրտ ըլլալ.	Kalt sein.
Ֆէր ֆրուա.	Սօգուգ օլմագ.	Գալթ սայն.
Avoir froid.	Մսիլ.	Frieren.
Ավուար ֆրուա.	Իւշիւմէք.	Ֆրիրէն.
La gelée.	Սառնը, սառոյցք.	Der Frost.
Լա ժըլէ.	Տօնմա.	Տէր ֆրօսթ.
Geler, glacer.	Սառիլ.	Gefrieren.
Ժըլէ. կլասէ.	Տօնմագ.	Կէֆրիրէն.
La glace.	Սառոյց.	Das Eis.
Լա կլաս.	Պուզ.	Տաս այս.
La grêle. Il grêle.	Կարկուտ. Կարկուտ կու գայ.	Der Hagel. Es hagelt.
Լա կրէլ. Իլ կրէլ.	Տօլու. Տօլու եաղըյօր.	Տէր հակէլ. Էս հակէլթ.
L'humidité. Humide.	Խոնաւութիւն. Խոնաւ.	Die Feuchtigkeit. Feucht.
Լ'իւմիտիթէ. Իւմիտ.	Նէմլիք. Նէմ.	Տի ֆօյխթիքքայթ. Ֆօյխթ.
Une inondation.	Հեղեղանք.	Eine Ueberschwemmung.
Իւն ինօնտասիօն.	Սու պասմա.	Այնէ իւպէրշվէմմունկ.
La lumière.	Լոյս.	Das Licht.
Լա լիւմիէր.	Ըշըգ.	Տաս լիխթ.
La neige. Il neige.	Ձիւն. Ձիւն կու գայ.	Der Schnee. Es schneit.
Լա նէժ. Իլ նէժ.	Գար. Գար եաղըյօր.	Տէր շնէ. Էս շնայթ.
Un flocon de neige.	Ձեան տարափ.	Eine Schneeflocke.
Էօն ֆլօքօն տը նէժ.	Գար տանէսի.	Այնէ շնէֆլօքքէ.
Se fondre.	Ձիւները հալիլ.	Schmelzen.
Սը ֆօնտրը.	Գար էրիմէք.	Շմէլցէն.
Un nuage, une nuée.	Ամպ.	Eine Wolke.
Էօն նիւաժ, իւն նիւէ.	Պուլութ.	Այնէ վօլքէ.
L'obscurité. Obscur.	Մթութիւն. Մութ.	Die Dunkelheit. Dunkel.
Լ'օպսքիւրիթէ. Օպսքիւր.	Գարանլըգ. Գարանլըգ:	Տի տունքէլհայթ. Տուն-[քէլ.
L'ombre.	Շուք.	Der Schatten.
Լ'օնպր.	Կէօլկէ.	Տէր շաթթէն.
Un orage.	Մրրիկ.	Ein Sturm.
Էօն օրաժ.	Պօրա.	Այն շթուրմ.

La pluie.	Անձրեւ.	Der Regen.
Լա պլիւի.	Եաղմուր.	Տէր րէկէն,
Il pleut.	Անձրեւ կու գայ.	Es regnet.
Իլ պլէօ.	Եաղմուր եաղըյօր.	Էս րէկնէթ.
Une averse.	Տարափ.	Ein Platzregen.
Իւն ավէրս.	Սաղանագ.	Այն փլացրէկէն.
La rosée.	Ցօղ.	Der Thau.
Լա րօզէ.	Չիհ, չէյ.	Տէր թաու.
La sécheresse. Sec, [sèche.	Չորութիւն. Չոր.	Die Trockenheit. Trocken.
Լա սէշըրէս. Սէք, սէշ.	Գուրագլըգ. Գու-[րու.	Տի թրօքէնհայթ. Թրօքէն.
Le serein.	Պարզ.	Der Abendthau.
Լը սըրէն.	Այազ.	Տէր աբէնթթաու.
Une tempête.	Փոթորիկ.	Das Ungewitter.
Իւն թանփէթ.	Պօրա.	Տաս ունկէվիթթէր.
Le temps.	Օդ, երկինք.	Das Wetter, die Witte-[rung.
Լը թան.	Հէվա.	Տաս վէթթէր.
Le tonnerre.	Որոտում.	Der Donner.
Լը թօնէր.	Կէօք կիւռլէմէ.	Տէր տօննէր.
Un tremblement de terre.	Երկրաշարժ.	Ein Erdbeben.
Իւն թրանպլըման տը թէր.	Զէլզէլէ.	Այն էրթպէպէն.
Le vent.	Հով.	Der Wind.
Լը վան.	Րիւզկեար.	Տէր վինթ.
Le vent du nord.	Հիւսիսի.	Der Nordwind.
Լը վան տիւ նօր.	Փօյրազ.	Տէր նօրթվինթ.
Le vent du sud.	Հարաւահողմ.	Der Südwind.
Լը վան տիւ սիւտ.	Լօտօս, լօտօս.	Տէր սիւտվինթ.
Le vent du sud-est.	Խորշակ.	Der Südostwind.
Լը վան տիւ սիւտ-էսթ.	Սամ եէլի.	Տէր սիւտօսթվինթ.
Grand vent.	Սաստիկ հով.	Starker Wind.
Կրան վան.	Շիտտէթլի րիւզկեար.	Շթարքէր վինթ.

L'eau. — Ջուր. — Das Wasser.

Un bras de mer.	Ծովի բազուկ.	Ein Arm des Meeres.
Իւն պրա տը մէր.	Պօղազ.	Այն արմ տէս մէրէս.
Un calme.	Ծովի հանդարտու-[թիւն.	Eine Windstille.
Իւն գալմ.	Ըլըմանլըգ.	Այնէ վինտշթիլլէ.
Un détroit.	Նեղուց.	Eine Meerenge.
Իւն տէթրուա.	Պօղազ.	Այնէ մէրէնկէ.
L'embouchure.	Գետաբերան.	Die Mündung.
Լ'անպուշիւր.	Չայ աղզը.	Տի միւնտունկ.
Se jeter dans.	Ծովը թափիլ.	Münden.
Սը ժըթէ տան.	(Տէնիզէ) տէօքիւլմէք.	Միւնտէն.
Eau minérale.	Հանքային ջուր.	Mineral-Wasser.
Օ մինէրալ.	Մատէն սույու.	Մինէրալվասսէր.
Un étang.	Լճակ.	Ein Teich.
Իւն էթան.	Կէօլճիյէզ.	Այն թայհ.
Un fleuve.	(Մեծ) գետ.	Ein Fluß.
Իւն ֆլէօվ.	(Պէօյիւք) չայ.	Այն ֆլուս.
Les flots.	Ալիք.	Die Fluthen.
Լէ ֆլօ.	Տալղա.	Տի ֆլութէն.

Une fontaine.	Աղբիւր.	Ein Springbrunnen.
իւն ֆօնթէն.	Չէշմէ.	Այն շբրինկպրուննէն.
Un golfe.	Ծովածոց.	Ein Meerbusen.
էօն կօլֆ.	Քէօրֆէզ.	Այն մէէրպուզէն.
Une goutte d'eau.	Կաթիլ.	Ein Wassertropfen.
իւն կուդ տ'օ.	Տամլա.	Այն վասսէրդրօբֆէն.
Un gué.	Հուն.	Eine Furt.
էօն կէ.	Կէչիտ. Սըղ եէր.	Այնէ ֆուրդ.
Un port.	Նաւահանգիստ.	Ein Hafen.
էօն փօր.	Լիման.	Այն հաֆէն.
Un lac.	Լիճ.	Ein See.
էօն լագ.	Կէօլ.	Այն զէէ.
La mer.	Ծով.	Die See, das Meer.
Լա մէր.	Տէնիզ.	Տի զէէ, տաս մէէր
Les ondes.	Ալիք.	Die Wellen.
Լէզ օնտ.	Տալղա.	Տի վէլլէն.
Un puits.	Հոր.	Ein Ziehbrunnen.
էօն փիւի.	Գույու.	Այն ցիհպրուննէն.
Une rivière.	Գետ.	Ein Strom.
իւն րիվիէր.	Չայ.	Այն շդրօմ.
Un ruisseau.	Վտակ.	Ein Bach.
էօն րիւիսօ.	Ըրմագ.	Այն պահ.
Une source.	Ակունք, աղբերակունք.	Eine Quelle, ein Born.
իւն սուրս.	Մէրչէշմէ, գայնագ.	Այնէ գուէլլէ. այն պօրն.
Un torrent.	Ուղխ, Հեղեղ.	Ein Gießbach.
էօն թօրան.	Սէյլ.	Այն կիսսպահ.
Les vagues.	Ալիք, ծփանք.	Die Wogen.
Լէ վակ.	Տալղա.	Տի վօկէն.

La terre.	Երկիր.	Die Erde.
Une plaine.	Հարթ, տափարակ տեղ.	Eine Ebene
իւն փլէն.	Օվա, տիւզ եէր.	Այնէ էպէնէ.
Une vallée.	Ձոր, Հովիտ.	Ein Thal.
իւն վալէ.	Տէրէ, օվա.	Այն թալ.
Un coteau.	Բլրակ.	Eine kleine Anhöhe.
էօն գօթօ.	Պայըրճըղազ.	Այնէ գլայնէ անհէօհէ.
Une colline.	Բլուր.	Eine Anhöhe.
իւն գօլին.	Պայըր, թէփէ.	Այնէ անհէօհէ.
Une montagne.	Լեռ, սար.	Ein Berg, ein Gebirge.
իւն մօնթանյը.	Տաղ.	Այն պէրկ, այն կէպիրկէ.
Le sommet, la cime.	Լերան գլուխ.	Der Gipfel, die Spitze.
Լը սօմէ, լա սիմ.	Թէփէ, տաղ պաշը.	Տէր կիբֆէլ. տի շփիցէ.
Le pied.	Լերան ստորոտը, ստոր-կը.	Der Fuß.
Լը փիէ.	Տաղ էթէյի.	Տէր ֆուսս.
Un cap, un promontoire.	Հրուանդան, սարաւանդ.	Ein Vorgebirge.
էօն գափ, էօն փրօմօնթուար.	Տաղ պուրնու.	Այն ֆօրկէպիրկէ.
Une île.	Կղզի.	Eine Insel.
իւն իլ.	Ադա.	Այնէ ինզէլ.
La côte, la rive.	Եզր, ծովեզր, գետեզր.	Die Küste, das Ufer.
Լա գօթ. լա րիվ.	Գըյըը. քէնար.	Տի քիւսթէ, տաս ուֆէր.

Un roc, un rocher.	Ժայռ.	Ein Fels, ein Felsen.
Էօն րօք, էօն րօշէ.	Գայա.	Այն ֆէլս, այն ֆէլսէն.
Le sol, le terrain.	Գետին, հող, երկիր.	Der Grund, der Boden.
Լը սօլ, լը թէրէն.	Թօփրագ, եէր.	Տէր կրունտ, տէր պօ-տէն.
Un champ.	Դաշտ, արտ.	Ein Feld.
Էօն շան.	Գըր.	Այն ֆէլտ.
Un pré, une prairie.	Մարգ.	Eine Wiese.
Էօն փրէ, իւն փրէրի.	Չայըր չիմէն, չիմէնլիք.	Այնէ վիզէ.

Minéraux.	Հանքային մարմին.	Mineralien
L'air.	Օդ.	Die Luft.
Լ'էր.	Հէվա.	Տի լուֆթ.
Le phosphore.	Լուսակիր.	Der Phosphor.
Լը ֆօսֆօր.	Ֆօսֆօր, կարանլըգտա պարլայան.	Տէր ֆօսֆօր.
Un minéral.	Հանք.	Ein Mineral.
Էօն մինէրալ.	Մատէնի մատէնիյէ.	Այն մինէրալ.
Un metal.	Մետաղ.	Ein Metall.
Էօն մէթալ.	Մատէն.	Այն մէթալ.
L'acier.	Պողպատ.	Der Stahl.
Լ'ասիէ.	Չէլիք.	Տէր շթալ.
L'aimant.	Մագնիս, խանդումանդ.	Der Magnet.
Լ'էման.	Միքնաթիս (մըգնաթըս.)	Տէր մակնէթ.
L'alun.	Պաղլեղ.	Der Alaun.
Լ'ալէօն.	Շապ.	Տէր ալաուն.
L'ambre jaune, succin.	Գոհազամ, սաթ.	Der Bernstein.
Լ'անպրը ժօն, սիւքսինէն.	Քէհրիպար.	Տէր պէրնշթայն.
L'ammoniaque.	Աւշակի աղ, անուշադր.	Das Ammoniak.
Լ'ամօնիաք.	Նիշատըր.	Տաս ամօնիաք.
L'argent.	Արծաթ.	Das Silber.
Լ'արժան.	Կիւմիւշ.	Տաս զիլպէր.
L'argile.	Կաւ.	Der Thon.
Լ'արժիլ.	Կիլ, (քիլ.)	Տէր թօն.
L'arsenic.	Զառիկ.	Der Arsenik.
Լ'արսընիք.	Զըրնըխ.	Տէր արսէնիք.
La brique.	Թրծուն աղիւս.	Der Ziegelstein.
Լա պրիք.	Թուղլա.	Տէր ցիկէլշթայն.
Le bronze.	Անագի պղինձ.	Die Bronze.
Լը պրօնզ.	Թունճ.	Տի պրօնզէ.
Un caillou.	Կոպիճ, կայծքար.	Ein Kiesel.
Էօն գայլու.	Չախմախ թաշը.	Այն քիզէլ.
La chaux.	Կիր.	Der Kalk.
Լա շօ.	Քիրէճ.	Տէր գալք.
Le corail.	Բուստ.	Die Koralle.
Լը քօրայլ.	Մէրճան.	Տի քօրալլէ.
La craie.	Կաւիճ.	Die Kreide.
Լա գրէ.	Թէպէշիր.	Տի քրայտէ.
Un cristal.	Վանակն, ակնվանի.	Ein Krystall.
Էօն քրիսթալ.	Պիլլօր.	Այն քրիսթալ.
Le cuivre.	Պղինձ.	Das Kupfer.
Լը քիւիվր.	Պագըր.	Տաս գուբֆէր.
Un diamant.	Ադամանդ.	Ein Diamant.
Էօն տիաման.	Էլմաս.	Այն տիամանթ.

L'étain.	Անագ.	Das Zinn.
Լ'էթէն.	Գալայ.	Տաս ցինն.
Le fer.	Երկաթ.	Das Eisen.
Լը ֆէր.	Տէմիր.	Տաս այզէն.
Le fer-blanc.	Կռած.	Das Eisenblech.
Լը ֆէր-պլան.	Թէնէքէ.	Տաս այզէնպլէխ.
Une feuille.	Թիթեղ. [(թէնէքէ).	Ein Blatt.
Իւն ֆէօյլ.	Պիր եափրագը, Վարագ	Այն պլաթ.
Le granit.	Գրանիտ.	Der Granit.
Լը կրանիթ.	Փալամուտըն թաշը.	Տէր կրանիթ.
Le gypse.	Գաճ, բուռ.	Der Gyps.
Լը ժիփս.	Ալչը.	Տէր կիփս.
Le laiton.	Արոյր.	Das Messing.
Լը լէթօն.	Փիրինճ.	Տաս մէսսինկ.
Le marbre.	Մարմար, կիճ.	Der Marmor.
Լը մարպր.	Մէրմէր.	Տէր մարմօր.
Le mercure, le vif-argent. [ժան.	Սնդիկ.	Das Merkur, Quecksilber. [զիլպէր.
Լը մէրքիւր, լը վիֆ առ-	Ժիվա.	Տաս մէրքուր, քվէքզ-
L'or.	Ոսկի.	Das Gold.
Լ'օր.	Ալթըն.	Տաս կօլտ.
Une pierre.	Քար.	Ein Stein.
Իւն փիէր. [fusil.	Թաշ.	Այն շթայն.
Pierre à briquet, à	Կայծքար.	Feuerstein, Flintenstein.
Փիէր ա պրիքէ, ա ֆիւզիլ.	Չախմախ թաշը.	Ֆայէրշթայն. Ֆլինթէն- [շթայն.
Pierre ponce.	Սունկ քար, չեչաքար.	Bimsstein.
Փիէր փօնս.	Փամզա.	Պիմսշթայն.
Pierre infernale.	Խարիչ քար.	Höllenstein.
Փիէր էնֆէրնալ.	Ճէհէննէմ թաշը.	Հէօլլէնշթայն.
Le platine.	Լանոսկի, սպիտակ ոսկի.	Das Platina.
Լը փլաթին.	Փլաթինա.	Տաս փլաթինա.
Le plâtre.	Գաճ, բուռ.	Der Gyps.
Լը փլաթր.	Ալչը.	Տէր կիփս.
Le plomb.	Կապար, արճիճ.	Das Blei.
Լը փլօն.	Գուրշուն.	Տաս պլայ.
La poudre.	Վառօդ.	Das Pulver.
Լա փուտր.	Պարութ.	Տաս փուլվէր.
La rouille.	Ժանգ.	Der Rost.
Լա րույլ.	Պաս.	Տէր րօսթ.
Le sable.	Աւազ.	Der Sand.
Լը սապլ.	Գում.	Տէր զանտ.
Le salpêtre.	Բորակ, աղբորակ.	Der Salpeter.
Լը սալփէթր.	Կէհերչիլէ.	Տէր զալփէթէր.
Le sel.	Աղ.	Das Salz.
Լը սէլ.	Թուզ.	Տաս զալց.
Le soufre.	Ծծումբ.	Der Schwefel.
Լը սուֆր.	Քիւքիւրթ.	Տէր շվէֆէլ.
La tuile.	Կղմինտր.	Der Ziegel.
Լա թիւիլ.	Քիրէմիթ.	Տէր ցիկէլ.
Le verre.	Ապակի.	Das Glas.
Լը վէր.	Ճամ.	Տաս կլաս.
Le vitriol.	Արջասպ.	Der Vitriol.
Լը վիթրիօլ.	Զաճը Գըպրըզ.	Տէր վիթրիօլ.

Le zinc.	Զինկ.	Das Zink.
Լը զէնք.	Մադէնի թիւթիա.	Տաս ցինք.

Végétaux. Տնկեր. Gewächse.

La graine, la se-	Սերմ, հունտ, հատ.	Der Same.
Լա կրէն. [mence.	Թօխում.	Տէր զամէ.
La racine.	Արմատ.	Die Wurzel.
Լա րասին.	Քէօք.	Տի վուրցէլ.
Le tronc.	Կոճղ.	Der Stamm.
Լը թրօն.	Քիւթիւք.	Տէր շթամ.
La tige.	Ստեղ.	Der Stengel.
Լա թիժ.	Աղաճըն գէվդէսի.	Տէր շթէնկէլ.
Le bois.	Փայտ.	Das Holz.
Լը պուա.	Օդուն.	Տաս հօլց.
L'écorce.	Կեղեւ.	Die Rinde.
Լ'էգօրս.	Գապուգ.	Տի րինտէ.
Une branche.	Ոստ, բազուկ.	Ein Ast.
Իւն պրանշ.	Տալ.	Այն աստ.
Un rameau.	Ճիւղ	Ein Zweig.
Էօն րամօ.	Քիւչիւք դալ.	Այն ցվայկ.
La fleur.	Ծաղիկ.	Die Blüthe.
Լա ֆլէօր. [les.	Չիչէք.	Տի պլիւթէ.
Une feuille, les feuil-	Տերեւ.	Ein Blatt, die Blätter.
Իւն ֆէօյլ. լէ ֆէօյլ.	Եափրագ.	Այն պլատ. տի պլէթթէր.
Le fruit.	Պտուղ.	Die Frucht.
Լը ֆրիւի.	Մէյվէ.	Տի ֆրուխթ.
Un pepin.	Կուտ, կորիզ, թին.	Ein Kern.
Էօն փէփէն.	Չէքիրտէք.	Այն քէրն.
La queue.	Կոթ.	Der Stiel.
Լա քէօ.	Սափ.	Տէր շթիլ.
Un épi de blé.	Հասկ.	Eine Kornähre.
Էօն էփի տը պլէ.	Պաշագ.	Այնէ քօրնէրէ.
Une grappe de raisin.	Ողկոյզ.	Eine Weintraube.
Իւն կրափ տը րէզէն.	Սալգըմ.	Այնէ վայնթրաուպէ.
Un grain de raisin.	Խաղողի հատ.	Ein Weintraubenkorn.
Էօն կրէն տը րէզէն.	Իւզիւմ տանէսի.	Այն վայնթրաուպէնքօրն.
Un bouton.	Կոկոն, բողբոջ,	Eine Knospe.
Էօն պութօն.	Ղօնչէ (գօնչա).	Այնէ քնօսփէ.

La giroflée.	Շահպրակ ղիկ.	Die Levkoje.
Լա ժիրօֆլէ.	Շէպպօյ, (շէհպօյ.)	Տի լէվքօյէ.
L'hyacinthe.	Յակինթ.	Die Hyacinthe.
Լ'իասէնթ.	Սիւմպիւլ.	Տի հիւացինթէ.
Le jasmin.	Յասմիկ.	Der Jasmin.
Լը ժասմէն.	Եասէմին.	Տէր եասմին.
Le lis.	Շուշան.	Die Lilie.
Լը լիս.	Զանպագ.	Տի լիլիէ.
L'œillet.	Շահոքրամ.	Die Nelke.
Լ'էօյլէ.	Գարանֆիլ.	Տի նէլքէ.
Le pavot.	Խաշխաշ.	Die Mohnblume.
Լը փավօ.	Աֆիոն չիչէյի.	Տի մօնպլումէ.

La rose.	Վարդ.	Die Rose.
Լա րօզ.	Կիւլ.	Տի րօզէ.
Le soleil.	Արեւածաղիկ.	Die Sonnenblume.
Լը սօլէյլ.	Այ չիչէյի.	Տի սօննէնպլումէ.
La tulipe.	Կակաչ.	Die Tulpe.
Լա թիւլիփ.	Լալէ.	Տի թուլփէ.
La violette.	Մանուշակ.	Das Veilchen.
Լա վիօլէթ.	Պէնէֆշէ (մէնէքշէ).	Տաս ֆայլխէն.

L'ail.	Սխտոր.	Der Knoblauch.
Լ'այլ.	Սարմըսագ.	Տէր գնօպլաուխ.
L'artichaut.	Արտիճուկ, կանկար.	Die Artischocke.
Լ'արթիշօ.	Էնկինար.	Տի արթիշօքէ.
L'asperge.	Ծնեբեկ.	Der Spargel.
Լ'ասփէրժ.	Գուշ գօնմազ.	Տէր շփարկէլ.
L'avoine.	Վարսակ.	Der Hafer.
Լ'ավուան.	Եուլաֆ.	Տէր հաֆէր.
La betterave.	Ճակընդեղ, բանճար.	Die rothe Rübe.
Լա պէթթրավ.	Չիւքիւնտիւր.	Տի րօթէ րիւպէ.
Le blé, le froment.	Ցորեն.	Das Korn, der Weizen.
Լը պլէ, լը ֆրօման.	Պուղտայ.	Տաս գօրն, տէր վայցէն.
La carotte.	Ստեպղին.	Die Mohrrübe, die gelbe Rübe.
Լա գարօթ.	Հավուճ.	Տի մօրրիւպէ, տի կէլպէ րիւպէ.
Le céleri.	Նեխուր.	Sellerie.
Լը սէլըրի.	Քէրէվիզ.	Սէլլէրի.
Le champignon.	Սունկ.	Der Schwamm.
Լը շանփինեօն.	Մանթար.	Տէր շվամ.
Le chanvre.	Կանեփ.	Der Hanf.
Լը շանվր.	Քէնէվիր.	Տէր հանֆ.
La chicorée.	Եղերդ.	Die Cichorie.
Լա շիգօրէ.	Հինտիպա, րատիքիօ.	Տի ցիխօրիէ.
Le chou.	Կաղամբ.	Der Kohl.
Լը շու.	Լահանա.	Տէր գօլ.
La citrouille.	Դդում.	Der Kürbis.
Լա սիթրուայլ.	Գապագ.	Տէր կիւրպիս.
Le concombre.	Վարունգ.	Die Gurke.
Լը գօնգօնպր.	Խըյար.	Տի կուրքէ.
Les épinards.	Շոմին.	Der Spinat.
Լէզ էփինար.	Ըսպանագ.	Տէր շփինաթ.
La fève.	Բակլայ.	Die Bohne.
Լա ֆէվ.	Պագլա.	Տի պօնէ.
La guimauve.	Տուղտ.	Der Eibisch.
Լա կիմօվ.	Կիւլ խաթմի.	Տէր այպիշ.
Le haricot.	Լուբիա.	Die Gartenbohne.
Լը հարիգօ.	Ֆասուլիա.	Տի կարթէնպօնէ.
L'herbe.	Խոտ.	Das Kraut.
Լ'էրպ.	Օթ.	Տաս գրաութ.
La laitue.	Հազար.	Der Lattich.
Լա լէթիւ.	Մարուլ, սալաթա.	Տէր լաթթիխ.
La lentille.	Ոսպ.	Die Linse.
Լա լանթիյլ.	Մէրճիմէք.	Տի լինզէ.

Le lin.	Կտաւ.	Der Lein, der Flachs.
Լը լէն.	Քեթեն.	Տէր լայն, տէր ֆլախս.
Le maïs.	Սիմինտր.	Der Mais, türkischer
Լը մաիս.	Մըսըր պուղտայը.	Տէր մայս. [Weizen.
La mauve.	Մոլոշ.	Die Malwe.
Լա մօվ.	Էպէմ կիւմէճի.	Տի մալվէ.
Le melon.	Սեխ.	Die Melone.
Լը մըլօն. [bergine.	Գավուն.	Տի մէլօնէ.
La mélongène, l'au-	Սմբուկ.	Der Tollapfel.
Լա մէլօնժէն. լ'օպէրժին.	Պատլինճան (փաթլիճան).	Տէր թօլլափֆէլ.
Le navet.	Շաղգամ.	Die Steckrübe.
Լը նավէ.	Շէլղամ (շալկամ).	Տի շթէքրիւպէ.
L'oignon.	Սոխ.	Der Zwiebel.
Լ'օ-անեօն.	Սօղան.	Տէր ցվիպէլ.
L'orge.	Գարի.	Die Gerste.
Լ'օրժ. [d'eau.	Արփա.	Տի կէրսթէ.
La pastèque, melon	Ձմերուկ.	Die Wassermelone.
Լա փասթէք, մըլօն տ'օ.	Գարփուզ	Տի վասսէրմէլօնէ.
Le persil.	Կարոսն.	Die Petersilie.
Լը փէրսիլ.	Մէյտանօզ (մաղադա-	Տի փէթէրզիլիէ.
Le poireau.	Պրաս. [նօս).	Der Lauch.
Լը փուարօ.	Փրասա.	Տէր լաուխ.
Le pois.	Ոլոռ, մաշ.	Die Erbse.
Լը փուա. [cicérole	Պէզէլյա.	Տի էրպսէ.
Le pois chiche, la.	Սիսեռ.	Die Kichererbse.
Լը փուա շիշ, լա սիսէրօլ.	Նօխուտ.	Տի քիխէրէրպսէ.
La pomme de terre.	Գետնախնձոր.	Die Kartoffel.
Լա փօմ տը թէր.	Եէր էլմասը.	Տի քարթօֆֆէլ.
La rave, le radis.	Բողկ.	Der Rettig.
Լա րավ, լը րատի.	Թուրփ.	Տէր րէթթիխ.
Le riz.	Բրինձ.	Der Reis.
Լը րի.	Փիրինճ.	Տէր րայս.
Le safran,	Քրքում.	Der Safran.
Լը սաֆրան.	Զաֆրան.	Տէր սաֆրան.
La salade.	Աղցան.	Der Salat.
Լա սալատ.	Սէլլաթա, սալաթա.	Տէր սալաթ.
Le sénevé.	Մանանեխ.	Der Senf.
Լը սէնըվէ.	Խարտալ ֆիտանը.	Տէր զէնֆ.
Le tabac.	Ծխախոտ, քթախոտ.	Der Tabak.
Լը թապա.	Թիւթիւն ֆիտանը.	Տէր թապաք.
Le trèfle.	Առուոյտ.	Der Klee.
Լը թրէֆլ.	Եօնճա.	Տէր քլէէ.

Un abricot.	Պառկուկ, Ծիրան.	Eine Aprikose.
Էօն ապրիքօ.	Զէրտալի, գայսը.	Այնէ ափրիքօզէ.
Une amande.	Նուշ.	Eine Mandel.
Իւն ամանտ.	Պատեմ.	Այնէ մանտէլ.
Du raisin.	Խաղող.	Weintraube.
Տիւ րէզէն. [sés.	Իւզիւմ.	Վայնթրաուպէ.
Des raisins secs, pas-	Չամիչ.	Rosinen.
Տէ րէզէն սէք, փասէ.	Գուրու իւզիւմ.	Րօզինէն.
Une cerise.	Կեռաս, Հալիք.	Eine Kirsche.
Իւն սըրիզ.	Քիրազ.	Այնէ քիրշէ.

Des cerises griottes.	Բալ.	Weichselkirschen.
Տէ սըրիզ կրիօթ.	Վիշնէ.	Վայհսէլքիրշէն.
Une châtaigne.	Շագանակ.	Eine Kastanie.
Իւն շաթէյն.	Քէսթանէ.	Այնէ գասթանիէ.
Un citron.	Կիտրոն, լիմոն.	Eine Citrone.
Էօն սիթրօն.	Լիմօն, աղաճ գաւու-	Այնէ ցիթրօնէ.
Un coing.	Սերկեւիլ. [նու.	Eine Quitte.
Էօն գուէն.	Այվա.	Այնէ գվիթթէ.
Une datte.	Արմաւ.	Eine Dattel.
Իւն տաթ.	Խուրմա.	Այնէ տաթթէլ.
Une figue.	Թուզ.	Eine Feige.
Իւն ֆիկ.	Ինճիր.	Այնէ ֆայկէ.
Une fraise.	Ելակ.	Eine Erdbeere.
Իւն ֆրէզ.	Չիլէկ.	Այնէ էրտպէէրէ.
Une framboise.	Ազնիւ մոր. [լէն.	Eine Himbeere.
Իւն ֆրանպուազ.	Սուլթանէ տէօյէ-ըրթ-	Այնէ հիմպէէրէ.
Une grenade.	Նուռ.	Eine Granate.
Իւն կրընատ.	Նար.	Այնէ կրանաթէ.
Une groseille.	Հաղարջ.	Eine Johannisbeere.
Իւն կրօզէյլ.	Ֆիրէնկ էօզիւմիւ.	Այնէ եօհաննիսպէէրէ.
Une mûre.	Թութ.	Eine Maulbeere.
Իւն միւր.	Թութ.	Այնէ մաուլպէէրէ.
Une noisette.	Կաղին.	Eine Haselnuß.
Իւն նուազէթ.	Ֆընտըգ.	Այնէ հազէլնուս.
Une noix.	Ընկոյզ.	Eine Wallnuß.
Իւն նուա.	Ճէվիզ.	Այնէ վալնուս.
Une olive.	Ձիթապտուղ.	Eine Olive.
Իւն օլիվ.	Զէյթին.	Այնէ օլիվէ.
Une orange.	Նարինջ, թուրինջ,	Eine Pomeranze.
Իւն օրանժ.	Փօրթուգալ, թուրունճ.	Այնէ փօմէրանցէ.
Une pêche.	Դեղձ.	Eine Pfirsich.
Իւն փէշ.	Շէֆթալի.	Այնէ ֆիրզիհ.
Une poire.	Տանձ.	Eine Birne.
Իւն փուար.	Արմուտ.	Այնէ պիրնէ.
Une pomme.	Խնձոր.	Ein Apfel.
Իւն փօմ.	Էլմա.	Այն ափֆէլ.
Une prune.	Սալոր.	Eine Pflaume.
Իւն փրիւն.	Էրիկ	Այնէ ֆլաումէ.

Thé.	Թէյ.	Thee.
Թէ.	Չայ.	Թէէ.
Un cyprès.	Նոճի.	Eine Cypresse.
Էօն սիփրէ.	Սէրվ (սէլվի).	Այնէ ցիփրէսսէ.
Un laurier.	Դափնի.	Ein Lorbeerbaum.
Էօն լօրիէ.	Տէֆնէ.	Այն լօրպէէրպաում.
Un lierre.	Բաղեղ.	Ein Epheu.
Էօն լիէր.	Սարմաշըգ.	Այն էֆայ.
Un lilas.	Սրինգ.	Ein spanischer Flieder.
Էօն լիլա.	Լէյլագ.	Այն շփանիշէր ֆլիտէր.
Un pin.	Շոճ.	Eine Fichte.
Էօն փէն.	Չամ.	Այնէ ֆիհթէ.
Un platane.	Սօսի.	Eine Platane.
Էօն փլաթան.	Չընար.	Այնէ փլաթանէ.

Un roseau.	Եղէգ.	Ein Rohr, ein Schilf.
Էօն րօզօ.	Գամըշ.	Այն րօր, այն շիլֆ.
Un rosier.	Վարդենի.	Ein Rosenstock.
Էօն րօզիէ.	Կիւլ ֆիտանը.	Այն րօզէնշթօք.
Un sapin.	Եղեւին.	Eine Tanne.
Էօն սափէն.	Սանըճղեր.	Այնէ թաննէ.
Un saule.	Ուռի.	Eine Weide.
Էօն սօլ.	Սէօյիւտ.	Այնէ վայտէ.

Le camphre.	Քափուր.	Der Kampfer.
Լը գանֆր.	Քեաֆիւր.	Տէր գամֆֆէր.
La cire.	Մոմ, մեղրամոմ.	Das Wachs.
Լա սիր.	Պալ մումու.	Տաս վախս.
L'encens.	Խունկ.	Der Weihrauch.
L'անսան.	Քիւնլիւք.	Տէր վայրաուխ.
Des épices.	Համեմ.	Das Gewürz.
Տէզ էփիս.	Պեհար.	Տաս կէվիւրց.
Une gomme.	Խէժ.	Ein Gummi.
Իւն կօմ.	Սամղ (զամգ).	Այն կումմի.
La gomme ammonia-	Ուշակ. [շագ.	Ammoniakgummi.
Լա կօմ ամօնիագ. [que.	Չաքըր աշաղը, ճէ-	Ամմօնիագգումմի.
La gomme arabique.	Կռէզ.	Arabisches Gummi.
Լա կօմ արապիք.	Սամղը արապի.	Արապիշէս կումմի.
La gomme élastique.	Ձգական խէժ.	Gummi elasticum.
Լա կօմ էլասթիք.	Գօմէլասթիք.	Կումմի էլասթիգում.
L'indigo.	Լեղակ.	Der Indigo.
L'էնտիկօ.	Չիվիտ.	Տէր ինտիկօ.
Le mastic.	Մաստաքէ.	Der Mastix.
Լը մասթիգ.	Սագըզ.	Տէր մասթիքս.
Le miel.	Մեղր.	Der Honig.
Լը միէլ.	Պալ.	Տէր հօնիկ.
L'opium, le laudanum.	Ափիոն.	Der Mohnsaft.
L'օփիօմ, լը լօտանօմ.	Աֆիյօն.	Տէր մօնզաֆթ.
La poix.	Ձիւթ.	Das Pech.
Լա փուա.	Զիֆթ.	Տաս փէխ.
La résine.	Ռետին.	Das Harz.
Լա րէզին.	Չամ սաքըզը, րաթինէճ.	Տաս հարց.
La térébenthine.	Բեւեկնի եղ.	Der Terpentin.
Լա թէրէպանթին.	Թէրէմէնթին.	Տէր թէրփէնթին.

Animaux.	Կենդանիք.	**Thiere.**
Un œuf.	Հաւկիթ.	Ein Ei.
Էօն էօֆ.	Եումուրթա.	Այն այ.
L'écaille.	Հաւկըթի պատեան.	Die Schale.
L'էգայլ.	Եումուրթա գապուղու.	Տի շալէ.
Piquer.	Խայթել.	Stechen.
Բիքէ.	Սօքմագ.	Շթէխէն.
Une aile.	Թեւ.	Ein Flügel, eine Schwin- [ge.
Իւն էլ.	Գանատ.	Այն ֆլիւկէլ, այնէ շվին- [կէ.
Une arête de poisson.	Ձկան փուշ.	Eine Fischgräte.
Իւն արէթ տը փուասօն.	Տիքէն, գըլչըգ.	Այնէ ֆիշկրէթէ.

Le bec d'un oiseau.	Կտուց.	Der Schnabel eines Vo-
		gels. [կէլս.
Լը պէք տ'էօն ուազօ.	Գագա.	Տէր շնապէլ այնէս ֆօ-
Le cuir.	Մորթ, կաշի.	Das Leder.
Լը գիւիր.	Տէրի.	Տաս լէտէր.
L'ivoire.	Փղոսկր.	Das Elfenbein.
Լ'իվուար. [poisson.	Փիլ տիշի.	Տաս էլֆէնպայն. [sches.
Les écailles d'un	Ձկան թեփ.	Die Schuppen eines Fi-
Լէզ էգայլ տ'էօն փուա-	Պալըգ փուլու.	Տի շուփփէն այնէս ֆի-
Une griffe. [սօն.	Ճանկ.	Eine Klaue. [շէս.
Իւն կրիֆ.	Փէնչէ.	Այնէ գլաուէ.
La laine. Tondre.	Բուրդ. Խուզել.	Die Wolle. Scheeren.
Լա լէն. Թօնտրը.	Եիւն. Գըրքմագ.	Տի վօլլէ. Շէէրէն.
Une morsure. Mordre.	Խածուածք. Խածնել.	Ein Biß. Beißen.
Իւն մօրսիւր. Մօրտրը.	Ըսըրմա. Ըսըրմագ.	Այն պիս. Պայսէն.
La nacre de perle.	Գաղտակուր.	Die Perlmutter.
Լա նագրը տը փէրլ.	Սէտէֆ.	Տի փէրլմուդդէր.
Une perle.	Մարգարիտ.	Eine Perle.
Իւն փէրլ.	Ինճի.	Այնէ փէրլէ.
Une patte, les pattes.	Թաթ.	Eine Tatze, die Tatzen.
Իւն փաթ. լէ փաթ.	Եասսը այագ.	Այնէ թացէ, տի թացէն.
La pâture.	Արօտ.	Die Weide.
Լա փաթիւր.	Օթլագ.	Տի վայտէ.
Paître.	Արածել.	Weiden.
Փէթրը.	Կիւտմէք, օթլամագ.	Վայտէն.
Ronger.	Կրծել.	Nagen.
Րօնժէ.	Կէմիրմէք.	Նակէն.
Une plume.	Փետուր.	Eine Feder.
Իւն փլիւմ.	Թիւյ.	Այնէ ֆէտէր.
La queue.	Պոչ.	Der Schwanz, Schweif.
Լա քէօ.	Գույրուգ.	Տէր շվանց, շվայֆ.
Le suif.	Ճարպ, ճրագու.	Der Talg.
Լը սիւիֆ.	Իչ եաղը.	Տէր թալք.
Une toile d'araignée.	Սարդի ոստայն.	Eine Spinnenwebe.
Իւն թուալ տ'արէնիէ.	Էօրիւմճէք.	Այնէ շփիննէնվէպէ.
Une toison.	Ասր, գեղմ.	Ein Vließ.
Իւն թուազօն.	Եափաղը.	Այն ֆլիս.
Le venin.	Թոյն.	Das Gift.
Լը վընէն.	Ձէհէր.	Տաս կիֆթ.
Le musc.	Մուշկ.	Der Moschus.
Լը միւսգ.	Միսք.	Տէր մօշուս.
Voler, voltiger.	Թռչիլ. Թռչռտիլ.	Fliegen.
Վօլէ, վօլթիժէ.	Ուչմագ, ուչուշմագ.	Ֆլիկէն.

Un mâle.	Արու.	Ein Männchen.
Էօն մալ.	Էրքէք.	Այն մէննխէն.
Une femelle.	Էգ.	Ein Weibchen.
Իւն ֆըմէլ.	Տիշի.	Այն վայպխէն.
Un petit.	Ձագ.	Ein Junges.
Էօն փըթի.	Եավրու.	Այն յունկէս.
Un agneau.	Գառնուկ.	Ein Lamm.
Էօն անիօ.	Գուզու.	Այն լամ.

Un âne. Braire.	Էշ. Զռալ.	Ein Esel. Yanen.
Էօն ան. Պրէր.	Էշէք. Անըրմագ.	Այն էզէլ. Եաննէն.
Un ânon.	Քուռակ, յաւանակ.	Ein junger Esel.
Էօն անօն.	Սըփա.	Այն եունկէր էզէլ.
Un bélier.	Խոյ.	Ein Widder.
Էօն պէլիէ.	Գօչ.	Այն վիտտէր.
Un bœuf. Mugir.	Եզ. Բառաչել.	Ein Ochs. Brüllen.
Էօն պէօֆ. Միւժիր.	Էօքիւզ. Պէօյիւրմէք.	Այն օքս. Պրիւլլէն.
Un bouc.	Նոխազ.	Ein Bock.
Էօն պուգ.	Էրքէք քէչի, էրքէճ.	Այն պօք.
Une brebis. Bêler.	Ոչխար. Մայել. [լէմէք.	Ein Schaf. Blöcken.
Իւն պրըպի. Պէլէ.	Մարիա, գօյուն. Մէ-	Այն շաֆ. Պլէօքէն.
Un buffle.	Գոմէշ.	Ein Büffel.
Էօն պիւֆլ.	Մանդա, սու սըղըրը.	Այն պիւֆֆէլ.
Un cerf.	Եղջերու, եղնիկ.	Ein Hirsch.
Էօն սէրֆ.	Կէյիք.	Այն հիրշ.
Un chameau.	Ուղտ.	Ein Kameel
Էօն շամօ.	Տէվէ.	Այն գամէլ.
Un chat. Miauler.	Կատու. Նուալ.	Ein Kater. Miauen.
Էօն շա. Միօլէ.	Քէտի. Միավլամագ.	Այն գաթէր. Միաուէն.
Chauve-souris.	Չղջիկ.	Eine Fledermaus.
Շօվ-սուրի.	Եարասա.	Այնէ ֆլէտէրմաուս.
Cheval. Hennir.	Ձի. Խրխնջել.	Ein Pferd. Wiehern.
Շըվալ. Հաննիր.	Աթ. Քիշնէմէք.	Այն ֆէրտ. Վիհէրն.
Une chèvre.	Այծ.	Eine Ziege.
Իւն շէվր.	Քէչի.	Այնէ ցիգէ.
Un chevreuil.	Խարբուզ.	Ein Rehbock.
Էօն շըվրէօյլ.	Գարաճա.	Այն րէպօք.
Un chien. Aboyer.	Շուն. Հաջել.	Ein Hund. Bellen.
Էօն շիէն. Ապուայէ.	Քէօփէք. Հավլամագ.	Այն հունտ. Պէլլէն.
Une chienne.	Քած.	Eine Hündin.
Իւն շիէն. [per.	Գանճըգ.	Այնէ հիւնտին.
Un petit chien. Jap-	Լակոտ. Կաղկանձել.	Ein Hündchen. Kläffen.
Էօն փըթի շիէն. Ժափէ.	Քէօփէք եավրըսը. Ինիլէ-	Այն հիւնտխէն. Գլէֆֆէն.
Un cochon, un porc.	Խոզ. Խանչել. [մէք.	Ein Schwein. Grunzen.
Grogner. [նիէ.	Տօնուզ. Սօմուրտան-	
Էօն գօշօն, էօն փօր. Կրօ-	մագ.	
Un dogue, un mâtin.	Գամփռ.	Այն շվայն, կրունցէն.
Էօն տօկ, էօն մաթէն.	Սամսոն, չօպան քէօ-	Eine Dogge.
Un éléphant.	Փիղ.	Այնէ տօկկէ.
Էօն էլէֆան.	Ֆիլ. [փէյի.	Ein Elephant.
Un lapin.	Ճագար.	Այն էլէֆանթ.
Էօն լափէն.	Ադա թավշանը.	Ein Kaninchen.
Un léopard.	Ինձ.	Այն գանինխէն.
Էօն լէօփար.	Գափլան.	Ein Leopard.
Un lièvre.	Նապաստակ.	Այն լէօփարտ.
Էօն լիէվր.	Թավշան.	Ein Hase.
Un lion. Rugir.	Առիւծ. Մռնչել.	Այն հազէ.
Էօն լիօն. Րիւժիր.	Արսլան. Պէօյիւրմէք.	Ein Löwe. Brüllen.
Un loup. Hurler,	Գայլ. Ոռնալ.	Այն լէօվէ. Պրիւլլէն.
Էօն լու. Իւրլէ.	Գուրթ. Ուլումագ.	Ein Wolf. Heulen.
Un mouton.	Մալեալ խոյ.	Այն վօլֆ. Հօյլէն.
Էօն մութօն.	Գըյըրմըշ գօյուն.	Ein Hammel.
		Այն համմէլ.

Un mulet.	Ջորի.	Ein Maulesel.
Էօն միւլէ.	Գաթըր.	Այն մաուլէզէլ.
Un ours.	Արջ.	Ein Bär.
Էօն ուրս.	Այը.	Այն պէր.
Une panthère.	Յովազ.	Ein Panther.
Իւն փանթէր.	Եօազ, փարս.	Այն փանթէր.
Un rat.	(Մեծ) մուկ.	Eine Ratze.
Էօն րա.	Ճարթըլ սըչան.	Այնէ րացէ.
Un renard. Glapir.	Աղուէս. Ոռնալ.	Ein Fuchs. Belfern.
Էօն րընար. Կլափիր.	Թիլքի. Ուլումաք.	Այն ֆուքս. Պէլֆէրն.
Un singe,	Կապիկ.	Ein Affe.
Էօն սէնժ.	Մայմուն.	Այն աֆֆէ.
Une souris.	Մուկ.	Eine Maus.
Իւն սուրի.	Սըչան, ֆարէ.	Այնէ մաուս.
Une taupe.	Խլուրդ. [չանը.	Ein Maulwurf.
Իւն թօփ.	Քէօսթէպէք, եէր սը-	Այն մաուլվուրֆ.
Un taureau.	Ցուլ.	Ein Stier.
Էօն թօրօ.	Պուղա.	Այն շթիր.
Un tigre.	Վագր.	Ein Tiger.
Էօն թիկր.	Փէլէնկ.	Այն թիկէր.
Une tortue.	Կրիայ.	Eine Schildkröte.
Իւն թօրթիւ.	Թօսպաղա.	Այնէ շիլտքրէօթէ.
Une vache..	Կով.	Eine Kuh.
Իւն վաշ.	Ինէկ.	Այնէ քու.
Un veau.	Հորթ.	Ein Kalb.
Էօն վօ.	Տանա.	Այն քալպ.

Un aigle.	Արծիւ.	Ein Adler.
Էօն էկլ.	Գարթալ.	Այն ատլէր.
Une alouette.	Արտոյտ.	Eine Lerche.
Իւն ալուէթ.	Չայըր գուշու.	Այնէ լէրհէ.
Une caille.	Լոր.	Eine Wachtel.
Իւն գայլ.	Պըլտըրճըն.	Այնէ վահթէլ.
Un canard.	Բադ.	Ein Enterich.
Էօն գանար.	Եօրտէք.	Այն էնթէրիհ.
Un chapon.	Որձատ.	Ein Kapaun.
Էօն շափօն.	Ըդիշ.	Այն գափաուն.
Une colombe.	(Էգ) աղաւնի.	Eine Taube.
Իւն գօլօմպ.	(Տիշի) կէօկէրճին.	Այնէ թաուպէ.
Un coq. Chanter.	Աքաղաղ. Խօսիլ.	Ein Hahn. Krähen.
Էօն գօք. Շանթէ.	Խօրօզ. Էօթմէք.	Այն հան. Գրէհէն.
Un coq d'Inde.	Հնդկահաւ.	Ein welscher Hahn.
Էօն գօ տ'էնտ. [ser.	Հինտ թավուղու.	Այն վէլշէր հան.
Un corbeau. Croas-	Ագռաւ. Կռչել.	Ein Rabe. Krächzen.
Էօն գօրպօ. Գրօասէ.	Գարղա. Գըրգաղ օթմէք.	Այն րապէ. Գրէհցէն.
Un cigne.	Կարապ.	Ein Schwan.
Էօն սինե.	Գուղու գուշու.	Այն շվան.
Un dindon.	Հնդկահաւ.	Ein Truthahn.
Էօն տէնտօն.	Հինտ թավուղու.	Այն թրութհան.
Un faisan,	Փասիան.	Ein Fasan.
Էօն ֆէզան.	Սիւլիւն.	Այն ֆազան.
Un hibou·	Բու.	Eine Eule.
Էօն հիպու.	Պայղուշ.	Այնէ այլէ.

Une hirondelle.	Ծիծառ.	Eine Schwalbe.
Իւն իրօնտէլ.	Գըրլանղըճ.	Այնէ շվալպէ.
Un moineau, un passerau. [ուըրօ.	Ճնճղուկ.	Ein Sperling. Spatz.
Էօն մուանօ, էօն բասը-	Սերչէ.	Այն շբէրլինկ, շբաց.
Une oie. Caqueter.	Սագ. կարկաչել.	Eine Gans. Schnattern.
Իւն ուա. Գագըթէ.	Գազ. Գագըլտամագ.	Այնէ կանս. Շնաթթէրն.
Un paon.	Սիրամարգ.	Ein Pfau.
Էօն բան.	Թավուս գուշու.	Այն ֆաու.
Un perdrix.	Կաքաւ.	Ein Rebhuhn.
Էօն բէրտրի.	Քէքլիք.	Այն րէպհուն.
Un perroquet.	Պապկայ.	Ein Papagei.
Էօն բէրօքէ.	Փափաղան. [աղաւնի.	Այն բաբակայ.
Un pigeon.	Վարուժան, (արու)	Ein Tauberich.
Էօն բիժօն.	Կէօվէրճին.	Այն թաուպէրիհ.
Une poule. Glousser.	Հաւ, մարի. կարկաչել.	Eine Henne. Schnattern.
Իւն բուլ. Կլուսէ.	Թավուգ. Գըթգըթամագ.	Այնէ հէննէ. Շնաթ-
Un poulet.	Վառեակ.	Ein Huhn. [թէրն.
Էօն բուլէ. [ter.	Փիլիճ.	Այն հուն. [gen.
Un rossignol. Chan-	Սոխակ. Երգել.	Eine Nachtigall. Schla-
Էօն րօսինեօլ. Շանթէ.	Պիւլպիւլ. Էօթմէք.	Այնէնախթիկալ.Շլակէն.
Un serin.	Դեղձանիկ.	Ein Kanarienvogel.
Էօն սըրէն.	Գանարեա.	Այն կանարիէնֆօկէլ.
Une tourterelle.	Տատրակ.	Eine Turteltaube.
Իւն թուրթըրէլ.	Գումրու.	Այնէ թուրթէլթաուպէ.

Poisson de mer.	Ծովային ձուկ.	Seefisch.
Փուասօն տը մէր.	Տէնիզ պալըղը.	Զէէֆիշ.
Poisson d'eau douce.	Գետի ձուկ.	Ein Flußfisch.
Փուասօն տ'օ տուս.	Թաթլը սու պալըղը.	Այն ֆլուսֆիշ.
Une anguille.	Օձաձուկ.	Ein Aal.
Իւն անկիյլ.	Եըլան պալըղը.	Այն աալ.
Un dauphin.	Դելփին.	Ein Delphin.
Էօն տօֆէն.	Եունուզ պալըղը.	Այն տէլֆին.
Le fretin.	Ձկնիկ.	Die Brut.
Լը ֆրըթէն.	Ուֆագ պալըգ.	Տի պրութ.
Une huître.	Ոստրէ.	Eine Auster.
Իւն ուիթր.	Իսթիրիտիա.	Այնէ աուսթէր.

Une abeille. Bourdonner.	Մեղու. Բզզալ.	Eine Biene. Summen.
Իւն աբէյլ. Պուրտօնէ.	Արը. Տըզըլտամագ.	Այնէ պինէ. Զումմէն.
